

Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ



ԿՈՎԿԱՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1948









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСТОРИИ

№

МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВЕ-  
ЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

3

С. ТОВМАСЯН

НА БОЕВЫХ ПОЗИЦИЯХ  
ЗАЩИТЫ КАВКАЗА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1948

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ

№	ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	3
---	------------------------------------------------	---

9(47)27

թ

Արայ.

9(47.9)

Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

A  $\frac{II}{22865}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948

Պատասխանատու խմբագիր՝  
Ա.Ր. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Ծանր օրեր էր ապրում մեր Հայրենիքը: Գերմանական արյունարբու Ֆաշիզմը, կանգ չառնելով հսկայական կորուստների առջև, 1942 թ. ամառը Հարավային ռազմաճակատ էր նետել թաղմաքանակ զորքեր և հազեցնելով նրանց տանկային ու օդային ուժերով, նպատակ էր դրել կտրել Միության հարավը:

Թշնամին գրավել էր Ռոստովը, Հյուսիսային Կովկասի մի մասը, մոտեցել էր Ստալինգրադին: Ծաշխատական արյունարբու ոհմակները հարավային խմբավորման իրենց աջ թևով աշնան սկզբին կատաղի կերպով անընդհատ գրոհում էին մեր պաշտպանության դժերը Տուլայսի ուղղությամբ, ձգտում էին անջատել մեր ծովափնյա զորամասերը Նովորոսիյսկի շրջանում, տիրանալ Սևծովյան արևելյան ափերին: Գերմանացիները գրավել էին Նովորոսիյսկը, մոտեցել Տուլայսին, Մոզդոկին և Օրջոնիկիձև քաղաքին: Ծաշխատական հորդաները առաջ էին շարժվում դեպի Կովկասյան լեռնաշղթայի գագաթները:

Գերմանա-ֆաշիստական զավթիչներն սպառնում էին Անդրկովկասին:

Հիտլերյան Գերմանիան՝ ձգտում էր հարություն տալ Անդրկովկասի ժողովուրդների դարավոր ճնշմանը, Կովկասի ժողովուրդների միջև առաջ բերել պառակտում, խեղդել նրանց ստեղծագործական ուժերը: Անդրկովկասի ժողովուրդները տեսնում էին, որ սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին, ուսու մեծ ժողովրդի օգնությամբ Լենինի-Ստալինի փառապանծ պարտիայի ղեկավարությամբ ձեռք բերված ազատությունը, ժողովուրդների երջանիկ կյանքը և բարեկամությունը ենթարկված են անմիջական վտանգի: Նրանք գիտեին, որ հիտլերյան հորդաները քերում են Անդրկովկասին քայքայում, ավերածություն, կոտորած և անարգանք: 1942 թ. օգոստոսի 23-ին Թբիլիսիում տեղի

ունեցած Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական մի-  
տինգը, որ ժողովուրդների ստալինյան անխախտելի միասնու-  
թյան մի հզոր դեմոնստրացիա էր, պատրաստակամություն  
հայտնեց արյան գնով պաշտպանել հարազատ հողը ֆաշիստական  
ներխուժումից: Անդրկովկասի ժողովուրդները երգվեցին ընկեր  
Ստալինին.

«Կայունությամբ և արիությամբ, ուսև մեծ ժողովրդի,  
մեր ավագ եղբոր հետ միասին, մեր Հայրենիքի բոլոր ժո-  
ղովուրդների հետ միասին կկռվենք գերմանա-ֆաշիստական  
ավագանիների դեմ, մինչև որ լիովին ճզմենք ու ոչնչացը-  
նենք ֆաշիստական ճիվաղներին»:

(Միտինգի՝ ընկեր Ստալինին ուղղած նամակից)

Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական միությունը էլ  
ավելի ամրապնդվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին  
ֆաշիստական ներխուժման վտանգին դեմ-հանդիման: Նրանց  
անսահման սերը դեպի սովետական կարգը և մեծ Ստալինը  
իր արտահայտությունը գտավ Հայրենիքի համար անձնա-  
դոհության, չտեսնված սխրագործությունների և հերոսական  
ստեղծագործական աշխատանքի մեջ:

Որքան մեծանում էր ֆաշիստական ներխուժման վտանգը,  
այնքան ամրակուռ էր դառնում ժողովուրդների միասնու-  
թյունը և մեծանում թշնամուն վերջնականապես ջախջախելու  
հույսը: Նրանք գիտեին, որ ՍՍՌԾ ժողովուրդների փրկարար  
դինաված ուժերի գերազույն գլխավոր հրամանատար մեծ Ստալինը  
հրամայել էր բանակին՝

Վերջ դնել նահանջին, համառորեն, մինչև արյան վերջին  
կաթիլը պաշտպանել յուրաքանչյուր դիրք, սովետական տերիտո-  
րիայի ամեն մի մետր, կառչել սովետական հողի յուրաքան-  
չյուր կտորին և պաշտպանել այն մինչև վերջին հնարավորու-  
թյունը:

Ընկեր Ստալինը խնդիր էր դրել՝

մենք պետք է կանգնեցնենք, իսկ այնուհետև ետ շարը-  
տենք ու ջախջախենք թշնամուն, ինչ էլ որ այդ արժենա մեզ  
համար:

Առաջնորդի հրամանը հաղթանակի մեծագույն ծրագիր  
էր: Ս.յդ իմաստուն ծրագիրը ամենախորը կերպով թափան-

ցել էր Սովետական բանակի ռազմիկների գիտակցութեան մեջ: Նրանց սրտերը բարախում էին բարձր պատասխանատվութեան դրացումից՝ հայրենապաշտպան սուրբ հրամանի ուղուն համապատասխան: Ամենքն էլ պարզ գիտակցում էին, որ Հայրենիքի ու ժողովրդի բախտը մեծ վտանգի մեջ է և իրենք կոչված են փրկել երկիրը այդ մահացու վտանգից: Յուրաքանչյուր մարտիկ, հրամանատար և քաղաքական աշխատող համոզված էր, որ թեև երկիրը մեծ է, լայնածավալ, լի պաշտպանութեան բնական ու արհեստական բազմաթիվ հնարավորութեաններով, այնուամենայնիվ նահանջի տեղ չկա այլևս:

Այդ օրերին Անդրկովկասյան ռազմաճակատ էր ժամանել Պաշտպանութեան Պետական կոմիտեի անդամ ընկեր Լ. Պ. Բերիան, որ ծանոթանալով ռազմաճակատի իրադրութեան հետ, մեկնել էր զորամասերի մարտակարգերի շրջանը:

Այն զորամասը, որի ղինվորական կոմիսարն էի ես, ռազմաճակատի խորհրդի հրամանով 1942 թ. օգոստոսի վերջերին Հայաստանից մեկնելով կենտրոնացել էր Արևմտյան Վրաստանում և մարտական խնդիր ստանալուն էր սպասում: Օգոստոսի 27-ի երեկոյան զորամասի հրամանատար ընկեր Կուզնեցովին և ինձ հայտնեցին, որ ներկայանանք ռազմաճակատի հրամանատարին: Ժամը 24-ին մեզ ներս հրավիրեցին լեռնալանջին գտնվող կանաչադարձ գեղեցիկ տունը:

Այստեղ էր ընկեր Բերիան ռազմաճակատի հրամանատար Տյուլինևի և մի քանի այլ ընկերների հետ միասին: Մենք գեղեցեցինք ընկեր Բերիային մեր զորամասի կազմի, ղինվածութեան, ապահովվածութեան և մարտունակութեան մասին: Մեզ լսելուց հետո ընկեր Բերիան բացատրեց իրադրութեանը և խնդիրներ դրեց զորամասերի առաջ:

Մենք տեղագծական քարտեզի վրա (топографическая карта) նշումներ էինք կատարում մարտական առաջադրանքին համապատասխան:

Մեզ ոչ միայն հիացրեց ընկեր Բերիայի հմտութեանը մարտական խնդիրը թելադրելու մեջ, այլև այն, թե ինչպես նա, առանց քարտեզին նայելու, մանրակրկիտ կերպով նշում էր նշանակված ղիրքերի շրջանում բնական և արհեստական կարևոր

պարագաները, որ նշանակութուն ունենին պաշտպանության կազմակերպման համար:

Մարտական խնդիրն այնքան պարզ էր, որ այլևս կարիք չդգացվեց որևէ բան հարցնելու: Մեր զորամասը պետք է փակեր թշնամու հնարավոր ելքերը լեռնաշղթայի կողմից (հյուսիսից), ինչպես նաև պաշտպաններ ծովափը դեսանտ իջեցնելու հնարավոր փորձերից:

Կողմնակի կարգով կնկատեմ, թե ինչպես ընկեր Բերիան խիստ հանդիմանեց զորամասերից մեկի հրամանատարությանը հետախուզության մեջ կոնսերվատիզմ ցուցաբերելու համար: Ի պատասխան ընկ. Բերիայի հարցին, որ վերաբերում էր զորամասի մարտակարգերի դիմաց գտնվող թշնամու ուժերի շարքում տանկային բրիգադայի առկայությունն ստուգելուն, շտաբի պետը թերացավ որոշակի պատասխան տալ, փորձելով արդարանալ նրանով, թե կանոնադրությամբ սահմանվածից դուրս է այդ մասշտաբի հետախուզությունը զորամասի համար, և որ դա պետք է կատարվի ավելի բարձր հրամանատարության կողմից: Այդ բարկացրեց ընկեր Բերիային: Պարզ զգացվում էր, որ նա հետամնացութուն է համարում անհրաժեշտությունը կանոնադրության նորմավորված պարագրաֆի տակ առնելը և ուղղակի հանդիմանեց, ցույց տալով նրա անհամատեղելիությունը մեր բանակի ոգու հետ:

Իսկ մեծ դաս էր ոչ միայն նրանց, այլև մեզ համար: Մենք դուրս եկանք մեծ բավականությամբ. հրճվանքի պատճառը միայն այն չէր, որ մեր ղեկավարության ներքո գտնվող զորամասն արժանացել էր ընկեր Բերիայի ուշադրությանը, այլև այն, որ ակնառու միջոցներ էին մշակվում կովկասի դռները ֆաշիստական զորքերի առջև փակելու և նրանց ջախջախելու համար:

Վաղ առավոտյան մեր զորամասերը շարժվեցին որոշված ուղղությամբ: Գնդապետ Կուզնեցովը մի խումբ սպաներով մեկնեց հրամանատարական հետախուզության, իսկ ես մնացի զորամասերի շարժումը ղեկավարելու: Օգոստոսի 29-ի առավոտյան, երբ ես նախապատրաստվում էի ուղարկել նախավերջին էշիկոնը բեռնատար ավտոմեքենաներով, մտեցավ մի լեյտենանտ և հանձնեց խիստ զաղտնի ծրար: Իսկ մարտական հրաման էր

Քերիայի և Տյուլինեի ստորագրութեամբ: Հրամանը բացառիկ էր, տարբերվող մյուս հրամաններից: Նրա մեջ նշված էին մի շարք կազմակերպական միջոցառումներ, այդ թվում նաև Մերգիցկովի զորամասին վերաբերող: Մեր զորամասը այդ օրվանից գտնվում էր այն զորամասերի թվում, որոնց հրամանատար էր նշանակվել գեներալ-մայոր Լեսելիձեն:

Ռազմաճակատում դրությունը դեռ մխիթարական չէր: Նենգ թշնամին նոր դավեր էր սարքում: Մինչդեռ մենք շարժվում էինք դեպի նշանակված դիրքերը, գերմանական մի դիվիզիա հետապնդելով մեր նահանջող սահմանապահ գնդին, որ երկար մարտերից հետո մնացել էր առանց ռազմավթերքի, սեղմվել լեռնաշղթայի հյուսիսային լանջերին ու նահանջում էր Սանչարոյի վրայով, գրավել էր Աջապը, Սանչարո, Ալաշարախու և Չամաշխա լեռնանցքները: Գերմանական այդ դիվիզիայի զորամասերը խնդիր ունեին դուրս գալ ծովափ Սուխումիի և Գուդաուտիի շրջանում:

Դեպքն անակնկալ էր, վտանգը մեծ:

Ուշ երեկո էր: Նոր միայն հավաքվել էինք հրամանատարական կետում (КП), քննութեան էինք առնում մարտական խնդրի կազմակերպման հարցերը: Ներս է մտնում շտաբի պետ փոխգնդապետ Գրիգորևսկին՝ հայտնելով, որ մեզ, ընկեր կուզնեցովին և ինձ, հրամայված է ներկայանալ հրամանատարութեանը մայր Ծակովենկոյի գնդի համար մարտական նոր խնդիր ստանալու: Պարզվեց, որ ընկ. Լեսելիձեի հրամանով դադարեցվել է մեր զորամասի մարշը՝ մարտական գործողութեան նոր խնդիր տալու համար:

Մենք արդեն Գուդաուտիումն էինք: Ծովափնյա փոքրիկ ըստ ամենայնի գեղեցիկ քաղաքում, կանաչապատ երկհարկանի շենքում հավաքվել էին գնդապետ Միքելաձեն, Գուդաուտիի պարտըջկոմի քարտուղարը, շրջավանդի գործադիր կոմիտեի նախագահը, ՆԳԿ-ի շրջրաժամուռների պետը և մի քանի այլ աշխատողներ:

Մեր ներս մտնելու մոմենտին գնդապետ Միքելաձեն թրվարկում էր, թե ինչով պետք է օգնեն գուդաուտցիները ռազմական գործողութեան սկսող մեր զորամասին: Նա առանձնապես պահանջում էր մորիլացիներ բեռնատար գրաստներ (գլխավորա-

պես էշեր) ազգամիջերք ու պարենն փոխադրելու համար, քանի որ ճանապարհների բացակայութեամբ լեռներում բացառում էր արանսպորտի այլ միջոցների օգտագործումը:

Միջելաձեն շտաբի պետն էր: Գեներալ Լեսելիձեի հանձնարարութեամբ նա ծանոթացրեց մեզ օպերատիվ իրադրութեան (оперативная обстановка) հետ, հայտնեց հրամանատարութեան որոշումը մեր առաջիկա գործողութեաննների մասին: Լեսելիձեի հրամանի համաձայն գործառնք պետք է լեռնային դժվար մարշ կատարեր, ջախջախեր թշնամու խմբավորումը լեռներում և այնուհետև հետապնդեր նրան ու տիրանար Սանչարո լեռնանցքին, ազատագրեր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի այդ հատվածը:

Մեզնից արևելք գործում էր գնդապետ Պիյաշևի գործառնք, որ նույնպիսի խնդիր ուներ: Մեզ հարկավոր էր գուզակցել գործողութեաննները Պիյաշևի հետ:

Խնդիրը կարճ էր, հասկանալի, սակայն առավել դժվար, քան կարելի էր պատկերել անտեղյակ լինելով Կովկասյան լեռների:

#### ԴԵՊՈ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ԲԱՐՁՈՒՆԻՆԵՐԸ

Ժամը 5-ն էր (30 օգոստոսի 1942 թ.): Մենք քայլում էինք ծառերի ու թփերի արանքով:—«Կանգ առ, մի է գալիս», ժամապահի շեշտակի կանչը սթափեցրեց մեզ, և մենք ուղևորվեցինք դեպի գործառնքի հրամանատարական վրանը, որ հազիվ էր նշմարվում լիառատ թփերի արանքում:

Ընկեր Կուզնեցովը վերադաս հրամանատարութեան հրամանին համապատասխան շարադրեց մարտական խնդիրը հրամանատար մայոր Յակովենկոյին և ղինվորական կոմիսար Իվանովին:

Սպասվում էր մի դժվարին ուղի մեզ համար: Եթե նախօրոք գործնական միջոցներ չձեռնարկեինք երթը կազմակերպած անցկացնելու համար, ապա գործառնք կարող էր դգալի շափով կորցնել իր մարտունակութեամբ մինչև թշնամու ուժերի հետ բախվելը: Կովկասյան գլխավոր լեռնաշղթայում գործառնք շարժելը առավել դժվար է ուզածը ճակատամարտի կազմակերպումից: Այստեղ բնական արգելքները՝ ճանապարհների բացառ-

կայությունը, լեռների խիստ թեքությունը, անբարենպաստ եղա-  
նակը և այլն գերադանցում են պատերազմական դժվարություն-  
ներին: Ռազմական արդի տեխնիկայի, զինվածության ոչ շատ  
ծանր տեսակների փոխադրումը ոչ միայն դժվար, այլև անհնա-  
րին է: Այդ նկատառումով էլ, մարտական խնդրին զուգընթաց,  
հրամանատարությունը երթի կազմակերպման խնդիր ստա-  
ցավ, որովհետև լեռնային պայմաններում անձնակազմի մարտու-  
նակության պահպանումը առաջնակարգ նշանակություն էր  
ստանում:

Հրամայված էր մինչև հակառակորդի ուժերի հետ բախվելը  
ստորաբաժանումների առջև միայն մասնակի խնդիրներ դնել:  
Երթը պետք է նախապատրաստվեր դժվարին պայմաններում, մեկ  
ու կես ժամում: Միայն ավանդարդային դրամարտակը ավագ լեյ-  
տենանտ Պանցելիչի հրամանատարությամբ հանդիպական մար-  
տի խնդիր ստացավ:

Լեռնային պայմաններում հնարավոր չէր փոխադրել զեն-  
քի բոլոր ծանր տեսակները: Ճակատ էին մեկնում հետևակը,  
գնդացրային, ակոնանետային և մարտական ապահովման (до-  
вого обеспечения) մի քանի ստորաբաժաններ:

Մեր զորամասերը դեռ մարտեր չէին վարել: Հայրենական  
մեծ պատերազմի առաջին շրջանում նրանք նախապատրաստվել  
էին թիկունքում, և միայն այդ օրերին հարկ եղավ գործի դնել  
այն, ինչ սովորել էին մի ամբողջ տարվա ընթացքում: Որովհե-  
տև Յակովենկոյի զորամասն առաջինն էր հարձակման խնդիր  
ստանում, այն էլ կովկասյան լեռների դժվարին պայմաններում,  
բնականաբար հարկ եղավ նրա վրա կենարոնացնել մեր ամբողջ  
ուշադրությունը, մանավանդ երբ նա առանձնանում էր ինք-  
նուրույն կերպով խնդիր կատարելու բավականաչափ տեական  
ժամանակով: Ընկեր կուզնեցովի հետ մենք որոշեցինք անձամբ  
գնալ նոր մարտական առաջադրանք ստացած զորամասի կազ-  
մում, տեղում ղեկավարել նրա գործողությունները, իսկ մեզ փո-  
խարինելու համար թողնելով համապատասխան մարդիկ, որոնք  
պետք է վարեին զորամասի մյուս գործերը:

Այդ իրադրության մեջ անհրաժեշտ եղավ քաղաշխատող-  
ներից առանձնացնել մի խումբ, որը ավագ քաղղեկ ընկ. Վար-  
դանովի գլխավորությամբ՝ մարտական գործողությունների ըն-

Թացքում գործում էր զորամասի կազմում և օգնում քաղաշխա-  
տանքի կազմակերպմանը:

Ընկ. Ջիկոգիձեն, զորամասի ղեկավար սպաներից մեկը,  
գտնվելով շտաբում, շտաբի պետի և մյուս սպաների հետ մեկ-  
տեղ, մշակում էր լեռնային երթի պլանը և ամփոփում հետախու-  
զության տվյալները, փոխադրելով այն տեղադժական քարտեզի  
վրա: Ավագ լեյտենանտ Բեստոնովը նախապատրաստում էր հե-  
տախուզական ջոկատը: Ավագ քաղղեկ Վարդանովը գնդի զին-  
կում Իվանովի և քաղրածնի աշխատողներ Միխայլովի և Ջանբե-  
կովի հետ մեկտեղ հավաքեց ստորաբաժանումների քաղաշխա-  
տողներին և մարտական խնդրին համապատասխան քաղաքական  
աշխատանքի հանձնարարություններ տվեց:

Ինչ հետո պարտիական ու կոմերիտական կազմակերպու-  
թյունների թուռցիկ ժողովներ գումարվեցին, որտեղ կոմու-  
նիստներն ու կոմերիտականները խնդիր ստացան մարշի բն-  
թացքում անձնակազմի հետ քաղաքական աշխատանք կատարե-  
լու համար:

Ուղևորության հետ կապված դժվարություններն ըմբռնե-  
լով՝ ստորաբաժանումների հրամանատարները ստուգեցին մար-  
տիկների իրային պայուսակները (вещевые мешки), հանդեր-  
ձանքը, զինվածությունը, որպեսզի կարմիրբանակայինները վերց-  
նեին իրենց հետ միայն ամենաանհրաժեշտը, թեթևացնեին  
սեփական բեռը: Ոմանք հանձնարարություններ ստացան հետե-  
վել գնդի արիերգարդում և օգնել բեռնատար ձիերն ուղևորող  
մարտիկներին շավղի դժվարին տեղերում:

Աշխատում էին ամենքը՝ կրտսեր հրամանատարները, սպա-  
ները, քաղաշխատողները, պարտիական և կոմերիտական ակտիվը:

Լեռան ստորոտի մոտ գտնվող գյուղը չհասած, զորամասը  
կտնգ էր առել հանգստանալու:

Երբ մտանք գյուղը, մեղ բոլորիս արագությամբ շրջա-  
պատեցին գյուղի բնակիչները: Հավաքվել էին ծերերը, կանայք,  
մանուկները: Յուրաքանչյուրն աշխատում էր որևէ կերպ հյու-  
րասիրած լինել մեզ: Բերում էին խնձոր, տանձ, սալոր և ուղ-  
ղակի ստիպում հյուրասիրվել:

Գյուղը մեծ գյուղ չէր և դժվար էր դիտել այն միանգա-  
մից: Նա ցրված է, տները մեկը մյուսից հեռու, ծածկված այ-

գիներով, իսկ տներն ընկած մասը տարածվում է ուղղակի անտառի  
փեշերին: Բնակիչները հայեր են, որոնց գերակշռող մասը  
առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին փախչե-  
լով Թյուրքիայից՝ ապաստան են գտել լեռան այս անկյունում:  
Կոլխոզնիկներն անհանգիստ են, արդեն լուրեր էին ստացվել, որ  
գերմանական բանդիտները երևացել են իրենց լեռնային արտա-  
վայրերի շրջանում, տարել գյուղի անասունները և գերի վերցրել  
հովիվներից ոմանց: Բնակիչները մտատանջության մեջ էին,  
նրանք տեսնում էին վտանգը մոտիկ, շատ մոտիկ:

Մեր զրույցը կոլխոզնիկների հետ մի նպատակ էր հետա-  
պնդում՝ պարզել բոլոր ելքերը, քանի որ պատերազմական իրա-  
դրությունը կարող էր թելադրել մեզ լրացուցիչ ելք փնտրել  
մարտի ժամանակ և մարտական խնդրի շահերից ելնելով, թևան-  
ցել թշնամուն: Այդ զրույցն օգտակար եղավ նաև այն տեսակե-  
տից, որ մեզ համար ամբողջությամբ պարզվեց լեռնային մար-  
շի գծավարությունների ծավալը:

Հարկավոր էր մեծագույն զգուշություն և առավել ուշա-  
դրություն դորամասի շարժման կարգի վրա: Այդ նպատակով  
հետախույզների դասակի առջև հրամանատարության կողմից  
նոր խնդիր դրվեց: Համաձայն ստացած խնդրի հետախույզները  
մեկնեցին փոքրիկ խմբերով, որպեսզի կարողանային տեսնել  
լեռնային շավիղների բոլոր կողմերը: Հետախույզները շարունակ  
մարտական պատրաստականության մեջ լինելով՝ թշնամու հե-  
տախույզներին հանդիպելիս պարտավոր էին թևանց կատարել  
կամ թե թաքնվել և թույլ տալ, որ նրանք շարունակեն իրենց  
ճանապարհը, և այնուհետև թիկունքից հարձակվելով ստիպել  
նրանց հանձնվել, իսկ չհանձնվելու դեպքում ոչնչացնել, աշխատե-  
լով, սակայն, 1—2 հոգի գերի վերցնել, որոնց կարիքն այն-  
քան մեծ էր մեզ համար: Որոշված էր մշտական կապ պահպանել  
դորամասի հետ հետախույզների միջոցով և զեկուցել դասակի գոր-  
ծողությունների մասին, անկախ նրանից, հանդիպել են թշնա-  
մուն, թե ոչ: Ընդհանուր շավիղից անջատվող և դեպի անտառի  
խորքերը տանող, մեզ համար անհայտ, շավիղներ և առհասարակ  
հնարավոր վտանգի տեղերում թողնվում էր հետախույզների մի-  
խումբ, որ հանձնելով իր դիրքը գնդի մոտեցող ստորաբաժա-  
նումներին, նորից շարունակում էր կատարել ստացած հետա-

խողական առաջադրանքը: Առանձնապես ուշադրութիւն դարձ-  
վեց պատահական մարդկանց ով լինելը պարզելու վրա, հրամայ-  
վեց բոլորին անխտիր, թեկուզ նրանք լինեին անգամ ուղիմա-  
կան հանդերձանքով, ներկայացնել գնդի շտաբ:

Հետախույզներէց մոտ 40 ըսպէ հետո ոտքի ելալ զորամասը:

Գյուղի բնակիչները երկու կողմերից սեղմվել էին շարժ-  
վող զորասյանը և, բռնելով պատահած մարտիկի թևից, շարժ-  
վում էին նրանց հետ կողք-կողքի: Ամենուրեք լսվում էին  
մերթ մնալի, մերթ աղերսալի ձայներ, որոնք պահանջում  
էին անխնա ոչնչացնել գերմանա-Ֆաշիստական իժերին, թույլ  
չտալ նրանց ոտք դնել Անդրկովկասի հողը:

Մանուկները վազելով շարքի կողքից՝ ուղղակի կաշոււ էին  
մարտիկների ծնկներին ասելով. «Եղբայր, խփիր գերմանացուն,  
չթողնես, որ այստեղ գա»:

Ստորաբաժանումների ձգված երթը ինքնաբերաբար վերած-  
վեց հաղթանակ խոստացող ցույցի: Մարտիկները քայլում էին  
հպարտ, գլուխները բարձր պահած, կարծես իրենք չէին տանում  
իրենց վրա ընկած բեռը, և շոյելով մանուկներին, կամ պայծառ  
հայացք նետելով կոլխոզնիկներին, հաղթանակ էին խոստանում:

Ամենքը՝ Սիբիրից լինելով, թե կենտրոնական Ռուսաստա-  
նից, Ուկրաինայից, թե Բելոռուսիայից և կամ Կովկասից...  
բոլորն էլ հենց այստեղ, Կովկասյան լեռներում, պաշտպանում  
էին իրենց հայրենի օջախի պատիւը: Եվ հուզմունքը պոռթկում  
էր ինքնաբերաբար... Կարծես թե ոչ ոք չէր պատասխանում  
կոլխոզնիկներին, իրենց հետ համաքայլ ընթացող մանուկներին,  
և միայն լողուններ էին արձակվում՝ ուղղված ստորաբաժա-  
նումներին, որոնք պսակվում էին ուռաներով: Զորամասն արդեն  
չէր երևում, բայց գյուղացիները հավաքված գյուղի հյուսիսա-  
յին ծայրին, հայացքները հառած դեպի անտառածածկ լեռնային  
շավիղը, երկար դիտում էին հեռուն:

Զորամասը հանգստանում էր դեռ: Ես, ժամանակ շահելով,  
քայլերս ուղղեցի դեպի գյուղի հյուսիս-արևմտյան ծայրը, որ-  
տեղ երկհարկանի սպիտակ տանը տեղավորված էր սանիտարա-  
կան կետը:

Բժիշկը պատրաստակամութիւն հայտնեց տրամադրել մեզ  
ամբողջ շենքը և աշխատել մեր սանիտարական կետում:

Սկսվեց լեռնային շավիղը: Մցարայից դեպի հյուսիս բաց-  
վում է բնական մի դարձանալի տեսարան: Գրեթե կուսական  
անտառներ են տարածվում Կովկասյան լեռնաշղթայի բարձր լան-  
ջերին:

Ճանապարհ չկա: Միայն մի նեղ շավիղ է, կապում լեռան  
ստորոտը Կովկասյան լեռնաշղթայի գագաթների հետ:

Տեղ-տեղ նշմարելի է, որ ինչ-որ ժամանակներ շավիղից ան-  
ջատվել են դեպի անտառի խորքերը տանող չափազանց նեղ շա-  
վիղներ, որոնք, ըստ երևույթին, գոյացել են տեղացիների, և  
մասնավորապես որսորդների, հաճախակի այցելություններից:  
Ասում են, որ այստեղ հայտնի որսատեղ է, տեղացիները ժամա-  
նակ առ ժամանակ անտառ են մտել այժյամ, աղվես և արջ որ-  
սալու: Որսորդն այժմ դադարել է որսի դնալուց, նա  
ճակատ է մեկնել, կամ թե լծվել լարված տնտեսական աշխա-  
տանքի:

Միայն լեռնային Բակլանովկան քչքչում էր ուրախ-ուրախ:  
Պարզ ու վճիտ էր նրա ջուրը, սառը և դուրալի: Անցորդը միշտ  
էլ երախտապարտ է մնացել լեռնային գետակին:

Բակլանովկայի ձախ ափով դեպի հյուսիս, անտառածածկ ու  
ժայռապատ ոլորապտույտ գառնիվայրով, շարժվում էին ստորա-  
բաժանումները ձգված միաշարքով: Իրար հետևից, դանդաղ ու  
մտահոգ անցնում են գնդի մարտիկները: Յուրաքանչյուրն իր  
վրա կրում էր հրացան, փամփուշտ, երկու օրվա պարեն, մի քա-  
նի նոնակ: Գնդացրորդներն ու ականանետները սեփական ուսե-  
րի վրա տանում էին գնդացիր կամ ականանետ: Զինանյութերի  
միայն աննշան մասը բարձած էին ձիերին: Սակայն այդ չէր  
թեթևացնում մարդկանց բեռը, այլ այդ ձիերն էլ իրենց հեր-  
թին գրեթե ավելորդ բեռ էին կարմիրբանակայինների համար:  
Ամեն քայլափոխում հավաքվում էին ձիերի շուրջը մի խումբ  
կարմիրբանակայիններ, օգնում նրանց, որ վայր չընկնեն, չզլոր-  
վեն անդունդը:

Ճանապարհը խիստ դժվար էր, իսկ կարմիրբանակայիննե-  
րի բեռը բավականաչափ ծանր: Ինք մարտի առաջին օրը դժաց-

վում էր, որ անձնակազմը հոգնում է, իսկ դժվարությունները դեռևս պետք է շարունակվեն առաջիկայում:

Միանգամայն պարզ էր, որ հոգնածությունը կարող էր բացասաբար անդրադառնալ անձնակազմի մարտունակության վրա: Հասկանալի է, որ զորամասի հրամ. քաղ. կազմը կարևոր նշանակություն էր տալիս այդ հարցին: Պարտիական քաղաքական ապարատը, բնականաբար, անձնակազմի հանգստի կազմակերպումը համարում էր քաղաքական աշխատանքի մի անբաժան մասը: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունեւր զորամասի քաղաքական աշխատողների համար մանավանդ, եթե նկատի ունենանք, որ զորամասի վարած առաջին մարտերը պետք է քննություն հանդիսանային միաժամանակ նաև պարտիական քաղաքական աշխատանքի դրվածքի տեսակետից:

Հանգստի բոլորներին իրար շուրջ էին համախմբվում մարտիկներ, հրամանատարներ ու քաղաշխատողներ, խորհրդակցում, թե ինչպես պետք է անցկացնեն մարշը, առաջիկա դժվար ճանապարհը հաղթահարելու համար: Բայց այդ բոլորը չէր: Նրանք գիտեին, որ գերմանացիները կտրել են այդ անտանելի ճանապարհը, ամբացել ժայռի գլխին: Նրանք գիտեին, որ մարտի մեջ կմտնեն հավանաբար ավելի դաժան պայմաններում, քան այդ օրվա ճանապարհային դժվարություններն էին, դուրս և ընդհարում տեղի ունենար հանկարծակի, եթե թշնամուն հաջողվեր խորամանկորեն բաց թողնել մեր հետախույզներին, զնդին հանկարծակի բերելու նպատակով: Սակայն պատերազմում առհասարակ հեշտ բան չի լինում, կամ թե միակողմանի ցանկությամբ չի կատարվում ամեն ինչ: Այս բոլորը քաջ գիտակցում էին նրանք և ծանր հոգնածության ժամին չէին մոռանում ժողովրդին հուզող ցավերը: Միևնույնն է, կոմկասյան լեռները չեն չքանա, հաղթահարել պետք էր:

Անձնակազմը սովոր չէր լեռնային պայմաններին և դեռևս քիչ էր մարդված դժվար մարշերի համար: Հրամանատարներն ու քաղաշխատողները խորապես մտահոգված էին զինվորների հոգնածության համար: Դժվարություններն աճում էին: Մտածում էինք առավել ուշադրություն դարձնել նրանց հանգստի կազմակերպման վրա, որպեսզի չընկնի անձնակազմի մարտունակությունը:

Հետախուզական ջոկատից տեղեկությունն չկար: Կուղնեցովը հրամայեց մի ջոկ առաջ շարժել՝ հետախուզության հետ կապվելու համար:

Իրիկնասպահին առատ անձրև տեղաց: Մարտիկները ստից գլուխ թրջվել էին: Որոշեցինք կանգ առնել և գիշերել Մարգիրոսյայլաղ խուտորից հյուսիս գտնվող անտառում: Լեռնալանջին, անտառի մեջ, որտեղ ցերեկն անգամ գետինը կարոտ է մնում արևի ճառագայթներին, տերևախիտ ծառերի տակ դասավորվեց գունդը հանգստանալու գիշերային պաշտպանության համար հարմար կարգով:

Անձնակազմը քնած էր: Լուսթյունն էր տիրում նրա շուրջը: Միայն մեղմիկ անձրևը մաղվում էր անտառի վրա և գիշերվա խավարին կենդանությունն տալիս:

Առավոտյան շարունակեցինք մեր ուղին: Զառիվայրն առավել դաժան էր:


Կեսօրին տեղեկությունն ստացվեց, որ հետախուզական ջոկաար գիշերել է մոտակա փոքրիկ խուտորում և առավոտյան շարունակել ճանապարհը ստացված խնդրին համապատասխան: Վերադարձող երկու կարմիրբանակայինները զեկուցեցին, որ տեղացիները հայտնել են գերմանական հետախույզ զինվորներ երևալու մասին:

Վերցնելով մի քանի հոգի, ես առաջ գնացի, որպեսզի մինչև գիշերելու տեղ հասնելը պարզի իրադրությունը: Մի ժամից հետո հանդիպեցինք մեզ զեկուցելու համար ճանապարհին, աղբյուրի մոտ, սպասող մեր հետախույզներին: Հետախույզները զեկուցեցին, որ գերմանական հետախույզները երևալու մասին գյուղացիներին հաղորդել է ինչ որ նախրապան և գնացել է անհայտ ուղղությամբ: Քիչ հետո մի աղջիկ երևաց, որ անտառից դուրս էր գնում: Հետախույզները մասնացույց արին, որ աղջիկը տեղյակ է նախրապանի հաղորդածին: Աղջիկը՝ Նինա Քեչաբջանը Աջաստա խուտորից էր: Նրա պատմածից որոշակի ոչինչ չպարզվեց: Մոտեցան էլի երկու աղջիկներ. Քեչաբջանը դարձավ նրանց հայերենով. «Նրանք կարծում են, որ այդ խելառ Հայկը ճիշտ է ասել»:

— Իսկ ի՞նչու եք կարծում, որ նա խելառ է, — հարցրի ես քիչ լուսթյունից հետո:

22865

A



Աղջիկը շփոթվեց և այլայլված դուրս էր տալիս կցկտուր․  
«Ախ, նրանք հայերեն գիտեն . . . Նա . . . նա կիսախելատ է . . .  
վախեցել է . . . վախենալուց է ասել»:

Մեկնեցինք խուտուրը: Գյուղացիների հետ ունեցած զրույ-  
ցից համոզվեցի ստացածս լուրի անճշտութեանը: Սակայն  
ուշագրավ էր, որ Նինա Բեշարյանը շփոթված կերպով ամեն ինչ  
ասում էր, և եթե ես ուշագրութեան չդարձնեի այդ հանդամանքի  
վրա, նա պատրաստ էր ուղածդ շփոթ լուրերը հորինել, միայն  
թե ազատվեր անակնկալ հարցերից, թեկուզ և մեղ թյուրիմացու-  
թեան մեջ գցելու լիներ:

Երեկոյան գունդը հորդ անձրևի տակ անցնում էր ամենա-  
ծանր շավղով: Ընդամենը մեկ կիլոմետր երկարութեան ունե-  
ցող շավիղը մեզնից խլեց մի քանի ժամ. մենք բարձրանում  
էինք ժայռերի վրա, դրեթե մագլցելով խիստ թեքութեան ունե-  
ցող կածանով, որպեսզի նորից իջնենք Բակլանովկայի ամիր:  
Այդ սատանայական ճանապարհը խլեց մի քանի ձիեր, ականա-  
նետներ և Ֆիդիկապես հյուձնելու չափ նեղութեան պատճառեց  
անձնակազմին: Վերջապես, օգոստոսի 31-ին, ուշ երեկոյան,  
մենք նորից Բակլանովկայի ամին էինք: Բարքարոտ ու ժայ-  
ռապատ փոքրիկ հովտում (урочище) կանգ առանք գիշերելու:  
Իսկույն երևացին խարույկներ: Կարմիրբանակայիները հավաք-  
վելով կրակի շուրջը՝ չորացնում էին մինչև վերջին թելը թրջը-  
ված հանդերձանքը: Մեր բախտից տեղը այնքան հարմար  
էր, որ խարույկները չէին նկատվում հեռվից: Մեր շուրջը  
ուղիղ բարձրացող ահուլի ժայռեր էին, որոնք սահմանափա-  
կում էին հորիզոնը այնպես, որ անգամ օդից դժվար էր նկա-  
տել կրակները, մանավանդ, երբ երկնակամարն ամպածած էր:

Հետախուզական ջոկատն անցկացրինք գետի աջ ամիր,  
խնդիր դնելով ապահովել գնդի հանգիստը:

Սեպտեմբերի 1-ին զորամասը մնաց տեղում: Ճանապարհի ան-  
տանելիութեանը գումարվեց բնութեան աղետը: Գիշերվա հոր-  
դառատ անձրևից, որ անդադար շարունակվում էր նաև առա-  
վոտյան, Բակլանովկան սաստիկ բարձրացել էր: Գետը փրփրել  
էր, կատաղել:

Բակլանովկան խլացրել էր մեզ, և շուրջը ոչինչ չէր լավում,  
բացի նրա աղմուկից: Փայտյա թեթև կամուրջը թռավ, հեղե-

դուժի երախն ընկալ ու անհետացալ: Առաջ շարժվելու հնար  
չկար: Բակլանովկան քանի դնում, այնքան անուխի էր դառնում:

Հնարամտությունները, գետն անցնելու համար, ապար-  
դյուն անցան: Հրամանատար ընկեր Յակովենկոն փորձեց իր եր-  
կու ձիերը անցկացնել գետով, բայց զրկվեց նրանցից: Գետը  
խլեց ձիուն փրկել ցանկացող մի կարմիրբանակային, և անհայտ  
մնաց, թե ուր տարալ նրան ջուրը: Կամուրջը սարքելու հնարա-  
վորությունից զուրկ էինք: Վերադաս հրամանատարությունից և  
հարևաններից էլ օգնություն ստանալն այդ օրն անհնարին էր:

Նորից կրկնվեցին փորձերը: Մի քանի հսկայական ծառեր  
մեկը մյուսի հետևից գլորեցինք գետի վրա: Կատաղած Բակլա-  
նովկան իր երախն առալ, ջրի տակ մտցրեց ու տարալ, կարծես  
արհամարհելով մեր ուժերը:

Ճանապարհին դորամասը պարեն չէր ստացել, իսկ բանակա-  
յինների մոտ եղած երկու օրվա պարենը սպառվել էր օգոստոսի  
31-ին: Քաղաշխատող Իվանովը վերադարձավ կես ճանապարհից,  
խնդիր ստանալով լեռան ստորոտում կաղմակերպել մատակա-  
րարման կետ և շտապ պարենեղեն հասցնել: Ոտից գլուխ թըջված  
աղմիկները համառորեն դիմադրում էին դժվարություններին:  
Անձրեն էլ մի կողմից էր նեղում. եթե չմտածեինք փոքրիկ խա-  
րույկներում կրակ պահել, ապա կզրկվեինք տաքանալու միակ  
հնարավորությունից ևս: Վերջապես ժամանում է, եթե կարելի  
է այսպես անվանել, պարենի առաջին քարավանը, թեթև բար-  
ձած գրաստներով: Նրանք բերել էին հաց, կրուպա, ճարպ և մի  
քիչ էլ գարի ձիերի համար: Սակայն իզուր էին զվարճության  
հասնող հույսերը, անընդհատ անձրևները կատարյալ խմոր էին  
դարձրել հացը: Ստիպված էինք խմոր բաժանել անձնակազմին և  
կաղմակերպել, որ կրակի վրա գինվորական կատելոկների մեջ  
կամ թե քարերի վրա նորից թխեն հաց դարձնեն և ուտեն:  
Գրեթե նույնը կատարվեց կրուպայի հետ, որ եփելուց ինչ-որ  
անհաջող շփոթի էր նմանվել: Այդ պարենը չբավականացավ անձ-  
նակազմի քաղցը թեկուզ մեկ անգամ հազեցնելու: Ավելի լավ չեք  
գետի մյուս ափին գտնվող հետախուզական ջոկատի վիճակը:  
Հետախուզիչներից ոմանք հաջորդ օրը մոտեցան գետի ափին,  
հույս ունենալով մեղսից օրեէ բան ստանալ, բայց այս անգամ  
վերադարձան ջոկատ դատարկաձեռն:

Քաղաքական աշխատանքը անձնակազմի հետ չէր դադարում, և որ կարևորն է, մենք ամեն ինչ անում էինք՝ բարձր պահելու համար նրանց տրամադրութունը:

Զորամասերի կյանքում ամենադժվար բոլորներին քաղաշխատողները ավելի բարձր պատասխանատվութուն են դրում և ավելի ջերմեռանդ աշխատում: Նրանք արհամարհում են «մանրութիւններ», «ֆունկցիա» հասկացողութունները, առանց վարանելու լծվում են ամեն մի փոքր ու մեծ գործի, որպեսզի ամեն մի գեթ աննշան հնարավորութուն օգտագործեն դորքի մարտունակութունը բարձր պահելու համար: Քաղաքական աշխատանքը ստորաբաժանումներում չէր սահմանափակվում սոփոյա քաղաքական ու պատերազմական իրադրութուններին, կարմիր բանակի պատմական խնդիրներին, ռազմական կարգին, դիսցիպլինային և անմիջական մարտական խնդիրներին վերաբերող հարցերով: Մեզ քաջ հայտնի էր, որ եթե ամենադժվար խնդիրը պատերազմում այդ օրերին գերմանական ռազմական մեքենայի ջախջախումն էր, ապա այստեղ, լեռներում, այդ օրերին թշնամուն հաղթելու դժվարութուններին գումարվում էին բնական պայմանների և աղետների դեմ մաքառելու դժվարութունները: Պատերազմը մեծ դպրոց է, բայց այդ դպրոցը միայն անմիջական մարտը չէ, երբ բախվում են երկու հակառակորդ ուժերը: Մարտից առաջ անձրևի տակ, կամ կիսով չափ ջրի մեջ կուչ գալը պակաս սարսափելի չէ մարտում գրոհի դիմելուց: Իսկ էլ դպրոց, այն էլ դաժան դպրոց: Այդ դպրոցի դասերը պետք է յուրացվեն, որքան էլ նրանք կծու թվան: Առանց դրան հաղթել անհնարին է: Մեզ համար իր ամբողջ հասակով կանգնած էր հոգեպես և ֆիզիկապես մեծ քննութուն բռնելու հարցը:

Քաղաշխատողները ոչ մի բոլոր չէին հեռանում մարտիկներից, նրանք հավասարապես բաժանում էին նրանց զրկանքները, եթե չհաշվենք, որ շատ հաճախ նրանք հնարավորութուն չէին ունենում հոգալ իրենց ամենամանրագույն հոգսերը: Քաղաշխատողները ստորաբաժանումներում հոգում էին, որպեսզի անձնակազմը խարույկների վրա չորացնի իր հանդերձանքը, հերթով կրակի մոտ տաքանան: Նրանք հաշվի էին առնում պարենի ամեն մի գրամը, նրա բաշխումը կարմիրբանակայիններին: Երբ պարեն ստանալու շանսերը հեռու են, ապա քաղաշխատողներն

այնպես էին անում, որ օրվա ստացածի մի մասը խնայվի մյուս օրվա համար: Բավական է նշել, որ քաղաշխատողներն իրենք նախաձեռնեցին կազմակերպել ձիերի արտը կլոր սուտկայում, իսկ նրանց բաժին գարուց խնայել, զինվորական կատելոկներում բովել (աղանձ անել) և երթի ժամանակ քիչ-քիչ բաժանել կարմիրբանակայիններին, մինչև որ կհասնի պարենի հաջորդ քարավանը:

Քաղաշխատողներից ոմանք կազմակերպեցին անտառից սուռնկ հավաքելու գործը և կրակի վրա խորովելով կերակրում էին անձնակազմին: Ստորաբաժանումների հրամանատարները ցուցում ստացան օրվա մեջ երկու անգամ թեյ տալ անձնակազմին, որը լեռնային ծերպերում տաքացնում էր մարտիկներին:

Բակլանովկան անցել էր կատաղության չափը և դուրս գալով հունից՝ իր ձախափին ողողել էր միակ հովիտը: Ստորաբաժանումները սեղմվել էին քարափներին և կից լեռնալանջերին:

Սեպտեմբերի 2-ին գունդը դեռ տեղումն էր: Հրամայեցինք հաջորդ առավոտյան, սեպտեմբերի 3-ին, գետանց (переправа) կառուցել ինչ գնով էլ որ լինի: Գետանցի կառուցումը հանձնարարվեց Բրաժնիկի և Սակովսկու ստորաբաժանումներին: Վաշտերն սկսեցին նախապատրաստական աշխատանքը: Գիշերը համեմատաբար խաղաղ անցավ: Ժամը 1.00-ին անձրևը դադարեց, իսկ երկնակամարի վրա հատուկենտ աստղեր երևացին: Լսվեց ինքնաթիռի հոնդյուն: Օպերատիվ հերթապահ լեյտենանտ Սախանը հրաման ստացավ անմիջապես հանգցնել խարույկները և ստուգել մարտական ծառայությունը: Հենց որ երկնակամարը պարզել էր, գերմանական հետախույզ ինքնաթիռը բարձրացել էր օդը: Նա մի քանի պտույտ կատարեց մեր գլխավորները—շատ բարձր և ըստ երևույթին ոչինչ չնկատելով անհետացավ:

\* \* \*

Առավոտյան (3 սեպտեմբեր 1942 թ.) նկատելի էր, որ նվազում է Բակլանովկայի կատաղության աստիճանը: Նրա փերին կանգնել էին փրփուրի տղմուտ շերտեր:

Մարտիկներն սկսեցին եռուն աշխատանքը: Կարմիրբանակայիններն ու հրամանատարները դասակներով, իրենց ուսերի վրա, քարափներով ու ծուռումուռ ծառուղիներով գետափ էին փո-

խաղրուճ երկար գերաններ: Աշխատում էին բոլորը՝ մարտիկները՝ սերժանտները, հրամանատարներն ու քաղաշխատողները: Մի փոքր անզգուշությունը կկլաներ շատերի կյանքը, բայց նրանք չէին վհատվում. երբ մեկը սահում էր կամ ընկնում, մյուսներն այնքան էին ամուր կառչում գերանին, որ վայր ընկնողը կախված մնալով գերանից, հավաքում էր իր ուժերը և նորից կրում ծանրությունը: Գետափին նրանք ամրացնում էին գերանի մի ծայրը և օգտվելով ուղղահայաց, տեղ-տեղ իր ձեղքերում ծառեր ու թփեր ունեցող, ժայռից, բարձրացնում էին գերանները, տալիս նրանց ուղղահայաց դիրք և հրելով վայր ձգում այնպես, որ նա ընկնի գետի լայնությամբ և մյուս ծայրով հենվելով գետի մյուս ափին՝ կամուրջ կառնի:

Վերջապես հաջողվեց գետի վրայով մեկնել մի գերան, որի մյուս ծայրը հենվել էր ապառաժին և կիսով չափ ջրի մեջ լինելով, օրորվում էր գետի վրա: Քաղղեկ Ջանբեկովը և երկու կարմիրբանակայիներն բարձրացան գերանի վրա: Նրանք կանգնած չէին կարող անցնել գերանի վրայով, որովհետև գերանը կիսով չափ ջրի մեջ էր և խիստ օրորվում էր: Այդ պատճառով էլ նրանք ուղղակի հեծել էին գերանին և ջրի մեջ կամաց-կամաց առաջ էին շարժվում սողալով: Նրանք ամրացրին գերանի ծայրը գետի մյուս ափին և սպասում էին հաջորդին: Մեզ հաջողվեց երկու գերան ևս գցել գետի վրա կողք կողքի, և գետանցն արդեն պատրաստ էր: Որոշեցինք թողնել ձիերը և առաջին անհրաժեշտություն չներկայացնող իրերը մի ստորաբաժանման հետ, որոնց առջև խնդիր դրվեց ջուրն իջնելուց հետո շարունակել կարգի բերել կամուրջը և անցկացնել ձիերը: Մի վաշտ առանձնացվեց և ուղարկվեց զորամասին զինամթերք հասցնելու: Չորամասի հիմնական ուժերը անհրաժեշտ ուղամթերքով անցան գերանների վրայով և նորից բռնեցին լեռնային շավիղը:

### ՄԱՐՏԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Գերմանական 101-րդ դիվիզիայի զորամասերը գրավելով որոշ լեռնանցքներ, ամրացել էին բարձունքների վրա և փակել էլքը հարավից:

Լեռնանցքը զուրկ է թևանց կատարելու հնարավորություն-

ներից: Նրա երկու լանջերը՝ արևելքից և արևմուտքից անտա-  
ռածածկ, երբեմն մոտ 70 աստիճան թեքություն ունեցող լանջեր  
են, դուրկ շարժվելու հնարավորությունից: Որսորդն անգամ ոտք  
չի դրել այդ լանջերին: Լեռնանցք բարձրանալու միակ ելքը մեզ  
համար հարավից է, լեռան դուրս ցցված, նեղ, անտառապատ և  
բնականից դարավոս լանջով, որտեղ սարիների ընթացքում գո-  
յացել է դժվարանց մի նեղ շավիղ, այն էլ գրավել էին գերմա-  
նացիները:

Սակայն ներկա պատերազմում անանցանելի վայրեր չկա-  
յին. ինչ էր լիներ, պետք է գրոհեինք լեռնանցքը:

Կտրմի բանակի զորամասերից երկու ստորաբաժանումներ  
դիմադրելով թշնամուն, ամբայել էին լեռան ստորոտում, խա-  
փանելով նրա հետագա առաջխաղացումը դեպի հարավ: Նրանք  
մի քանի անգամ գրոհել էին թշնամուն շավիղով, փորձել էտ  
վերցնել լեռնանցքը: Մի քանի կարմիրբանակայիններ գերա-  
զանց անվեհերությամբ գրոհելով մոտեցել էին թշնամու դիրքե-  
րին լեռան գագաթից ոչ հեռու, բայց ստիպված էին եղել ետ քաշվել  
լեռան ստորոտը: Հակառակորդը լեռնանցքին մոտենալու (ПОД-  
ХОД) ամբողջ տարածությունը ծածկում էր գնդացրային ու ավ-  
տոմատային կրակով, թույլ չէր տալիս մոտենալ բարձունքին:  
Քաղաթում նրանք ունեին մի քանի ականանետներ, որոնցով  
կրակի տակ էին պահում լեռան ստորոտը՝ հովիտը:

Մարտերի ընթացքում ստորաբաժանումներից մեկի հրամ-  
քադ. կազմի կորուստ էր եղել: Այդ դեռ բոլորը չէր, ստորաբա-  
ժանումները գործում էին անջատ-անջատ, միմյանցից անկախ,  
չունեին ընդհանուր դեկավարություն: Որոշեցինք մեզ ենթար-  
կել իրարից անջատ գործող այդ ստորաբաժանումները: Դեռ  
սեպտեմբերի 2-ին, ժամը 13-ին, մենք հրաման ստորագրեցինք  
այդ ստորաբաժանումները մեր հրամանատարությանը ենթար-  
կելու մասին և գետի աջ ափին գտնվող մեր հետախույզների մի-  
ջոցով հասցրինք նրանց հրամանատարներին: Հրամայված էր  
մեր հետախույզական շոկատի հետ միասին գրոհել լեռնանցքը:  
Սակայն մենք արդեն հասել էինք բարձունքի ստորոտին, իսկ  
լեռնանցքը շարունակում էր մնալ հակառակորդի ձեռքում:

Դեռ արևը մայր չէր մտել: Մենք ականանետային կրակ բաց

արինք բարձունքի վրա: Ուժեղ կրակով թշնամին պատասխանեց մեզ, մեր ականանետները ստիպված լռեցին:

Թշնամու ականանետային կրակը դադարեց: Մարտկոցի հրամանատարը հրաման ստացավ երկու ականանետները փոխադրել մեր աջ թևը, լեռան լանջին հարմար դիրք բռնել և սպասել հրամանի:

Մենք հարձակման պլան էինք կազմում: Երբ մթության շղարշը պատեց անտառը, մեր դասակներից մեկը լեյտենանտ Մալըշևի հրամանատարութեամբ, թեթև զինվածութեամբ ուղևորվեց լեռնանցքից արևմուտք ընկած կիրճով դեպի հյուսիս, խընդիր ունենալով դուրս գալ կիրճից արևմուտք ընկնող լեռան հյուսիս-արևելյան լանջը, որ գերմանացիների համար միանգամայն անսպասելի էր, ամբանալ հարմար դիրքերում և բարձունքի վրա գրոհն սկսելիս անմիջապես կրակ բաց անել լեռնանցքի հյուսիսային ուղղութեամբ ընկած շավղին, շրջապատման տվավորութեան ստեղծել:

Գիշերվա մթության մեջ մի քանի ստորաբաժանումներ լեռան հարավային լանջից շարժեցինք լեռնանցքը տանող միակ շավղով: Ստորաբաժանումները բարձրանում էին լեռը փոքրիկ խմբերով և անադմուկ: Նրանց հարձակման նշանը մեր ականանետային կրակն էր:

Սեպտեմբերի 4-ին, վաղ առավոտյան, մեր ականանետները կրակ բացեցին նոր դիրքերից: Նրանց հետևեց հետևակի գրոհը լեռնանցքի հարավից: Գործը կարող էր հաջողութեամբ չպսակվել, եթե մեր մի ականը ուղղակի չընկնեք հակառակորդի հրամանատարական կետը և շարքից չհաներ նրա հրամանատարին և շուրջը գտնվող սպաներին: Գրոհը դաժան բնույթ էր կրում մեզ համար չափազանց անհարմար դիրքերի պայմաններում: Սակայն գերմանացիների հարմար դիրքերը չօգնեցին նրանց:

Թևանց կատարող մեր դասակը ժամանակին չէր հասել նշանակված տեղը. երբ գրոհն սկսվել էր, նրանք միայն նոր մտտենում էին որոշված դիրքերին: Սակայն նրանց դերը մեծ եղավ, երբ լեռնանցքի հյուսիսային կողմից դեպի լեռնանցքն էր շարժվում թշնամու օգնական ստորաբաժանումը, Մալըշևի դասակը անսպասելի կրակի տակ առավ նրանց և ստիպեց փախուստի դիմել: Բարձունքը պաշտպանող թշնամու զորամասը թիկունքից

օգնութիւն չստացալ և, ըստ երևութին, շրջապատման վտանգ  
զգալով՝ դիտակոր նահանջի դիմեց: Այդ պահին մեր գրոհող դա-  
սակները ականանետային կրակի օգնութեամբ հասել էին բար-  
ձունքին: Սկսվեց մի սարսափելի մարտ նահանջ սկսող թշնամու  
դեմ: Մերոնք անընդհատ կրակի տակ պահելով գերմանացիներ-  
ին, հասնում էին թիկունքից և սվինահար անում նրանց: Գեր-  
մանական ստորաբաժանումներն այդ մարտում կորցրին իրենց  
դինվորների մեծ մասը, իսկ մնացածները ետ փախան: Եթե հնա-  
րավոր լիներ կտրել շավիղը թիկունքից, ապա հիտլերականնե-  
րից և ոչ մեկը չէր պրծնի:

Մեր ստորաբաժանումները խնդիր ունեին լեռնանցքը գրա-  
վելուց հետո ամրանալ բարձունքի վրա, մինչև հասնեն գնդի  
հիմնական ուժերը: Փախուստի ժամանակ գերմանացիները գըն-  
դակահարել էին իրենց բոլոր ձիերը: Այդ անել ստիպել էր  
նրանց դժվարանցանելի շավիղը, քանի որ ձիերի առկայութե-  
անը բավականաչափ կգալարեցներ նահանջը:

Բարձունքի վրա և շավղի ամբողջ երկարութեամբ ընկած  
էին գերմանացիների դիակներ, գյուղերից թալանած վերմակներ,  
քարձեր, անասուններ և բավականաչափ ռազմամթերք:

Մեր ստորաբաժանումը թշնամուն հետապնդեց, սակայն  
գանգաղ, ուշացումով: Հավանորեն, արագ հետապնդումից հետո,  
հակառակորդը չէր կարողանա ամրացնել իր դիրքերը պաշտ-  
պանութեան հաջորդ գծում, որին դեռ մենք կհանդիպենք:

Այնուամենայնիվ այդ լեռնանցքի գրավումը մեզ համար  
նշանակալից էր ոչ միայն տակտիկական տեսակետից, այլև որ-  
պես դաս հետագա գործողութիւններին կազմակերպման համար:  
Գերմանացիների համար առավելութիւնն այն էր, որ արդեն մի  
քանի օր էր ամրացել էին բարձունքի վրա և հոգնած չէին, ու-  
նեին պարեն և հատկապես մեծ քանակութեամբ մսացու անա-  
սուններ՝ գյուղերից թալանած: Ամենից կարևոր առավելութիւն-  
նը նրանց դիրքն էր, հրամայողական բարձունքը իր բոլոր բնա-  
կան արգելակներով ու թևանցի հնարավորութեան բացակայու-  
թեամբ: Դա անառիկ բերդ էր իսկական իմաստով: Սակայն նրա  
դինվածութիւնը չէր գերազանցում մեր հարձակվող ստորաբա-  
ժանումների դինվածութեանը: Իսկ շավղի վրա Մալրշևի դասա-  
կի կրակ բաց անելը, որ, թեև ուշացումով, շրջապատման տպա-

վորություն էր ստեղծել, և նրանց հրամանատարի սպանվելը մահվան սարսուռ էր տարածել հիտլերականների շարքերում:

Այդ մարտը պարզեց, որ լեռնային պայմանները (խոսքը վերաբերում է Կովկասյան լեռների այդ կոնկրետ տեղամասին և նման պայմաններին) հնարավորություն չեն տալիս ինչպես հարկն է մարտակարգեր ստեղծել, և ծավալել ստորաբաժանումների գործողութայունները և համագործակցութայուն ապահովել: Այդ պայմաններում առավել անհնարին է գործի դնել արդի ազմական տեխնիկան: Փոքր, թեթև զինված խմբերով գործելը լեռներում ավելի ձեռնառու է թե տակտիկական և թե մատակարարումը հազմակերպելու տեսակետից: Այդ կարևոր դասը մեզ պետք է կազմակերպել հետագա գործողութայունների ընթացքում:

\* \* \*

Սեպտեմբերի 4-ի առավոտյան մեր «Մ—2» ինքնաթիռները մի քանի պարկ (մեշոկ) սուխարի, կրուպա և ճարպ նետեցին լեռան ստորոտը: Գնդի հիմնական ուժերն արդեն բարձրանում էին զառիվայրով, երբ պարհնը տեղ հասցրին և հանգստի բոլորներին բաժանեցին անձնակազմին: Զառիվայրը սոսկալի էր: Իրար հետևից շարժվում էին գործամասի ստորաբաժանումները: Նրանց ճակատներից քրտինք էր հոսում, իսկ մարմնից բարձրանում էր տաք գոլորշին, ինչպես անձրևից հետո տաք եղանակին: Բայց լեռան գագաթը դեռ չէր երևում:

Հոգնած զինվորները մերթ ընդմերթ կանգ էին առնում, նայում դեպի վեր՝ որոշելու համար, թե որքան է մնացել մինչև լեռան գագաթը: Նրանք մի քիչ առաջ էին գնում, հաճախ կանգ առնում, դուրս գալիս շավղից, նորից աչքերը հառում դեպի վեր և էլի վերադառնում շավղից և շարունակում ճանապարհը:

«Քանի կիլոմետր է մնացել մինչև գագաթը» — հարցնում էին նրանք միմյանց:

Հրամանատարներից ոմանք, կարծես ակամա, հանում էին քարտեզները, ինչ որ գննում և՛ էլի տեղը դնում:

«Կարծեմ դեռ երեք կիլոմետր կա, — ուշացումով պատասխանեց մեկը, — բայց ես երեք ասեմ, դուք յոթ հասկացեք: Անձանոթ ճանապարհը, «գաղ»-ով են հաշվում, իսկ «գաղը» հավա-

սար է մեղ հայտնի երկարութեան կրկնակիին և մեկ կիլոմետր էլ դենը:

Ոմանց ուժերը չէին ներում շարունակել դաժան ճանապարհը, թեև փորձում էին շարունակել ուղին, բայց... ուժը բավական չէր լինում կամքը կատարելու համար, ակամա պառկում էին մինչև մի փոքր կփարատեին հոգնածութեանը:

Ստիպված էինք մի քանի հոգու թողնել հանգստանալու մի քանի ժամով:

Հիանալի սալգաթ է մեր բանակայինը: Այդքան դժվարին ճանապարհին, երբ նրանք երբևից կուշտ փորով չէին լինում, երբեք չէին տրտնջում: Երբ լեռնալանջին կուշտ կերան և հանգրստացան, այլևս դժվար էր նկատել նրանց դեռ չանցած հոգնածութեանը: Իսկ այն մարտիկները, որոնց թողել էինք հանգրստանալու, իրիկնապահին հասան զորամասին: Մեզ անչափ ուրախացնում էր մարտիկների համառութեանը, նրանց քրտնաջանութեանը և հաղթելու համոզված պատրաստակամութեանը: Այդպիսի դինվորների հետ դեպի մահ կարելի է գնալ բաց ճակատով և եթե ընկնես մարտի դաշտում դեռ հաղթանակը չտեսած, փուշթ չէ, նրանք գործը կիսատ չեն թողնի:

Դժբախտաբար ամեն ինչ կարգին չէր: Կյանքում ամեն ինչ հարթ չի անցնում, իսկ պատերազմում՝ առավել:

Մայրը Յակովենկոյի դեկավարութեամբ գործող ստորաբաժանումների գործողութեանների համար ստեղծվել էր բարդ իրադրութեանը: Ստորաբաժանումները շարժվում էին անձանոթ, լեռնային դժվարին պայմաններում: Սպաների և մարտիկների մի մասն անհրաժեշտ փորձ չունենալով այդպիսի իրադրութեան մեջ գործելու համար: Ընկեր Յակովենկոն հաշվի չէր առել այդ հանգամանքները, և ինչպես պարզվեց օգոստոսի 31-ին, նրան ենթակա սպաների մի մասը իր տեղում չէր գտնվում: Հարկավոր էր օգնել ստորաբաժանումներին, հաստատել բարձր կադմակերպվածութեանը, սպաներին սովորեցնել նոր պայմաններում ճիշտ գործել և հաջողութեամբ կատարել մարտական խնդիրը:

Հրամանատար Կուզնեցովի հետ մենք ձեռնարկեցինք այդ գործին: Մարտիկները դիմանում էին լեռնային պայմանների դժվարութեաններին և համառորեն հաղթահարում դրանք:

Արդեն լեռան գագաթն էինք բարձրացել և երեկոյան կենտո

ընացել նրա հյուսիսային մասում, որտեղ դորամասը պետք է գիշերեր: Կարմիրքանակայինները անտառից հավաքել էին թըշնամու թողած հինգ խոշոր եղջերավոր անասուն և 73 այծ: Ամեն մեկը ցանկանում էր տանել իր գումարտակը, մյուսները դիմադրում էին: Երեքական այծ տրամադրելով ստորաբաժանումներին անձնակազմին կերակրելու համար, մնացածը թողեցինք հրամանատարության տրամադրության տակ (հետագայում այդ անասունները տրվեցին Պսխու գյուղի կոլխոզին):

Հաջորդ օրը վաղ առավոտ մարտիկները շարժվեցին լեռան հյուսիսային ժայռոտ գլխավայր շավղով, որ խիստ թեքության պատճառով անցնում էր դժվարին զիգզագով:

Մարտիկները շարժվում էին մեծագույն զգուշությամբ, որովհետև փոքր ինչ անզգուշ քայլը կարող էր շարժել փխրուն մասսիվի վրա թռչլ հենված քարերը և շարքից հանել տասնյակ մարտիկ: Յուրաքանչյուր ձի անցկացնելու համար առանձնացված էր չորս հոգի, որպեսզի անփաս անցկացնեն նրանց զառիվայրից:

Մենք մոտեցանք Բեշավա կոչվող խուտորին, որ նույնանուն գետի ափին է գտնվում: Հարկավոր էր ուսումնասիրել խուտորի վիճակը, պարզել բոլոր պայմանները: Հենց նոր անտառի թաքըստոցից վերադարձած մի գյուղացու ուղեկցությամբ շրջեցինք իրարից հեռու ընկած տները և բանջարանոցները, որ թալանված էին: Բնակիչները փախել էին անտառը, իսկ գերմանացիները ոչինչ չէին թողել բանջարանոցներում. նրանք անխնա քանդել և լափել էին դեռևս լրիվ չհասունացած կարտոֆիլը, միայն տեղ-տեղ բաց արմատների վրա մնացել էին հատուկնատ մանր կարտոֆիլներ: Հիտլերականները ոչ միայն խժուկ էին մեղրը, այլև ջարդել փեթակները ու ոչնչացրել նրանց ընտանիքները: Խրճիթները մեծ մասամբ քանդված էին, մի մասը այրված, իսկ շարժական ամբողջ գույքը ջարդված կամ թալանված էր: Մնում էին միայն ոչ մեծ քանակությամբ կգիպտացորենի արտեր, նույնպես կիսով չափ ոտնատակ արված:

Կեսօրն անցել էր, երբ մենք հասանք Բզիբ գետի ափը:

Մեր դորամասի առաջիկա գործողությունները ձախ թևից ապահովելու նպատակով հարկ եղավ լրացուցիչ միջոցառումներ ձեռք առնել, որպեսզի ձախողման ենթարկենք ֆաշիստական հորդանների ամեն մի փորձ՝ ներխուժելու կամ հետախուզելու մեր ձախ թևը:

Դեռ առաջին լեռնանցքը գրավելուց առաջ դորամասերից մեկի հրամանատարը մեզնից խնդիր ստացավ անհապաղ փոխադրվել Ախուռն-Դարա և Անչխա լեռնանցքների շրջանը և վերահսկողության տակ պահել դեպի Կովկասյան լեռնաշղթայի գագաթները տանող ելքերը այդ հատվածում:

Լեյտենանտ Նգորովի ստորաբաժանումը, ստանալով մարտական այդ խնդիրը, արդեն գրավել էր ցույց տված լեռնանցքները և վերահսկում էր հակառակորդի կողմից դեպի լեռնաշղթայի գագաթները տանող մի քանի շավիղներ:

Պետք է նկատենք, որ այդ միջոցառումը չսահմանափակվեց ցույց տրված խնդրի կատարմամբ, այլև մեզ հնարավորություն տվեց գործող ստորաբաժանումների համար մատակարարման լրացուցիչ կետ կազմակերպել համեմատաբար ավելի դյուրին ճանապարհով, քան մինչ այդ մենք ունեինք: Իսկ Նգորովի ստորաբաժանումը գտնվելով լեռնանցքներում, միաժամանակ մոտիկ ուղեբով էր գործող դորամասի համար, որ անհրաժեշտության դեպքում անհապաղ կարող էր անցնել անմիջական գործողությունների: Այդպես էլ կատարվեց:

ՊՍԵՈՒ ԳՅՈՒՂԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Բզիբ դեռի ձախ ամրին, որտեղ նրան միանում է Րեշավա վտակը, Կովկասյան բարձրաբերձ լեռների ծոցում ընկած են Դպիրնա և Դամբեխա հովիտները, որոնք տարածվում են Բզիբի երկարությամբ դեպի արևելք և արևմուտք ու կազմում բնական մի սքանչելի տեսարան:

Այստեղ իրար հանդիպեցին լեռներում գործող երկու դորամասեր. մեկը մեր դորամասը՝ հիշատակված երկու ստորաբաժանումների հետ միասին, մյուսը՝ սպա Պիյաշևի դորա-

Տասը, որը նույնպիսի մեծ դժվարութեաններով գրավելով երկու լեռնանցքերը, դուրս էր եկել Բգիբի ավեր:

Ընկեր Պիյաշևը գեներալ Լեսելիձեի տռաջադրանքով խնդիր ուներ երկու զորամասերի Բգիբ դուրս գալու մոմենտից միացնել նրանց գործողութեանները իր ընդհանուր հրամանատարութեան ներքո:

Երբ մենք՝ ընկեր Կուզնեցովն ու ես, մտեցանք Բգիբի ավին կանգնած մտացած միակ փայտաշեն խրճիթին, որ ավելի շուտ բարակի էր նմանվում, ընկեր Պիյաշևը մի քանի սպաների հետ միասին խորհում էր քարտեղի վրա: Մենք փոխադարձաբար ծանոթացանք հետախուզական տվյալներին, այնուհետև սպա Պիյաշևը հայտնեց իր մտահղացումը առաջիկա գործողութեանների մասին:

Բգիբ գետից հյուսիս ընկած բարձունքները, Պսխու բնակավայրը, լեռնային շավիղները և մի քանի լեռնանցքներ թըշնամու ձեռքումն էին: Հակառակորդը մեծ դիմադրութեան էր ցույց տալիս Պսխու գյուղի նախադռանը:

Ընկեր Պիյաշևը խնդիր դրեց մեր առջև թեև անցելով գերմանացիների դիրքերը՝ անցնել նրանց թիկունքը Պսխու գյուղի մոտ, ջախջախել նրան իր այդ դիրքերում և այնուհետև հետապնդելով անցնել կարևոր լեռնանցք—Սանչարոյի հյուսիսային կողմը, կտրել թշնամու թիկունքում միակ շավիղը, ոչնչացնել նրան լեռնանցքում:

Պիյաշևը մեր հրամանատարութեան տակ թողեց մինչ այդ մեզ հետ միասին գործող ստորաբաժանումներից մեկը և լրացուցիչ ականանետային մի մարտկոց: Պիյաշևի շտաբի պաշտպանութեանը նույնպես մեզ վրա էր դրված, որի համար պետք եղավ տրամադրել մեկ հրաձգային ստորաբաժանում:

Հարձակման պլանի համաձայն սեպտեմբերի 5-ի երեկոյան մթնշաղն իջնելուն պես մեր վաշտերից մեկը մտեցրինք Բեշավայի գետաբերանին, որպեսզի դիրքեր բռնեն և մարտական պատրաստութեամբ սպասեն գործողութեաններ սկսելու հրամանին: Վաշտի թիկունքում, Պսխու տանող շավիղի շուրջը, սպասում էին հրաձգային ուրիշ վաշտեր, որ գործողութեաններ սկսելու մոմենտին անմիջական հարձակման պետք է անցնեին այդ շավիղով և ձեղքելով հակառակորդի մարտակարգերը՝ շարժվեին լեռն-

անցքի ուղղութեամբ: Հրաձգային մի ստորաբաժանում ավագ լեյտենանտ Պանցեիչի հրամանատարութեամբ գիշերը մեր մարտակարգերի աջ թևից անցկացրինք Բզիրը՝ խնդիր դնելով նրա առջև շարժվել անտառով հյուսիս-արևելյան ուղղութեամբ և այնուհետև Հաջիկիշ լեռներով ու Բետագա գետի հովտով մտանալ Պսխու գյուղին՝ հարավ-արևելքից գյուղը հանկարծակի գրոհելու համար: Պանցեիչի ստորաբաժանումը թիկունքից իրեն պետք է ապահովեր Չամաշխա լեռնանցքի կողմից, թողնելով մի ջակատ Տիրիշխա հովտից Չամաշխա տանող շավիղը փակելու համար և պարբերաբար կենդանի կապ պահպաներ մեզ հետ:

Մարտական հրամանի կատարմանն անցնելուց առաջ անտառի խորքում ստորաբաժանումների հրամանատարների և քաղաշխատողների կարևոր խորհրդակցութիւնն սկսեցինք, որտեղ մանրամասն քննութեամբ առանք առաջիկա հարձակման հետ կապված խնդիրները: Մեր խնդիրը բարդ էր և առավել կարևոր, քանի որ Պսխու գյուղի և Մանչարո լեռնանցքի գրավումը փաստորեն նշանակում էր կովկասյան լեռնաշղթայի այդ հատվածի ազատագրումը թշնամուց, որի հետևանքով հակառակորդը սեղմվում էր լեռնաշղթայի հյուսիսային ստորոտներին, զրկվելով լեռների կողմից մեզ սպառնալու հնարավորութիւնից:

Անհրաժեշտ եղավ քաղաքական մեծ աշխատանք ծավալել անձնակազմի հետ: Ամենուրեք զրույցներ էին անցկացվում Անդրկովկասի տնտեսական, քաղաքական և ստրատեգիական նշանակութեամբ մասին ՍՍՌՄ-ի համար, կովկասի փառքի, նրա ժողովրդի, հայրենասիրութեամբ, սովետական ժողովուրդների բարոյական-քաղաքական միասնութեամբ, նրանց մարտական տրագիցիաների, մեր հաղթելու հեռանկարների և այլ խնդիրների շուրջը: Յուրաքանչյուր զրույց սերտորեն կապվում էր մարտական խնդրի կատարման, անձնագոհութեամբ զգացմունքի, մահն արհամարհելու հետ: Ոգևորութիւնն այնքան բարձր էր, որ կարմիր բանակայիններն իրար հետ փոխանակելով իրենց մըտքերը՝ հաճախ կրկնում էին. «Էլավ է մեռնիլ հերոսի մահով, քան թե ապրել վախկոտի նման»:

Ինչպե՞րն այնպես դասավորվեցին, որ բացի ավագ լեյտենանտ Պանցեիչի ստորաբաժանումից, մյուս ստորաբաժանումներին մարտական գործողութիւններ վարելու անմիջական խըն-

դիր չդրվեց: Երկու օր շարունակ նրանք հանգստանում էին: Այդ ստորաբաժանումների միայն մի մասը պաշտպանության մարտական ծառայություն էին կրում:

Գիշերը հետախուզական մի ջոկատ ավագ լեյտենանտ Բեսսոնովի ղեկավարությամբ խնդիր ստացավ հետախուզել մարտակարգերի ձախ թևի ուղղությամբ Բզիր գետի ընթացքին դուգահեռ գետի արևմուտք տանող շավիղները: Բեսսոնովը կատարելով խնդիրը՝ լուսադեմին իրեն հանձնած ջոկատով քողարկվել էր Բզիրի ձախ ափի լեռան անտառածածկ լանջին: Բավյու գետի գետաբերանի մոտ, ուր թափվում է նա՝ Բզիրը, գերմանացիները օգտագործելով գերիներ ուժը, գերաններ էին կենտրոնացրել և գետանց էին կառուցում: Նրանք, ըստ երևույթին, մտադիր էին անցնել մեր ձախ թևը՝ թիկունքից մեզ հարվածելու կամ թե հարձակումը խափանելու համար:

Գերի կարմիրբանակայինները գրեթե մերկ մտել էին ջուրը և հարմարեցնում էին գերանները, իսկ գերմանական դինավորները ճյուղեր էին փռում կամուրջի վրա նրա լայնությամբ: Մի քանի ավտոմատավորներ պառկած Բզիրի աջ ափին՝ հսկում էին գերիներին:

Այդ բոլորը կատարվում էր ավագ լեյտենանտ Բեսսոնովի և նրա հետախուզական ջոկատի աչքերի առջև, սակայն նրանց չէին նկատում գերմանացիները: Հետախուզյունները ցանկացել էին կրակ բաց անել, բայց Բեսսոնովը խիստ պատվիրել էր նրանց՝ չհամարձակվել առանց հրամանի: Նրանք աչքերը հառած կամուրջին՝ զուսպ պառկել էին, պատրաստ պահելով զենքերը և երբեմն դառնում էին գետի Բեսսոնովը՝ սպասելով ազդանշանի:

Կամուրջը պատրաստ էր: Գերիները կամաց-կամաց ամբողջությամբ եկան, իսկ գերմանական մի վաշտ դուրս գալով անտառից՝ սկսեց անցնել կամուրջով գետի Բզիրի ձախ ափը:

Կարմիրբանակայինները սրտատրոփ սպասում էին հրամանի: Բեսսոնովը աննշան չափով բարձրացրեց ձախ ձեռքը և վճռաբար իջեցրեց: Սկսվեց համազարկը: Հիտլերականների մեջ իրարանցում սկսվեց: Նրանք հանկարծակիի գալով՝ չկարողացան իսկույն հասկանալ, թե որտեղից է համազարկը: Քառասուն հիտլերականներ ընկան Բզիրում և նրա ափին, մյուսները կտ փախան գետի անտառը:

Սեպտեմբերի 7-ին լուր ստացվեց, որ գերմանական մի զորամաս արևելքից, Մախուրչա լեռան ուղղութեամբ շարժվում է դեպի հարավ-արևմուտք՝ խնդիր ունենալով թևանցել մեզ աջ կողմից և սպառնալ մեր թիկունքին: Մենք անմիջապես մի ստորաբաժանում ուղարկեցինք հանդիպելու. թշնամուն: Հարկ եղավ նաև ստուգել պահակային պոստերը և պաշտպանութեան ծառայութեանը:

Մախարչայի ուղղութեամբ ուղարկած ստորաբաժանումը կազմ ու պատրաստ սպասում էր հակառակորդին, բայց վերջինս չէր երևացել:

Երկու օր Պանցևիչի ստորաբաժանումից լուր չկար, իսկ նրանց սննդամթերքները վերջանալու վրա էին: Պարզվեց, որ գումարտակի կապավորները կորցնելով ուղղութեանը՝ ընկել են հարևան զորամասերը և մինչև մեզ հասան, նրանց տված տեղեկութեանները կորցրել էին իրենց նշանակութեանը: Ընկեր կուզանեցովը նորից կապավորներ ուղարկեց Պանցևիչի ստորաբաժանումից լուր բերելու համար:

Նրա վիճակը մեզ անչափ անհանդատացնում էր: Սպասել մինչև կվերադառնային կապավորները, ուշ կլինեիր, և ո՞վ գիտի ինչ կարող էր պատահել նրանց հետ, եթե գումարտակը անապահով զիջվածի հանդիպեր:

Անցած երկու օրերի ընթացքում հետախուզութեան կատարելով, բազմաթիվ տեղեկութեաններ էինք ստացել թշնամումատադրութեանների մասին և սպառնացող վտանգը կանխելու նպատակով բռնել էինք լեռնային բազմաթիվ շավիղներն ու թշնամում մուտքի համար հնարավոր կետերը վաշտերով ու դասակներով: Մեր տրամադրութեան տակ քիչ ուժեր էին մնացել: Միայն այդ օրը երևկոյան, Պիյաշևի հրամանով, մեր հրամանատարութեանը ենթարկվեց մինչ այդ ռեպերվում գտնվող մի զորամաս:

Որոշեցինք գիշերը շարժվել ձախ թևով և հարձակում սկսել Դզիբնա և Ախդերե հովիտներով դեպի հյուսիս Պսխու գյուղի վրա, գրավել այն և վճռական գործողութեաններով օգնել Պանցևիչին՝ դուրս գալու հնարավոր ծանր վիճակից:

Պսխու գյուղի ուղղութեամբ մարտակարգ ընդունած մեր վաշտը և նրա թիկունքում գտնվող ստորաբաժանումները լուսադեմին հարձակման անցան մեր հրամանատարութեանը տրամա-

գրված ստորաբաժանումների հետ միասին: Հարձակման հենց սկզբից որոշ հաջողութուններ ունեցան. ստորաբաժանումները հաջողութեամբ անցան Բզիբ գետը և մարտերով մտան Դամբխա, Դզիբնա և Ախգերե հովիտները: Թեև ավագ լեյտենանտ Բեսսոնովը վիրավորվեց, բայց նրա հետախուզական դասակը կարևոր դերք գրավեց: Բավյու գետի աջ ափին հրամանատարական բարձունքը գրավելով փակեց թշնամու ճանապարհը Լակորոզի-Տաու լեռան կողմից և անվտանգ դարձրեց մեր ձախ թևը:

Արևածագին հասանք ավերված Սերեբրյանի խուտորը, այնտեղ դիտման հարմար կետ ընտրեցինք մեզ համար, շարունակելով հարձակումը դեպի հյուսիս:

\* \* \*

Պանցեիչի ստորաբաժանումը հասնելով Պսխու գյուղից մոտ մեկ կիլոմետր հարավ-արևելք, հանդիպել էր հակառակորդի հանկարծակի կրակային հարձակմանը և իսկույն չկողմնորոշվելով ու որոշ կորուստներ տալով պառկել էր՝ կորուստներից խուսափելու և թշնամու դիրքերը որոշելու համար: Ավագ լեյտենանտ Պանցեիչը և ղինվորական կոմիսար ավագ քաղղեկ Վալենտինը ցուցաբերել էին անփորձութուն, չէին հետախուզել ճանապարհն ըստ ամենայնի: Պանցեիչը մի պահ շփոթվել էր հանկարծակի համազարկից: Լավեց կոմիսար Վալենտինի ձայնը.

— Հայրենիքի պատվի համար, առաջ...

Կոմիսարի կոչին հաջորդեց սուսական ահարկու ուռան:

Դասակները դաժան մարտերով խցկվում էին առաջ որը սողալով, որը կռվեկռու, որը կարճ ցատկումներով: Երկու կողմերից էլ գնդացրային, ավտոմատային և հրացանային գնդակների կարկուտ էր տեղում: Սկսվեց կատաղի մարտ, որ տեղացող գնդակների տարափի տակ տեղ-տեղ սվինամարտի էր փոխվում: Պանցեիչը կռվեկռու առաջ էր անցնում և հրաման էր տալիս արագ ու վճռաբար գործելու համար: Աջակողմյան վաշտի գիմացից, բլրակի վրա ամբողջած թշնամին գնդակոծում էր այդ վաշտին, խափանում նրա առաջխաղացումը:

Այդ պահին Պսխու գյուղի վրա երևացին սովետական յոթ ամբակոծիչներ և ուռմբեր նետեցին:

— Առանջ, դյուցազուհիներ, Հայրենիքը ձեզ հերոսութեան է  
կանչում: Համարձակ առանջ հանուն Հայրենիքի և Ստալինի,—  
միախառնվեցին վաշտի հրամանատար Սոխանի և քաղղեկ Մի-  
րաքյանի կոչերը:

Նորից կրկնվեց ուռան: Սովետական ինքնաթիռների երե-  
վալը ոգևորեց մարտիկներին: Լեյտենանտ Սոխանը ձախից թե-  
վանցում էր բլրակը, երբ ավագ քաղղեկ Միրաքյանը հերթային  
կրակ բացելով ավտոմատից՝ լիկվիդացրեց թշնամու գնդացրային  
կեսը և ամբողջ ուժով գոռաց բլրակի գլխից.

— Մահ ֆաշիստներին, առանջ...

Սկսվեց գերմանացիների նահանջը մարտական պաշտպա-  
նութեան դիրքերից: Գուժարտակը կրնկակոխ հետապնդում էր  
հակառակորդին ոչ ընդարձակ, բայց գրեթե բաց հովտում: Թշնա-  
մին պաշտպանութեան հիմնական գիծ ուներ հենց գյուղի հա-  
րավային ծայրում և ցանկանում էր բաց հովտում կրակի տակ  
առնել և ոչնչացնել մեր ստորաբաժանումը:

Հակառակորդի հիմնական դիրքերին Պանցեիչի ստորաբա-  
ժանումներն ընդհուպ մոտեցան առանց մեծ կորուստների, որով-  
հետև նրանք ոչ միայն չգանդաղեցրին հետապնդումը, այլև հիտ-  
լերականների դիրքերին հասան նրանց մարտական պաշտպա-  
նութեան դիրքերից նահանջող վաշտի հետ գրեթե մեկտեղ կրճն-  
կակոխ:

Բայց չնայած դրան՝ մարտիկները չկարողացան անմիջա-  
պես խցկվել գերմանացիների մարտակարգերը: Հակառակորդի  
դիմադրութունն ուժեղ էր, իսկ դիրքերը հարմար: Հիտլերա-  
կանների պաշտպանութեան դիրքերն անցնում էին գյուղի ծայ-  
րի տներով և նրանց միջև ընկած տարածութուններով, որտեղ  
նախօրոք խրամատավորվել էին: Նրանց գնդացիները մեծ մա-  
սամբ գործում էին տներում հարմարեցրած դիրքերից, նրանց  
խափանումը գնդակոծութեամբ նվազ մատչելի էր, իսկ մեր ստո-  
րաբաժանումների ընդհուպ մոտենալը նրանց դիրքերին սահմա-  
նափակվում էր սեփական ականանետային ստորաբաժանման  
գործողութեամբ: Պանցեիչի ստորաբաժանումները ստիպված էին  
պառկել, չնայած մարտը առավել բորբոքվում էր, և կորուստներ  
էին կրում գրոհելու փորձերից: Դրութունը կրիտիկական էր,  
թշնամու քթի տակ, գրեթե բաց վայրում երկար մնալը միայն

մահ էր խոստանում նրանց: Այդ հասկանում էին բոլորը: Կատաղած թշնամու հարվածների տակ ստորաբաժանումների գրոհը կրկնվում էր անընդհատ, սովետական մարտիկները համարձակ կերպով կրկնում էին գրոհները:

Առանձին հերոսությամբ էր գործում աջակողմյան վաշտը լեյտենանտ Սոխանի և ավագ քաղղեկ Միրաքյանի հրամանատարությամբ: Վերջապես այդ վաշտը խցկվում է հիտլերականների մարտակարգերը:

Ավագ քաղղեկ Հ. Միրաքյանը մի քանի կարմիրբանակայիներին հետ միասին առաջինը ներխուժեց թշնամու մարտակարգերը, պրավեց մի խրճիթ և, ամրանալով, խափանեց թշնամու մոտիկ կրակակետերի գործողությունները: Մի երիտասարդ նիհար կարմիրբանակային, հետապնդելով փախչող հիտլերականին, նկատեց, որ մոտիկ պատուհանից, որի ուղղությամբ փախչում էր հիտլերականը, գնդացրային կրակի են պատրաստվում:

Դժվար է ըստ ամենայնի նկարագրել կարմիրբանակային Ստադնիկի սխրագործական այդ քայլը:

Երբ հիտլերականը ցատկում էր պատուհանից ներս, Ստադնիկը կայծակնային արագությամբ սվինի հարվածով գլորեց գերմանացուն և ցատկելով նրա վրա, մի ակնթարթում սվինահար արեց երկու գնդացրորդներին: Մենակ լինելով այդ չորս պատերի մեջ, Ստադնիկը զննում էր շուրջը: Նա նկատեց, որ ոչ հեռու խրամատից գնդացրային կրակ է տեղում մերոնց վրա, և ուղիղ նշանառությամբ մեջքի վրա շուռ տվեց գնդացրորդին: Լեյտենանտ Սոխանի վաշտի հաջողությունը վճռական նշանակություն ունեցավ Պսխուի ճակատամարտի համար: Ստորաբաժանումները սկսեցին ջախջախել հիտլերականներին նրանց իսկ մարտակարգերում:

Գյուղի հարավից, որտեղ մենք էինք գործում, վճռական հարձակումն սկսվեց մեր ինքնաթիռների երևալուն զուգընթաց: Մենք արդեն լսում էինք գյուղի հարավ-արևելյան մասում տեղի ունեցող մարտը և համոզված լինելով, որ գործողը Պանցևիչի ստորաբաժանումն է, շտապում էինք, որքան հնարավոր է, շուտ մտնել Պսխու, օգնելու համար գումարտակին: Սակայն ստացվեց հակառակը՝ Պանցևիչի մարտիկների հաջողությունը ստիպեց մեր գիմաց գտնվող թշնամու ստորաբաժանումներին

փախուստի դիմել, և երբ մենք մտանք Պսխու, Պանցեիչը կար-  
ժիր դրոշ էր բարձրացրել գյուղի վրա: Հրամանատար Պանցեիչը,  
կոմիսար Վալենտինը և նրանց ստորաբաժանման անձնակազմը  
հրամանատարութեան շնորհավորանքին արժանացան:

Սպա Պիյաշկը դեռ չէր եկել: Մեր հրամանով Պանցեի-  
չը շարունակեց հետապնդել նահանջող թշնամուն Սանչարոյի  
ուղղութեամբ, իսկ մյուս զորամասը՝ Չամաշխայի ուղղութեամբ:

Պսխու մտնելիս բոլորիս ուշադրութեամբը գրավեց գերու-  
թյունից ազատված մի կարմիրբանակային: Նա կորցրել էր  
մարդկային տեսքը. շիճան աչքան էր բարակել, որ գլուխն  
ուղիղ չէր կանգնում պարանոցի վրա: Նրա վզին խոցվածքներ  
կային, դեմքը մոխրագույն էր, տեղ-տեղ մուգ կապույտ բծերով:  
Սեղճը հազիվ էր ոտքի վրա կանգնում, նա մաքառում էր մահ-  
վան դեմ: Նրան խրճիթ տարանք, զննեցինք մարմինը. սարսա-  
փելի հյուսված էր, մաշկի տակ ցցվել էին ոսկրները, իսկ  
մաշկը կապույտ էր ամբողջապես: Նա ոչինչ չէր ասում, միայն  
հուսահատական հայացքը հառել էր մեզ, լուռ նայում էր, օրորելով  
գլուխը: Երկրորդ օրը նա սկսեց կցկտուր խոսել. «մերոնք են...  
շուտ գայիք, ի՜նչ կլինենք... մարմինս կրծեց ավագը (староста)  
շամփուրով ծակեց...»: Նրան բուժօգնութեան ցույց տրվեց:

Մայրամուտից առաջ սովետական մի խումբ ինքնաթիռ-  
ներ նորից երևացին հորիզոնում և գրոհեցին Պսխուից — Սան-  
չարո հիտլերականների նահանջի շավիղը, թույլ չտալով նրանց  
ամբանալ լեռնալանջերին:

\* \* \*

Պսխու գյուղի ազատագրումն տակտիկական կարևոր նշա-  
նակութեամբ ունեւր մեզ համար: Լեռներում նա մի տեսակ հան-  
գուցակետ է, որտեղ խաչաձևվում են լեռնային մի քանի շա-  
վիղներ և իրար հետ կապում լեռնանցքները: Այդ շավիղներն  
արդեն գտնվում էին մեր վերահսկողութեան տակ:

Գերմանական զորամասերի համար Պսխուն և այդ շավիղ-  
ները կորցնելը նշանակում էր զրկվել մեր մարտակարգերը հետա-  
խուզելու հնարավորութեանից, կորցնել լեռներում առանձին  
առանձին գործող ստորաբաժանումների միջև անմիջական կեն-  
դանի կապը, և, որ կարևոր է, գործող ստորաբաժանումները

մյուսներին հաշիւին ուժեղացնելու համար նրանք ստիպված էին տասնյակ կիրումեարելով լեռնային դժվար պայմաններում փոխադրել նրանց լեռնաշղթայի հյուսիսային ստորոտը և նորից բարձրացնել դեպի լեռնանցքները:

Այսպիսով ֆաշիստական զորամասերը զրկվեցին շատ թեքիչ արագ վերախմբավորվելու և մաներներ կատարելու հնարավորութիւններից, իսկ մեր ստորաբաժանումների կրկնվող գրոհները առավել դժվարացնում և խափանում էին նրանց մտադրութիւնների իրականացումը:

Սակայն գրանով չի սահմանափակվում Պսխու գյուղի ադատագրման նշանակութիւնը մեր զորամասի համար, նա հնարավորութիւն տվեց բարելավելու մարտական գործողութիւններ վարելու հետ կապված մի քանի կարևոր գործեր:

Թեպետ դերմանական զորամասերը դեռևս շարունակում էին իրենց ձեռքում պահել լեռնաշղթայի հյուսիսային կողմից Սանչարո և նրան մոտիկ որոշ լեռնանցքներ միմյանց միացնող եռնային շաղիղները, այնուամենայնիւ մնացել էին լեռան մերկ պարանոցին կառչած և ըստ էութեան ոչնչով չէին կարողանում օգնել սեփական զորքերի գործողութիւններին իրենցից ոչ հեռու հատվածներում:

Ճանապարհների բացակայութիւնը լեռներում դժվարացնում է զորամասերի մատակարարման գործը, սահմանափակում երկարատև գործողութիւններ վարելու հնարավորութիւնը: Որքան էլ մենք մոբիլացրինք բեռնատար գրաստներ, այնուամենայնիւ մատակարարման հարցը ըստ ամենայնի չլուծվեց, պարենը և ռազմամթերքը ժամանակին չէր ստացվում: Երբեմն ստիպված էինք լինում չափավորել ռազմամթերքի ծախսումը, հակառակ դեպքում վտանգ էր սպասվում վճռական և անակնկալ մոմենտներին: Նույնը կատարում էինք պարենի հարցում: Քիչ չէր պատահում, երբ օրվա պարենի մի մասը խնայվում էր, որովհետև հաջորդ օրվա համար պարեն հասցնելու շանսերը քիչ էին: Իսկ անձնակազմը բնական դժվար պայմաններում թերասնվելուց նեղվում էր: Առաջ շարժվելով հեռանում էինք բազայից, առավել դժվարացնում մատակարարումը: Իսկ մատակարարման բազան մոտեցնելը հնարավոր չէր: Սեփական ուժերով կազմակերպելով մատակարարումը, ստորաբաժանումներն ստիպ-

ված էին լինում մարդկանց մի մասին կտրել իրենց անմիջական  
պորժից և ուղարկել թիկունք: Գործող ստորաբաժանումները  
դրա հետևանքով երբեմն գրկվում էին հանգստանալու հնարա-  
վորությունից: Այս բոլորը վերջին հաշվով կարող էր նվազե-  
ցնել նրանց մարտունակությունը:

Պսխու գյուղի մոտ կա բավականաչափ մեծ և հարթ ըն-  
կած տարածություն, որը, թեև ոչ մատչելի հատկապես վերջին  
տիպերի արագընթաց ինքնաթիռների համար, այնուամենայ-  
նիվ միանգամայն մատչելի էր «Մ-2» ինքնաթիռների համար,  
որոնք հենց առաջին օրվանից օրական մի քանի ունյա էին կա-  
տարում մատակարարման բազաներից: Այսպիսով վերջնականա-  
պես լուծվեց մատակարարման պրոբլեմը, ստեղծվեց մատակա-  
րարման մոտիկ և հարմար բազա: Այլևս դորամասերը ոչ մի կա-  
րիք չէին զգում ոչ զինվածության, ոչ զինանյութերի և ոչ էլ  
պարենի: Իսկ մատակարարման նոր բաղաձից մինչև լեռնանցք-  
ներն ընկած տարածությունը մեծ չէր, և համեմատաբար հար-  
մար ու գյուղին էր ճանապարհը:

Պսխու գյուղում մատակարարման բազա կազմակերպելով՝  
բանակի մատակարարման օրգաններն իրենք էին հոգում դորա-  
մասերի ապահովման մասին: Ստորաբաժանումները հնարավոր-  
ություն ստացան անցնել անմիջական մարտական խնդիրների  
կատարման: Դրա շնորհիվ կարգավորվեց նաև ստորաբաժանումնե-  
րի հանգստի կազմակերպման գործը:

Պատերազմում կարևոր դեր է խաղում կապը: Սկզբում վե-  
րադաս հրամանատարության հետ հեռախոսային կապ չունեինք,  
իսկ ռադիոհաղորդիչները չէին բավարարում կապի բոլոր պա-  
հանջները և, բացի դրանից, բնական ու կլիմայական պայման-  
ները ինչպես նաև բավականաչափ հեռու տարածությունը, հա-  
ճախ հնարավորություն չէին տալիս ուղած ժամանակը կապվել  
հրամանատարության հետ: Սկզբնական շրջանում մի քանի օր  
մնացինք առանց հեռախոսային կապի: Կենդանի կապը դժվար  
էր և գրեթե էֆեկտից զուրկ: Երբեմն անտեղյակ էինք մնում  
ռազմաճակատի մյուս հատվածներում տեղի ունեցող անցու-  
ղարձին:

Հետագայում կարգավորվեց հեռախոսային կապը վերադաս  
հրամանատարության հետ, իսկ ինքնաթիռների աշխատանքը

այնչափ դյուրացրեց մեր կենդանի կապը, նպաստեց օպերատիվ զեկավարութեան և օգնութեան բարելավմանը:

Պատերազմը առանց կորուստների չի լինում: Վիրավորների տեղավորման և բժշկական օգնութեան ցույց տալու հարցը հրամանատարութեան ամենաառաջնակարգ խնդիրներից մեկն է: Ճանապարհների բացակայութեանը և մարտական գործողութեաններին հեռավորութեանը զրկում են զորամասերին վիրավորներին ժամանակին հոսպիտալներ հասցնելու հնարավորութեանից, իսկ լեռներում ուրիշ բնակավայրեր չկային: Դա կարող էր պատճառ դառնալ չարդարացված կորուստների: Այդ հատվածում Պսխուն միակ հարմար բնակավայրն էր լեռներում հոսպիտալ կազմակերպելու համար: Այսպիսով բարեհաջող կերպով լուծվեցին նաև սանիտարական ծառայութեան հետ կապված կարևոր հարցերը:

### ՄԱՐՏԱԿԱՐԳԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄԸ

Հետախուզութեան տվյալներն ապացուցում էին, որ հիտլերյան Գերմանիան Սովետական Միութեան դեմ պատերազմ սկսելով՝ կանխորոք նախապատրաստել էր հատուկ զորամասեր լեռնային պայմաններում պատերազմական գործողութեաններ վարելու համար: Այն դիվիզիան, որի հետ մենք անմիջական բախում ունեցանք Կովկասյան լեռներում, սկսած 1940 թվականից երկու տարի անընդհատ սովորել ու վարժվել էր լեռներում Հյուսիսային Իտալիայում և Կարպատներում: Դա գերմանական 101-րդ ալպինիստական դիվիզիան էր, որ հյուսիսային Իտալիայից փոխադրվել էր Բեռլին և մի քանի օրից հետո, 1942 թ. ամառը, շտապ փոխադրվել էր Հյուսիսային Կովկաս՝ Կովկասյան լեռները ներխուժելու համար:

Հիտլերյան այդ դիվիզիայի խնդիրն էր՝ ներխուժել Անգրկովկաս հյուսիսից, լեռնաշղթայի կողմից: Նրա գործողութեան ուղին ընկնում էր Մեծ Լաբա գետի հոսանքին հակառակ, դեպի Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի գագաթները, ուր անցնում էին լեռնային շավիղներ՝ Աջափշը, Սանչարո, Ալաշտրախու, Չամաշխա և Ցեզերկար լեռնանցքներով: Այնուհետև ձեռնառու դիրքեր գրավելով՝ նա պետք է շարժվեր դեպի հարավ,

տիրանար Գուգաուտիի, Աչալչար, Դոու լեռնանցքներին և ան-  
սպասելի հարվածով դուրս գար Սեծովյան արևելյան ափերը  
Սուխուճիի և Գուգաուտիի շրջաններում:

Հիտլերյան 101-րդ ալպինիստական դիվիզիան միայնակ  
չէր գործում, նրանից արևմուտք և արևելք գործում էին մի  
քանի դիվիզիաներ, իրենց գլխավոր հարվածներն ուղղելով Տու-  
ապսեի և լեռնանցքների ուղղութեամբ:

Դիվիզիայի անձնակազմը բավականաչափ ընտրված էր. նա  
կազմված էր հիտլերյան գաղափարներով թունավորված, նվա-  
ճողական տենչով արբած, Ֆիզիկապես առողջ և լեռներում  
մարդված հիտլերյան երիտասարդ-մարդակերներից: Նրանց մեջ  
կային մեծ թվով ալպինիստներ ու տուրիստներ:

Թե ինչպիսի տենդով էին հիտլերականները նախապատ-  
րաստվել լեռնային պայմաններում պատերազմելու համար  
երևում էր նաև հիտլերյան այդ դիվիզիայի անձնակազմի գին-  
վածութունից և նույնիսկ հանդերձանքից: Զինվածութունը  
առավելապես թեթև էր, մատչելի լեռնային պայմաններում գոր-  
ծադրելու համար: Զորամասերի անձնակազմի հիմնական մասը  
զինված էր ավտոմատներով և մնայալերական հրացաններով: Ու-  
նեին մեծ քանակութեամբ գնդացիներ, ինչպես նաև ականա-  
նետներ: Անձնակազմն անխտիր մատակարարվում էր մեծ քա-  
նակութեամբ նռնակներով: Գնդակները բացառապես պայթու-  
ցիկ էին, որ անգամ բարակ ճյուղերին զարնվելով պայթում  
էին, բեկորներ տալիս և կրկնակի աղմուկ տարածում, այնպես  
որ ուղղակի մոտիկից կրակելու տպավորութուն էր թողնում:  
Այդ զորամասերի անձնակազմն ուներ թեթև հանդերձանք,  
առավել կարճ և տաք վերնազգեստով: Նրանց կոշիկները  
տուրիստական տիպի էին: Մարտերի ընթացքում մեր ձեռք  
բերած տրոֆեյների թվում կային նաև այնպիսի իրեր, որոն-  
ցով սովորաբար մատակարարվում են ալպինիստները շարժվելու  
համար նվազ մատչելի վայրերն անցնելու համար, որ նույնպես  
վկայում էին նրանց հատուկ նախապատրաստվածութեան մասին:

Ինչպես ցույց էին տալիս մեր հետախուզութեան տվյալ-  
ները և գերի վերցրած հիտլերականների ցուցմունքները, գեր-  
մանական Ֆաշիստները բավականաչափ երկար ժամանակ աշխա-  
տել էին հետախուզական տվյալներ հավաքել կովկասյան լեռնե-

րի մասին իրենց այդ ավանտյուրիստական նպատակների համար:

Հենց առաջին մարտերից հետո թաքստոցներից դուրս եկած սովետական մարդիկ հանդիպում էին մեզ և որոշ տեղեկություններ հայտնում հակառակորդի մասին: Իրանք մեծ մասամբ այնպիսի մարդիկ էին, որոնք խուսափելով հիտլերականների գաղանային ճիրաններն ընկնելուց, թողիլ էին սեփական ընակավայրերն ու ապաստան գտնելով լեռների ու անտառների թաքստոցներում, սպասում էին հարմար մոմենտի, որ անցնեն մարտակարգերի շրջանը և փրկվեն կործանումից: Մեր հաջողությունները արագացնում էին նրանց իղձերի կատարումը: Նրանց թվում կային հիտլերյան դերությունից խույս տված գինվորներ, ինչպես նաև այնպիսիները, որոնք փախել էին հիտլերյան մահացու ճամբարներից և ճակատային դիմն անցնելու համար նպաստավոր ճանապարհ ընտրել լեռները: Նրանց թիվը մեծ չէր, սակայն տված տեղեկությունները, թեև սահմանափակ, այնուամենայնիվ կարևորություն էին ներկայացնում:

Պետք է նկատեն, որ անտառում թաքնվածների մեծ մասի հաղորդումները թշնամու ուժերի և թիկունքի դրության մասին չափազանց կցկաուր էին և անբավարար, քանի որ խույս տալով հիտլերյան ավազակախմբերից, նրանք չէին կարողացել սեփական աչքերով տեսնել այն, ինչ կատարում էին հիտլերականները Հյուսիսային կովկասում և լեռնաշղթայի հյուսիսային կողմում:

Այդ պատճառով էլ նրանց տված տեղեկությունները երբեմն հակասական էին և նվազ արժեքավոր: Այնուամենայնիվ ոմանք կարևոր տեղեկություններ հաղորդեցին մեզ: Նրանք պատմեցին այն ամենը, ինչ տեսել և զգացել էին սեփական կաշվի վրա: Գերմանական 101-րդ ալպինիստական դիվիզիայի կազմի, գինվածության և ուժերի տեղաբաշխման մասին մեզ հետաքրքրական տեղեկություններ պատմեցին նրանք, ովքեր փախել էին այդ դիվիզիայի թիկունքում ընկած տեղերից, լրացնելով և հաստատելով մեր ձեռքի տակ եղած հետախուզական տվյալները գերմանական դիվիզիայի մասին:

Իրենց թիկունքում գերմանական հափշտակիչները տեղական ընակիչներին զենքի ուժով ստիպում էին սեփական միջոցներով և շալակով դիմամթերք և պարեն փոխադրել լեռներում:

գործող գործածասերի համար, նրանց վրա նշանակելով վերահսկող ավտոմատավորների ջոկատներ:

Ուրովհետև լեռնաշղթայի հյուսիսային ստորոտներին կից ընկած լանջերը և նրանց վրայով անցնող ուղիները համեմատաբար մատչելի են անխվավոր և բեռնատար տրանսպորտի համար, այդ պատճառով էլ հիտլերականները հնարավորութուն ունենին մատակարարման կետերը բավականաչափ մոտեցնելու գործող գործածասերին:

Չննքի սպառնալիքով տանջելով ժամանակավորապես օկուպացված շրջանների բնակիչներին և ռազմագերիներին՝ հիտլերականները ճգնուժ էին ամեն կերպ պահպանել իրենց գործածասերի և ստորաբաժանուժների մարտունակութունը: Քանիքանի սովետական մարզիկ արհամարհելով մահը հրաժարվեցին ենթարկվել թշնամու քմահաճ արարքներին, որի հետևանքով բանտ նետվեցին, կամ դադանարար գնդակահարվեցին:

Գերությունից փախածները մարդու լսողության համար անսովոր դեպքեր էին պատճում գերմանական օկուպանտներին գազանությունների մասին: Հիտլերյան «նոր կարգը» սովորական երևույթ էր դարձրել այդ տմարդի արարքները, մասսայական կախաղանները, ծերերին ու մանուկներին չլնայելը, ծնողների աչքերի առջև մանուկներին խոշտանգելը, մարդկանց խմբերով կենդանի թաղելը հորերում և այլն հիտլերական «նոր կարգի» օրինականացված մասնագիտությունն էր դարձել:

Ֆաշիստները Հյուսիսային Կովկասի մի շարք վայրերում հատուկ ճամբարներ էին կառուցել և փշալարերով պատել: Ճամբար էին տանում ոչ միայն ռազմագերիներին, այլև քաղաքացիական այն բնակիչներին, որոնց հասակը մոտ էր զինապարտների հասակին, կամ թե հանդերձանքը նման էր: Իզուր էին բողոքում զինվորական ծառայություն չտեսած «գերիները», միևնույնն էր, Գերելսը աշխարհին պաշտոնապես հայտարարել էր նրանց գերի լինելու մասին: «Գերելսյան թիվը» այնքան էր չափազանցրած, որ քաղաքացիական մարդկանց գերությամբ անգամ չէր ծածկվում բալանսը: Ասում են, որ հիտլերականները հաշվեհարդարի համար գերության նոր «մոբիլիզացիա» էին կատարում քաղաքացիական բնակչությունից:

Ֆաշիստները ստիպում էին գերիներին կատարել տաժա-

նակիր աշխատանք, աշխատել վաղ առավոտից մինչև երեկո առանց հանգստի. փոքր ինչ հապաղումը վերջանում էր դաժան ծեծերով ու գնդակահառությամբ: Ձուլում էին քաղաշխատողներին ու հրյաններին, ստիպում փորել գետինը, և երբ փոսը պատրաստ էր, գնդակահարում էին: Գերիներին կերակրում էին նեխված կարտոֆիլով, կաղամբով և իրենց թողած կերակրի մնացորդներով: Սովից հյուժելը, տանջալից ծեծը, գնդակահարությունը, պրովոկացիան ու շանտաժը,— սովորական եղանակներ էին ռազմագերիներից տեղեկություններ կորզելու համար: Ռազմագերիներին հարցաքննում էին տմարդի մեթոդներով, բայց հաճախ արդյունքի չէին հասնում: Գերիներից շատ-շատերը տանջալից դրկանքներ կրելուց և վայրենական խոշտանգումներից հետո էլ ոչինչ չէին ասում, ոմանք էլ մտրակների հարվածներից խուսափելու նպատակով կեղծում էին ինչպես հնարավոր էին գրտնում, հաղորդում էին հորինված բաներ, միայն թե զերծ մնան աննկարագրելի տանջանքներից:

Ոմանք պատմում էին, թե ինչպես գեստապոյի սպաները դանազան միջոցներով ճգնում էին ճամբարներում Սովետական Միության տարրեր ազգերի պատկանող ռազմագերիների միջև ատելություն սերմանել և հրել նրանց դեպի դավաճանություն: Բայց այդ մեծ արդյունքի չէր հասցնում գեստապոյի մարդակերներին: Սովետական մարդկանց միմյանց հետ կապող եղբայրությունն անհամեմատ ավելի ուժեղ էր հիտլերյան գեստապոյի ամեն մի մեքենայությունից: Թեև ռազմագերիները դուրկ էին ամեն մի հնարավորությունից, այնուամենայնիվ սովետական մարդիկ Ֆաշիստական լիտիացած մարդակերների ճիգերին դիմադրելու համար բավականաչափ ուժ գտնում էին իրենց մեջ: Նրանք միմյանց օգնում էին հասկանալու գեստապոյի հերթական պրովոկացիաների էությունը և բոլոր միջոցներով մաքառելու նրանց դեմ, ոչինչ չհայտնելու թշնամուն: Պատմում էին, որ գերմանացիները հաճախ ռազմագերիների մի մասին այլևս ամենօրյա հարցաքննությունների չէին ենթարկում և դադարել էին հարցաքննություններից ստացած տեղեկությունների զգալի մասին հավատալ:

Ներխուժելով նոր բնակավայրեր՝ հիտլերականները սովորաբար հայտարարում էին բնակիչներին, թե իրենք «նոր կարգ»

են բերել Գերմանիայից: Այսպես էլ հայտարարվեց Հյուսիսային  
Կովկասում: Սովետական մարդիկ հնարավորութուն ունեին  
հիտլերյան ներխուժման հենց առաջին ընդհանուր տեսնել այդ  
«նոր կարգը», որի մեջ հայելու պես պարզ բացահայտվում էր  
նրա իսկական էությունը: Չկար ոչ մի հրաման, կամ հայտարար-  
ություն, որը չվերջանար գնդակահարություն ու կախաղանի  
սպառնալիքով: Օրեր անգամ չեն անցնում, դորքի հետևից կրնկա-  
կոխ ներխուժում են գետապոյի ջոկատները: Արհավիրքները հաս-  
նում են չտեսնված չափերի: Գետապոյի ջոկատները հիտլերյան  
դորքերի պատճառած ավերներին ավելացնում են նոր զրկանք-  
ներ. նրանք թալանի են մատնում հասարակական և անհատական  
գույքը, մասսայական տեռոր կազմակերպում բնակչության դեմ,  
այրում նրանց ունեցվածքը, աշխատունակ մարդկանց զենքի ու-  
ժով ուղարկում Գերմանիա տաժանակիր աշխատանքի և այլն:  
Այդ դեռ բոլորը չէ. իրար հաջորդում են հրամաններն ու հայ-  
տարարությունները թաքցված պարենը հանձնելու, ակտիվին  
գերմանական իշխանությունների ձեռքը հանձնելու, հասարակաց  
տներ կազմակերպելու, մի խոսքով՝ կատարելու այն ամենը, ինչ  
պահանջում են գերմանացիները: Այդ բոլորի դիմաց «խոստա-  
նում են» ընդհուպ մինչև գնդակահարություն: Եվ նրանք չէին  
վարանում իրենց «խոստումը» կատարելու մեջ:

Երբեմն պատահում էր, որ գետապոյի և ճամբարների դա-  
հիճները նախօրոք թաքստոցներ սահմանելով շրջափակում էին  
բնակավայրերը և պրովոկացիոն նպատակներով թույլատրում  
գերիներից ոմանց, որպեսզի վերջիններս մտնեն բնակավայրերը  
իրենց համար ուտեստ գտնելու: Քաղցից, ծեծից ու տաժանակիր  
աշխատանքից հյուժված գերիները գյուղ մտնելով ուտելիք էին  
խնդրում: Գյուղացիները չէին խնայում բաժին հանել իրենց  
թաքցրած մթերքներից: Եվ այդ բավական էր, որ նոր ալեա  
ավելանար խեղճ բնակիչների զրկանքներին. հիտլերականները  
զենքի ու մորակի ուժով ստիպում էին նրանց հանձնել թաք-  
ցված պարենի թեկուղ և վերջին պատառները:

Ժամանակավորապես օկուպացված գոտում, հիտլերյան հոր-  
դաների թիկունքում, լցվել էր ժողովրդի համբերության բա-  
ժակը: Շատերը թողնում էին հայրենական հարկը և պահվում  
անտառներում:

«Նոր կարգը» Պսխու էր հասել: Պսխուն դուրս չմնաց սոսկա-  
լի աղետից: Հիտլերականները գյուղ մտնելով, սկսեցին ավերել,  
թալանել, առևանգել:

Բնակիչները փախչելով գյուղից՝ պահվեցին անտառներում,  
մեղուները դադարեցին համերգել, դադարեց կովերի բառաչն ան-  
գամ: Գյուղում ոչինչ չմնաց, կոլխոզնիկների անկողինները փուլե-  
ցին խրամատներում, գորգերն ու թանկագին իրերն ուղարկվե-  
ցին թշնամու որջը: Պսխուն ողբաց, դադարեց կոլխոզային  
դվարթ կյանքը, մանուկները դադարեցին քրքջալ, իսկ գեղջկու-  
հիները դուսալ արցունք էին թափում: Մռայլ էլ շուրջը: Գեր-  
մանացիներից ծլկված գերիները և բնակիչները պատմում էին,  
որ Պսխու գյուղում միայն հատ ու կենտ բնակիչներ են մնացել,  
որոնց ժամանակը չի ներել փախչել: Մի միջահասակ կին երե-  
խայի հետ մնացել էր խրճիթում: Երեխան չէր հանգստանում:  
Կինը հուսահատ խնդրում էր մանկանը քնել, խոստանալով, որ  
կովը շուտով կգա և նա կաթ կտանրան: Սակայն նա դժգոհ էր  
իր խոստումից, քանի որ գերմանացիները ոչ մի կով չէին թո-  
ղել գյուղում:

Երեխան շարունակում էր լացը: Տանը բնակվող գերմանա-  
կան սպան հրամայել էր դուրս շարտել մանկանը, բայց կինը  
աղերսելով դիմադրել էր: Սպան նորից էր կրկնել հրամանը և  
մոտենալով վերցրել էր մանկանն ու գաղանաբար դուրս շարտել  
ցեխի մեջ: Մայրը ճշալով փորձել էր օգնել մանկանը և սպայի  
ատրճանակի կրակոցից գլորվել էր շեմքին: Այսպես մայր ու որ-  
դի առհավետ բաժանվեցին մահով. մեկը՝ կիսով չափ թաղվել էր  
ցեխում, մյուսը՝ շեմքի մոտ փուլել գետնին՝ տարածելով թևերը:

Կամակատար հիտլերականները չխնայեցին անգամ ծերե-  
րին: Ով մնացել էր գյուղում, այնպես էլ մնաց հավիտյան, այլևս  
նրանց բաժին արևը չծագեց:

Գտնվեց մեկը, որ համարձակ մնաց գյուղում և իրեն առյու-  
ծի դերում էր զգում: Իսկ դավաճան Վինոգրադովն էր, որ հենց  
օկուպացիայի առաջին օրը գյուղի ավագ կնքվեց:

Պատմում էին, թե ինչպես այդ նենգ դավաճանը գաղանա-  
բար տանջում էր գյուղում մնացած ծերերին և խաբերալուծյամբ  
աշխատում դավաճանական ուղու վրա կանգնեցնել մանուկնե-  
րին: Չէր անցել մի քանի օր, գերմանական զորամասի հրամա-

նատարի և Վինոգրատովի առջև կանգնած էին 11—12 տարեկան երկու մանուկներ: Մայան կեղծ ժպտաց և մոտեցավ, շոյեց նրանց գլուխը, ինչպես իժը կփաթաթվեր որսին, ինչ որ բաներ ասաց և թույլ տվեց, որ դնան:

Մանուկները դուրս եկան խրճիթից աղամա վախեցած: Հետագայում տեղեկություններ ստացանք, որ դավաճանին հաջողվել էր այդ երկու մանուկներին իր ազդեցության տակ առնել, հանձնարարելով սահմանել կոլխոզի նախագահ Արխիպի և նրա հետ միասին անտառում գործող պարտիզանների տեղը:

Սեպտեմբերի 8-ին ինքնաթիռներ երևացին Պսխուէ հորիզոնում: Սովետական յոթ ուժակոծիչներ հանկարծ երևացին օդում և ուղղություն վերցնելով ուղիղ Պսխուէ վրա խոյացան:

Պսխուէն դղրդաց, օրորվեց: Թանձր ծխի հետ միասին երկնակամարը պատեց փոշու մառախուղով: Հիտլերականները մեքենայաբար խաչակնքում էին երեսները: Իսկ գյուղի հարավում տաք մարտեր էին տեղի ունենում:

Դավաճանը հավաքեց ուժերը և դուրս եկավ խրամատից, քայլերն ուղղեց դեպի շտաբ: Նա նկատեց, որ հիտլերականները դուրս էին փախչում գյուղից և շտապում դեպի հյուսիս: Նա հասկացավ... թե՛ տակ առավ վերարկուն ու փախավ գերմանացիների հետ:

Զորքի մի մասը դեռ գյուղից հարավ էր գտնվում, մի խումբ հիտլերականներ հավաքում էին սովետական սավառնակների հունձը և հողով ծածկում խրամատների մեջ: Իսկ քանի՞սը մնացին փլված քների տակ, ոչ ոք չհաշվեց:

Հետախուզության տվյալները, ինչպես նաև մեր ստորաբաժանումների կողմից գերի վերցված հիտլերականների ցուցմունքները վկայում էին, որ նվաճողական տենչերով տարված հիտլերականների շարքերում արդեն ճեղքեր էին գոյացել:

Սովետական հողը սարսուռ էր ստեղծում հիտլերականների համար: Օրը-օրին աճում էր սովետական զորքերի դիմադրությունը, ուժեղանում էին հարվածները ռազմաճակատում, իսկ հիտլերականների թիկունքը ժայթքելու պատրաստի վիճ էր դարձել:

Սեփական կաշվի վրա զգալով սովետական զորքերի հար-

վածներն ուժը՝ հիտլերյան բանակի զինվորներից շատերը ակա-  
մա ստիպված էին խոստովանելու, որ Սովետական բանակը գիտե-  
ղիմագրել, որ նրա մարտիկները առավել տոկուն են և լավ կըռ-  
վողներ: Սակայն սովետական ուժի սարսափն ընդգրկել էր հիտ-  
լերյան բանակի ոչ միայն առանձին զինվորներին, ունտերներ-  
ին, սպաներին ու գեներալներին, այլև ամբողջ զորամասեր:  
Զգացվում էր, որ նվաճողական տենդը լուրջ ճեղքվածքներ է  
ստացել՝ հենց նրանց զորամասերի վիճակից դատելով: Իբրև  
կոնկրետ ապացույց այդ ամենի օրինակ բերենք հենց հիտլեր-  
յան 101-րդ ալպինիստական դիվիզիայի վիճակից:

Թեև հիտլերականները, ինչպես հարկ է ավանտյուրիստներին,  
շարունակում էին հուսալ, որ պատերազմը կվերջանա իրենց  
հաղթանակով, այնուամենայնիվ չէին կարող շատ թե քիչ հան-  
դիստ նայել սեփական վիճակին: Նրանք գրեթե բոլոր կողմերից  
էլ անակնկալ սպառնալիքի էին սպասում: Մեր զորամասի հար-  
ձակման դեմ հիտլերյան այդ դիվիզիան սկզբում միայն մեկ  
գունդ էր պահում և մշտական երկյուղ կրելով լեռնաշղթայի  
տարբեր տեղերից և ուղղություններից, ինչպես նաև թիկունքից,  
իր ուժերի հիմնական մասը տրամադրել էր սեփական թևերի  
(Фланги), թիկունքի պաշտպանությանը և մարտական ապահով-  
ման ծառայություն կրելու համար: Այս հանգամանքը բավակա-  
նաչափ սահմանափակում էր նրանց հնարավորությունները՝ ա-  
վելի մեծ ուժեր կենտրոնացնել մեր զորամասերի դեմ առաջին  
մի քանի մարտերի ընթացքում: Երկյուղը խաղում էր իր հայտնի  
դերը:

Տեղական բնակիչներին, ինչպես նաև անտառներում պատըս-  
պարված մարդկանց վկայությունները հաստատում էին մեր  
տվյալները գերմանական զորամասերի կորուստների մասին:  
Արմավիրից Կովկասյան լեռներով Անդրկովկաս փախչելիս Պլու-  
տա ազգանունով ընտանիքը թաքնվելով անտառներում՝ հաճախ  
դիտել էր երթևեկությունները Պսխու գյուղից դեպի հյուսիս  
տանող շավղով: Պսխու գյուղի վրա մեր գրոհելու օրը նրանք  
թաքնվել էին գյուղից հյուսիս լեռնալանջի անտառում: Նրանց  
դուստր Պլուտա Աննան այդ օրը մի քանի ժամում հաշվել էր  
մոտ 500 գերմանական վիրավորներ, որոնց հիտլերականները  
փոխադրում էին դեպի հյուսիս: Թե որքան էր սպանվածների

Թիվը, դժվար է ասել: Գյուղը ազատագրելուց հետո նրա շրջա-  
կայքում մի քանի գերեզմաններ գտանք, որոնց վրա ցցված  
տախտակներից ու նշումներից դատելով կարելի էր կարծել, որ  
դրանք անհատական գերեզմաններ են, սակայն երբ հետաքրք-  
րության համար կարմիրքանակայինները փորեցին այդ «ան-  
հատական» գերեզմաններից մեկը, նրա մեջ թաղված 13 հիտլե-  
րականներ գտան:

Չնայած նրանց գիրքերի առավելութուններին՝ հիտլերա-  
կանների կորուստները բավականաչափ դերակշռում էին: Այստեղ  
իրենց արժանի բաժինն ունեին սովետական ուժակոծիչները:

Համենայն դեպս մեր պատմաբանները, որոնք զբաղվում են  
Հայրենական մեծ պատերազմի պատմությամբ, իրավունք ունեն  
նշելու, որ «կենսական տարածության» ձգտող հիտլերականնե-  
րից շատ-շատերը հավիտենական տեղ գտան նաև Կովկասյան  
լեռներում՝ իրենց հասակով մեկ:

#### Գ Ո Ւ Դ Ա Ո Ւ Տ Յ Ի Ն Ե Ր Ը

Հենց նոր էինք ներկայացել շտաբի պետին, մեր ուշա-  
դրությունը դրավեց մի բարձրահասակ վայելչակազմ երիտա-  
սարդ, որ խոսում էր հեռախոսով: Նա բարկացկոտ տոնով նա-  
խադգուշացնում էր ինչ-որ մեկին՝ ասելով. «Ահա թե ինչ, եթե  
մինչև հինգ ըոպե մեքենաները պատրաստ չլինեն և դուք չվերց-  
նեք նրանց, ապա ես ինքս ձեզ կվերցնեմ...» և թողեց հեռա-  
խոսափողը:

Գուդաուտցիները չէին ուշացել հոգալ թշնամուն դիմադր-  
ություն ցույց տվող գործասերին օժանդակելու մասին և ինչ-  
պես երևում էր, նրանք մեղնից, զինվորական աշխատողներիցս,  
պակաս պահանջկոտ ու պակաս վճռական չէին:

Երիտասարդը Ներքին գործերի ժողովրդական կոմիտարիա-  
տի Գուդաուտի բաժանմունքի պետ, պետական անվտանգության  
ավագ լեյտենանտ Լոգուան էր, որ մտահոգվել էր տրանսպորտի  
և մեր մարտական գործողության խնդիրը ստացող գործասի  
համար պարեն փոխադրելու հարցերով:

Շրջկոմի քարտուղար ընկ. Կոկայան կարևոր կարգադրու-  
թյուններ էր անում: Շրջանային սովետի գործկոմի նախագահը,  
շրջկոմի մյուս քարտուղարները և էլի մի քանի հոգի անընդհատ

շարժման մեջ էին. նրանք կազմակերպում ու շտապեցնում էին շրջկոմի քարտուղարի կարգադրությունների կատարումը:

Շրջկոմի քարտուղարը կարգադրել էր պարենի պաշար առանձնացնել զորամասի համար, իսկ գյուղերից մորիլացնել բեռնատար գրաստներ կազմել բեռնատար վաշտ, զորամասի հետևից պարեն հասցնելու համար:

Ներքին գործերի ժողովրդական կոմիտարիատի շրջանային բաժանմունքի պետը միջոցներ ձեռնարկեց տրանսպորտը դանազան սարքերով ապահովելու համար:

Բակլանովկա գյուղի ղեկավարները ներկայացան մեղ՝ առաջարկելով իրենց ծառայությունը: Նրանք առանձնացրին Հակոբ անունով մի կոլխոզնիկի, որ քաջ գիտեր լեռնային շավիղները: Կոլխոզնիկ Հակոբը հետախուզական ջոկատի հետ միասին ուղեկցում էր զորամասը, հավասարապես կրելով բոլոր դժվարությունները:

Մցարայի սանիտարական կետը իր անձնակազմով տրամադրվեց մեղ վիրավորներին և հիվանդներին սպասարկելու համար, իսկ զորամասն անցնելուց հետո գյուղի կանայք ներկայացան զորամասի հրամանատարի օգնականին և պատրաստակամություն հայտնեցին օժանդակել մարտիկներին՝ լվանալ անձնակազմի սպիտակեղենը: Մցարան զարձակ մեր մատակարարման բազան, որտեղ կենտրոնացվում էր ստացված պարենը և ազդամթերքը: Անցել էր ընդամենը երկու օր: Մցարայի և Բակլանովկայի ձերերն ու պատանիները էշերին բարձած պարենն ու ազդամթերք էին փոխադրում զորամասի հետևից: Գյուղի աղջիկները օրվա մի մասը անց էին կացնում մեր սանիտարական մասում: Նրանք քույրական ծառայություն էին մատուցում վիրավորներին, օգնում նրանց սպասարկման մեջ, կերակրում, մրգեր ու կաթ բերում, ծխախոտ փաթաթում նրանց համար:

Ով ինչ կարող էր, կատարում էր զորամասի համար և ուղեվորում, որ դժվարությունների ու պակասության մասին չհոգան:

Գուդաուտին դարձել էր փաստորեն զորամասի թիկունքային ստորաբաժանումների նման մի օրգան, մեր մերձավոր թիկունքային բազան: Շրջանի կոլխոզնիկները բավականաչափ երկար տարածության վրա, անօրինակ դժվարին պայմաններում,

անխոնջ կերպով աշխատում էին գործատուի սպասարկման համար:

Սեպտեմբերի 3-ին լեռնային մարշի ժամանակ, երբ գործատու մտնում էր այն բարձունքի ստորոտին, որտեղ նասիսեց առաջին մարտը, մեր տրամադրութեան տակ դրվեց Գուդաուաիի կործանիչ գումարտակի մի շոկատ միլիցիայի կրտսեր լեյտենանտ Կուբադի (հրամանատար) և շրջկոմի ուղեկցող քաժնի վարիչ Սարազվիլու (կոմիսար) ղեկավարութեամբ: Ներքին գործերի ժողովրդական կոմիսարի շրջանային բաժանմունքի պետ ընկ. Լոգուան ուղարկել էր նրանց մեր տրամադրութեան տակ՝ հետախուզական և այլ ծառայութեաններ կատարելու համար:

Կոլխոզնիկ Հակոբը բավականաչափ տխրեց, երբ մենք հաշորդ օրը առաջարկեցինք նրան վերադառնալ գյուղ: Թեև նա խնդրում էր մնալ գնդում, բայց ստիպված էինք վերադարձնել, որովհետև այդ օրերին թեկուզ մեկ աշխատող ձեռքը կոլխոզում մեծ դեր ունեւր: Կործանիչ գումարտակի շոկատը անգնահատելի ծառայութեան մատուցեց Պանցեիչի ստորաբաժանման գործողութեանների ժամանակ: Կործանիչ գումարտակի շոկատից երեք հոգի Պանցեիչի ստորաբաժանումը ճանապարհադուրկ անտառով ու կիրճով, թշնամու համար միանգամայն աննկատելի կերպով դուրս բերին նրա թիկունքը՝ Պսխու գյուղից հարավ-արևելք: Ինքնաճարտական խնդրի կատարման առաջին մասն էր, իսկ երկրորդը կատարեց Պանցեիչի ստորաբաժանումը:

Պսխուն ազատագրված էր: Կործանիչ գումարտակի շոկատից մի խումբ մարտիկներ Իվանյանի ղեկավարութեամբ մեկնեցին ավագ լեյտենանտ Պանցեիչի ստորաբաժանման հետ վիրավորներին մարտի դաշտից դուրս բերելու խնդրով: Աղջիկներն աշխատանքի անցան սանիտարական մասում: Չոկատի մյուս մասը մնաց մեր տրամադրութեան տակ հետախուզութեան ծառայութեան կրելու համար:

Կործանիչ գումարտակի շոկատը օգնում էր մեզ կապ հաստատել հարևանների հետ, վիրավորներին թիկունք փոխադրել, մարտի դաշտում ընկած ընկերների թաղումը կազմակերպել:

Կործանիչ գումարտակի մարտիկները գերազանցապես օգնում էին մեզ հարևան ստորաբաժանումների հետ կենդանի կապ

հաստատելու համար և երբեմն էլ ուղեկցում էին մեր հետախույզ-  
ներին, նրանց ցույց տալիս թշնամու մարտակարգերը և թի-  
կունքը հետախուզելու հարմար տեղերը: Չոկատի հրամանատարն  
ու կոմիսարը գրեթե միշտ անձամբ մասնակցում էին մեր հանձ-  
նարարություններին կատարմանը, մեկնելով կապի և հետախու-  
զական կարգի հրաման ստացած մարտիկներին հետ:

Երբեմն պատահում էր, որ կործանիչ գումարտակի Չոկատի  
ընկերները հանձնարարություններ կատարելու ժամանակ կարե-  
վորություն չէին տալիս այնպիսի մոմենտներին, որոնք, ըստ  
նրանց ըմբռնման, նշանակություն չունեին: Իսկ բացատրվում  
էր ամենից առաջ պատերազմական գործին նրանց անձանոթ լի-  
նելու հանգամանքով: Մարդիկ միատեսակ չեն նկատում այն,  
ինչ ընկած է նրանց ճանապարհին, և միատեսակ չեն ըմ-  
բռնում երևույթները: Առաջին հայացքից «աննշան» թվացող մի  
երևույթի վրա մեկը ուշադրություն չի դարձնում, անգամ մո-  
ռանում է նրա մասին, իսկ մյուսը ոչ միայն ուշադրություն է  
դարձնում նրա վրա, այլև կռահում է ինչ-որ կարևոր բան: Հե-  
տախույզի համար դա կարևոր հանգամանք է, իսկ այդ պակա-  
սում էր նշված ընկերներից ոմանց մոտ, նրանք դժվար էին  
նկատում «մանրուքները» հետախուզական պարտականու թյուն-  
ներ կատարելիս:

Այնուամենայնիվ կործանիչ Չոկատը գնահատելի ծառայու-  
թյուն մատուցեց մեր զորամասի վարած մարտերի ընթացքում:

Պսխու գյուղի կոլխոզի վարչության նախագահ Արխիպը  
գերմանացիների ներխուժման առաջին օրը բնակչության մեծ  
մասը թաքցրեց անտառի խորքերում, տանելով նրանց հետ պա-  
րենի անհրաժեշտ պաշար: Նա փրկեց կոլխոզնիկներին հիտլեր-  
յան ճիվաղների ճանկերից:

Սկզբում Արխիպը մի քանի օր իր փոքրիկ Չոկատով պար-  
տիզանական պայքար էր մղում հիտլերականների դեմ, իսկ հետո  
աշխատում էր գնդապետ Պիյաշևի շտաբում—հետախուզական  
բաժանմունքում: Նա հաճախ էր երևում մեկ այս, մեկ մյուս  
ստորաբաժանումներում և հայտնում հրամանատարներին հետա-  
խուզության տվյալները: Այդ բոլորը չէր. Արխիպը լավագույն  
տնտեսավար էր և մեծ օգնություն էր կազմակերպում զորամա-  
սերի մատակարարման գործում:

Գուղառուտիի աշխատավորները պատվով կատարեցին սովե-  
տական մեծ ժողովրդի մեկ բջիջի պարտքը հայրենիքի առաջ:  
Այդ տեսնում և զգում էին մարտիկները հենց այնտեղ, իրենց  
մարտակարգերի շրջանում:

Կործանիչ գուժարտակի ջոկատը կատարել էր իր պարտա-  
կանությունը և սեպտեմբերի 15-ին հրաման ստացավ վերադառ-  
նալ Գուղառուտի:

### Բ Ա Ր Ձ Ո Ի Ն Ք 1006

Հրամանատար Պիյաշևը վերադասավորեց ուժերը նոր իրադրու-  
թյան համապատասխան: Հետապնդող ստորաբաժանումները մեր  
հրամանով Բեշտաջի և Ախեյի գետաբերաններից բաժանվել էին եր-  
կուս ուղղությամբ: Մինչ այդ մեր հրամանատարությանը ենթարկ-  
ված զորամասը դուրս մնաց մեր իրավասությունից և խնդիր ստա-  
ցավ տիրանալ Չամաշխա լեռնանցքին: Սահմանապահ զորամասը,  
որ այդ ժամանակամիջոցում բավականաչափ ամրացել էր, գոր-  
ծում էր Ալաշտրախու լեռնանցքի ուղղությամբ: Գլխավոր լեռն-  
անցքի ուղղությամբ գործում էինք մենք: Նոր հրամանով ըն-  
կեր կուղնեցովը մնաց Պիյաշևի մոտ, որպես նրա օգնական,  
նրա պարտականությունները գրվեցին ինձ վրա: Տեղեկություն  
ստացվեց, որ հետևակային գալրոցի ստորաբաժանումները մոտե-  
նում են Պեխ կոչվող հարթությանը և խնդիր ունեն ազատա-  
գրել Աջափշ լեռնանցքը:

Մեր ուղին դժվար էր: Սանչարոյի ճանապարհին բնա-  
կան մեծ արգելքներ կային, տեղի բնական դիրքը թշնամու  
համար առավել ձեռնտու էր: Մեր ուղին անցնում էր Ախեյ և  
Բեշտա գետերի արանքում դեպի հյուսիս բարձրացող կոնաձև  
1006 բարձունքի հարավային լանջով, որը կից մի քանի բար-  
ձունքների հետ միասին հրամայողական դիրք էր ամբողջ շրջա-  
կայքի նկատմամբ: Բարձրունքի փեշերից արևելք ընկած էր ուղ-  
ղահայաց դիրքով բարձր ժայռաշարքը մինչև Ալաշտրախու լեռն-  
անցքը, որ անմատչելի էր անպամ փորձված տուրխատների հա-  
մար, իսկ ձախից մեզ անջատում էր Աջափշ լեռնաշղթայից Բեշ-  
տայի ահուկի և զորամաս շարժելու համար անմատչելի անդունդը:  
Մնում էր միակ շավղով դեպի վեր գրոհել թշնամուն, գրավել  
այդ բարձունքները, այնուհետև՝ Սանչարոն:

Մատակարարման հարցը լուծված էր: Պսխուն ազատագրե-  
լուց անմիջապես հետո մենք մի օրում կարգի բերինք նրան-  
մատ ընկած հարթութունը: Սեպտեմբերի 9-ին մի քանի սա-  
վառնակներ պարեն ու զինամթերք իջեցրին այնտեղ, կրկնելով  
իրենց ունյալ մի քանի անգամ: Այդ օրվանից մատակարարման  
հարցը վերջնականապես լուծվեց զորամասերի համար ազմա-  
մթերք ու պարեն էր փոխադրում առավել մոտիկ բազայից:

Հետապնդելով թշնամուն՝ Պանցեիչի ստորաբաժանումը  
լեռան փեշերին հանդիպել էր թշնամու ուժեղ դիմադրությանը  
և առայժմ չէր կարողանում առաջ շարժվել: Որոշեցինք դադարեց-  
նել զորամասի մյուս ստորաբաժանումները շարժումը և հրամա-  
նատարական կետ ընտրել 1006 բարձունքի գագաթից բավակա-  
նաչափ հարավ լեռան լանջին: Որքան էլ դժվար լիներ մեզ  
համար, ստիպված էինք զորամասը լեռնալանջին տարածել ստո-  
րաբաժանումներով:

Որոշեցինք առայժմ դործել միայն ավազ լեյտենանտ Պան-  
ցեիչի ստորաբաժանումով, որովհետև տեղի պայմանները թույլ  
չէին տալիս ծավալել մյուս ստորաբաժանումների գործողու-  
թյունը միաժամանակ:

Կոնաձև լեռը պատած է խիտ անտառով: Բարձունքի գա-  
գաթից բավականաչափ ցած անտառը նոսրանում է, չքանում են  
հաստ բներով ծառերը, նրանց փոխարինում են մանր և ոչ  
բարձր ծառերը, որոնք շրջապատվում են կաղնու և այլ տեսակ-  
ների խիտ թփերով: Տեղ-տեղ չափազանց խիտ դեպի վեր  
ձգվում են մատաղ անտառածասեր, իսկ այնուհետև բնությունը  
չի ներում ծառերի առկայությունը լեռան բարձր գագաթներին:  
Նրանց փոխարինում են լեռնային կլիմային հարմարված խիտ  
թփուտները, որոնք գրեթե փռված են գետնին: Թփուտներին  
հաջորդում են խոտաբույսերի լեռնային տեսակներ, զուրկ լայն-  
տերևներից և գետնից վեր բարձրանալու հնարավորությունից:  
Այնուհետև այդ գոտիները ես դադարում եմ, լեռան գագաթնե-  
րը բնում են լեռնային փխրուն շերտերը:

Պայմանները չնրեցին ինչպես ցանկալի էր ծավալել ան-  
գամ Պանցեիչի ստորաբաժանման գործողությունները: Գործո-  
ղությունները սկսեցինք միայն հետախուզական բնույթի, մինչև  
որ կուսուճնասիրեինք վայրը և թշնամու դիրքերը: Մի ուժեղաց-

ված դասակ ուղարկվեց ձախ թևից հետախուզելու թշնամուն, իսկ երկու ջոկեր էլ միջին հրամանատարների ղեկավարութեամբ խնդիր ստացան տարբեր տեղերից խցկվել թշնամու մարտակարգերը, հետախուզել կրակային կետերը:

Հետախուզութեան արդյունքը մեծ չէր: Թևանց կատարող մեր դասակը որոշ չափով շոշափելով թշնամու մարտակարգերի աջ թևը՝ նկատելի էր դարձրել իր տեղը և կրակի տակ նահանջելով կորցրել էր կողմնորոշումը: Մինչև նրան հաջողվեց կապվել դորամասի շտաբի հետ և հաղորդել հետախուզութեան արդյունքները, դրանք կորցրել էին իրենց արժեքը: Այնուամենայնիվ երկու ջոկերին հաջողվեց սահմանել թշնամու գնդացիների տեղը նրա մարտակարգերի կենտրոնում և ձախ թևում:

Այդ էլ բավական էր, որ մենք գիշերը թշնամու մարտակարգերը խցկվելու փորձ անեինք: Բայց հարկավոր էր խաբել թշնամուն շարունակ, ամեն քայլում, այլ կերպ հնարավոր չէր լիկվիդացնել նրա կրակային կետերը:

Մեզ ներկայացան վաշտի հրամանատար Սարոգովը և քաղդեկ Սարգիսովը: Նրանք խնդրեցին այդ օրը նախատեսվող դործողութուններին իրենց մասնակից դարձնել:

Նրանք խնդիր ստացան հենց այդ ժամին: Ըստ հրամանի Սարոգովն ու Սարգիսովը վերցրին իրենց վաշտից մի դասակ, ուժեղացրին այն մեկ ծանր և երկու թեթև գնդացիներով ու երկու 50 միլիմետրանոց ականանետներով և մութն ընկնելուց առաջ շավդով բարձրացան Պանցևիչի ստորաբաժանման մարտակարգերի շրջանը: Այնտեղից ուղղութուն վերցնելով դեպի ձախ՝ դասակը պետք է անցնեի 1006 բարձունքի հյուսիս-արևմտյան փեշը և անտառից դեռ դուրս չեկած հետախուզեր թշնամու աջ թևի թիկունքը: Այնուհետև դասակը պետք է թեքվեր դեպի աջ, աննկատելի մոտենար թշնամուն նրա աջ թևի թիկունքից և ուղիղ ժամը 4,00-ին գեներալ թուր տեսակներից կրակ բաց աներ նրա դիրքերի վրա: Եթե թշնամին չթողներ իր դիրքերը, այնուամենայնիվ մի պահ կկորցնեի կողմնորոշումը և այնուհետև կրակային ուժերը կուղղեր իր թիկունքը խցկված դասակի դեմ: Հենց այդ էլ հարկավոր էր մեզ: Դասակին հրամայված էր պաշտպանութեան դիրք բռնել և ընդունել մարտը որքան հնարավոր է ակախվութեամբ:

Մենք նկատի ունեինք, որ դասակի այդօրինակ գործողությունը թիկունքից կթուլացներ հիալերականների կրակային ուժը ժամի 4.00-ին նրա դիրքերը խցկվելու խնդիր ստացած վաշտի դեմ, իսկ վերջինս հնարավորություն կունենար դուրս վռնդելու նրանց անառի եզրերից:

Դասակը մեկնելուց առաջ ավագ քաղղեկ Միխայլովը անձնակազմին բացատրեց մարտական խնդիրը: Մայր Յակովենկոյի հետ մենք ուղեկցեցինք դասակին մինչև մեր մարտակարգերի ձախ թևը և ցույց տալով նրա շարժման ուղղությունը, վերադարձանք հրամանատարական կետը:

Հրամանատարական կետում իմ ուշադրությունը դրավեց մի սերժանտ, նա երեսով դարձած դեպի շավղի կողքին կանգնած հաստարուն ծառը՝ ծայրը կեռ դանակով փորագրում էր:



ДОНБАС

М. КОСТРЮКОВ

19— $\frac{11}{9}$ —42г .

—Կարծեմ այսօր ամսի 10-ը պետք է լինի. այդպես չէ՞, ընկեր կոստրյուկով, — հարցրի ես:

—Ճիշտ այդպես, ընկեր կոմիսար... հա, ես ալալինիստ եմ, լեռներում շատ եմ եղել, բայց այս տեղերում առաջին անգամն եմ: Մտածում եմ պատերազմից հետո ընկերներով բարձրանալ կովկասյան լեռները. անպայման կանցնեմ այս ծանոթ շավղով և կհիշեմ պատերազմական այս օրերը...

Սերժանտը մի փոքր շփոթվեց՝ նկատելով, որ այլ բան է պատմում, անմեղ ծիծաղեց ու շարունակեց.

—Այո, ընկեր կոմիսար, այսօր սեպտեմբերի 10-ն է, բայց անտեր ծառի կեղևը շատ է պինդ, դժվար է փորել «0» (զերո) նշանը, գրեցի վաղվա թվով... միևնույն է, վաղը այստեղ կլինենք:

Ես լուռ էի... Սերժանտ կոստրյուկովի տեքստում զերոյի նման նշանը՝ «0» տառը փորագրված էր արդեն երեք անգամ:

Հապա ինչո՞ւ էր նա «0» (զերո) նշանը միայն վերջում փոխա-  
րինել «1»-ով...

— Այո... պատերազմից հետո ընկերներով անցնել այս ճա-  
նապարհը, ամեն տեղ կանգ առնել, պատմել դիպվածները, դժվա-  
րությունները, կռիվը, հիշել վերապրումներով այն, ինչ զգացել  
ենք, տեսել և որպես «իրեղեն ապացույց» ցույց տալ այս փո-  
քազիրը... Պատմական օրեր են, դիպվածներով հարուստ:

— Բայց ի՞նչ կք կարծում, սիրելիս, — դարձա ես կոստրյուկո-  
վին, — եթե մենք այս օրը հարստացնենք քաջության, հերոսու-  
թյան ու հայրենասիրության հուզող փաստերով, և եթե դուք  
ինքներդ մի այգալիսի էպիզոդի հերոսը դառնաք... Ավելի լավ  
չէ՞ր լինի:

— Ես կռվել եմ գերմանացիների դեմ Հարավային ռազմա-  
ճակատում, իմ սնայակերական հրացանով գլորել եմ 41 հիտլե-  
րական, այնուհետև երկու անգամ վիրավորվել եմ... Հըմ... ու-  
ղում էին սպանել ինձ... ես դեռ ցույց կտամ նրանց, վրեժ  
կլուծեմ Դոնբասի համար:

Գիշերն սկսվեց գրոհը: Սարոգովը ու Սարգիսովը չհասած  
թշնամու մարտակարգերի աջ թևին՝ հանդիպել էին ուժեղ կրա-  
կի: Ականի բեկորից ծանր վիրավորվել էր Սարոգովը, իսկ քիչ  
հետո նաև Սարգիսովը: Դասակը ընդունել էր մարտը, բայց  
որովհետև մնացել էր առանց հրամանատարի, օգտավետ ար-  
դյունքի չհասավ: Ինչ վերաբերում է վաշտին, ապա վերջինիս  
չհաջողվեց կատարել խնդիրը այն պատճառով, որ թշնամու աջ  
թևում ժամանակից շուտ սկսվեց համազարկը, որով և զգուշաց-  
վեցին ամբողջ դիրքերը: Վաշտը ուժեղ կրակի տակ, այնուամե-  
նայնիվ, մի քանի քայլ խցկվել էր առաջ, գրավել թշնամու մի  
քանի խրամատներ, ոչնչացրել կրակային կետերը և ամրացել:

Առավոտյան, սեպտեմբերի 11-ին, զորամասի հրամանա-  
տար մայոր Յակովենկոն Պանցևիչի մարտակարգերի հրամա-  
նատարական կետում ստուգում էր վաշտի գիշերային գործո-  
ղությունների մանրամասնությունները: Ինչպես պարզվեց հե-  
տագայում, նա խիստ հանդիմանել էր Պանցևիչին և կոշկակարի  
վեքսիկոնով մեղադրել նրան այն բանում, որ իբր թե նա չի  
ցանկացել գրավել բարձունքը, չի դեկավարել վաշտի գործո-  
ղությունը: Պանցևիչը թողել էր Յակովենկոյին և հարձակման

անցել ցերեկով աջ թևից, — առանց հրամանի: Նա ընկավ սնայ-  
պերի գնդակով, երբ մտենում էր թշնամու կրակակետերին: Գո-  
լումարտակի կոմիսար Վալենտինը, որ այդ ժամանակ ձախ-  
թեումն էր, շտապել էր կանխելու Պանցևիչի շտամոված քայլը,  
բայց արդեն ուշ էր: Վալենտինը սողալով մտնեցավ ընկած հրա-  
մանատարին, իր վրա վերցրեց դիակը, որպեսզի դուրս բերի,  
բայց ինքն էլ վերավորվեց ոտքերից: Վերավոր կոմիսարը հա-  
նեց հրամանատարի գրպանից պարտիական տոմսն ու մյուս  
փաստաթղթերը և, թեև մի օտքը ամբողջութեամբ ջարդված էր,  
սողալով դուրս եկավ կրակի տակից:

Սերժանտ Կոստրյուկովը այդ օրը մի դերքից մյուսն էր  
անցնում և սնայակերական դիպուկ կրակով շարքից հանում  
գլուխները բարձրացնել փորձող հիպերականներին: Նա մի քիչ  
ուշ իմացավ դիպվածի մասին և փորձեց դուրս բերել Պանցևիչի  
դիակը: Կոստրյուկովը սողալով մտնեցում էր հրամանատարի  
դիակին: Բաղմաթիվ գնդակներ սուլեցին նրա գլխավերևից ու  
կողքերից: Նա սողում էր: Երկու քայլ էր մնում միայն, և  
Կոստրյուկովը փովեց հրամանատարից ոչ հեռու:

Գուդառուտի կործանիչ գումարտակի ջոկատի ընկերները  
Իվանյակի գլխավորութեամբ իջան անտառախիտ լանջը, գտան  
մեզ ծանոթ ծառը, նրա տակ գերեզման փորեցին և ծառի վրա  
լրացրին փորագիրը:



ДОНБАС  
сержант  
М. КОСТРЮКОВ

19 $\frac{11}{9}$ 42 г.

Погиб смертью храбрых в боях  
за РОДИНУ

Փոքրիկ ջոկատներով ու ստորաբաժանումներով չափազանց  
ծանր մարտեր վարելով մեզ հաջողվեց դուրս բերել գերմանացի-  
ներին և տիրանալ անտառի հյուսիսային եզրերին: Այնուհետև  
մի քանի օր մենք ոչ մի քայլ առաջ չգնացինք: Թշնամին ամ-  
բանալով 1006 և կից բարձունքներում՝ ամբողջապես վերա-

հսկողութեան տակ էր պահուած մեր ելքերը: Յերեկը գրոհելու  
ոչ մի հնար չկար: Բարձունքը գրավելու մեր բոլոր փորձերը հա-  
ջողութեամբ չէին պսակվում, թեև մտեցել էինք գազաթին:  
Բարձունքի լանջերի բոլոր կողմերից հարձակման փորձեր էինք  
կատարել, և թշնամին զդուշանալով վերահսկում էր արթուն  
կերպով: Մնում էր միայն հյուսիսային լանջը, իսկ այդ կողմն  
անցնելու շանսերը չափազանց քիչ էին: Այնուամենայնիվ որոշ-  
ված էր օգտագործել նաև այդ շնչին հնարավորութեանը:

Չորամասի հրամանատար մայոր Յակովենկոն ղեկուցեց,  
որ անվեհերների ջոկատը (группа смельчаков) պատրաստ է:  
Առաջին գումարտակի ստորաբաժանումների հրամանատարներից  
մեկը, լեյտենանտ Բրաժնիկը ցանկութեամբ էր հայտնել անձամբ  
դիտարկել անվեհերների ջոկատը: Յակովենկոն գտնվում էր  
Բրաժնիկի ստորաբաժանման հրամանատարական կետում, որն է  
դեպ, մինչ այդ ընդունել էր Խոխլովի (որ փոխարինել էր Պան-  
ցևիչին) ստորաբաժանման մարտակարգերի մի մասը և պետք  
է ղեկավարել կապը ջոկատի հետ: Նա ղեկուցեց, որ նպատակա-  
հարմար է համարել Բրաժնիկին չուղարկել ջոկատի հետ և նրան  
հանձնարարել է ղեկավարել իր գործող ստորաբաժանումները,  
իսկ անվեհերների ջոկատի ղեկավարութեանը հանձնարարել է  
մեկ ուրիշին:

Անցել էր արդեն ամբողջ օր ու գիշեր, անվեհերների ջոկա-  
տից տեղեկութեամբ չկար: Գիշերը նորից պատեց լեռները: Մա-  
յոր Յակովենկոն առանց ստուգելու գիշերը իր ստորաբաժա-  
նումներից մեկի հրամանատարից ստացած հաղորդումը և մա-  
սամբ էլ ինքն ավելացնելով ղեկուցեց, որ մեր առաջավոր վաշ-  
տերը մոտ երկու կիլոմետր առաջ են գնացել, հակառակորդը  
նահանջում է, անվեհերների ջոկատը ձախ թևից շարժվում է  
դեպի Սանչարո՝ կտրելու համար լեռնանցքից հյուսիս տանող  
շավիղը:

Այնուհետև դուրս եկավ, որ Յակովենկոն առանց նախօրոք  
ինձ տեղյակ պահելու՝ ղեկուցել էր նաև ընկեր Պիյաշևին և խոս-  
տացել հաջորդ օրը ցերեկով գրոհել Սանչարոն: Սպա կուզնեցո-  
վը, որը մոտ մեկ տարվա միատեղ զինավորական ծառայութեան  
նից ճանաչում էր մայոր Յակովենկոյին և գիտեր, որ նա եր-  
բեմն թերահում է ստուգել «մանրուքները», կասկածներ հայտ-

նեց նրա զեկուցման առթիւ և Պիյաշևի հետ խորհրդակցելով՝ հեռախոսով հայտնեց ինձ Յակովենկոյի զեկուցման ճշտությունը ստուգելու համար:

Սակայն ժամանակ չկար այդ ինֆորմացիայի ճշտությունն ստուգելու, և ես ստիպված էի հայտնել, որ ճշմարտությունը կպարզվի իրադրությունը տեղում ստուգելուց հետո, որովհետև հնարավոր էր, որ զեկուցող ստորաբաժանման հրամանատարը սխալ կողմնորոշված լինի դիշերվա մթության մեջ:

Լուսազեմին արդեն հայտնի դարձավ, որ անվեհերների ջուկաւը շրջանցումով փոքր ինչ խորացել էր հակառակորդի աջ թևի թիկունքը, բայց ստիպված էր եղել ետ քաշվել և սեղմվել մեր մարտակարգերի ձախ թևին: Այդ արդեն վկայում էր, որ Յակովենկոյի զեկուցումը իրականությանը չի համապատասխանում:

Լուսաբացին մայրը Յակովենկոյի և գումարտակային կոմիսար Իվանովի հետ գտնվում էինք լեյտենանտ Բրաժնիկի դիտակետում, որը, առաջվա նման, հակառակորդի չընդհատվող կրակի տակ էր: Այդ նույնպես վկայում էր սխալ ինֆորմացիայի մասին, թեև Բրաժնիկը ճգնում էր համոզել, որ ինքը չի տարակուսում վաշտի հրամանատարի զեկուցման ճշմարտության նկատմամբ: Այնուամենայնիվ անհրաժեշտ եղավ հրամանատարական հետախուզությամբ ստուգել և վերականգնել ճշմարտությունը:

Պետք է նկատեմ, որ այդ օրը միջին հրամկազմից երկու հոգի վիրավորվեցին և դուրս եկան շարքից այն պատճառով, որ նրանց տրված հանձնարարությունը ելնում էր վերը հիշատակված սխալ ինֆորմացիայից: Ասում են՝ «Սարսափից աչքերը լայն են բացվում» («У страха глаза велики»): Մայրը Յակովենկոն մի քանի օր անընդհատ մարտեր վարելով թերացել էր գեթ մի անգամ անձամբ ստուգել իր հրամանատարության տակ գտնվող ստորաբաժանումներից թեկուզ մեկի մարտակարգերը: Նա մերթ դանազան պատրվակներ էր գտնում և մնում համեմատաբար ոչ վտանգավոր տեղերում: Առանց հրամանի նա երբեք իր դիտման կետից առաջ չէր գնում: Հասունացել էր նրա նկատմամբ կազմակերպական հետևություններ անելու հարցը: Սակայն սպա Պիյաշևը, հաշվի առնելով մեր դիշերի առանձնահատկությունները և նրա անբարենպաստ լինելու հետ

կապված դժվարությունները և այն, որ մայրը Յակոբենկոն-  
առաջին անգամն էր մասնակցում պատերազմական գործողու-  
թյուններին, դեռ անհրաժեշտ փորձ չէր կուտակել, — որոշեց չշարժել  
տեղից, այլ միայն խիստ հանդիմանել: Այնուամենայնիվ որոշ  
ժամանակ անց ստիպված էինք նրան փոխարինել երիտասարդ և  
առավել ընդունակ սպա Վայլկովով: Նա մարտերում ցուցաբե-  
րեց հայրենասիրություն և ռազմական հմտություն:

Սեպտեմբերի 16-ն էր: Լեյտենանտ Բրաժնիկի դիտման  
կետից մի քանի հոգով ուղևորվեցինք մեր մարտակարգերի ձախ-  
թեի ուղղությամբ հրամանատարական հետախուզություն կա-  
տարելու համար: Մեզ հետևեցին զորամասի հատուկ բաժնի ա-  
վագ լիազոր Իվանչենկոն և կարմիրբանակային «ЗНАМЯ ПО-  
БЕДЫ» թերթի քարտուղար Վաչնաձեն: Իդուր էի հանդիմանում  
նրանց. Իվանչենկոն վճարար հայտարարեց, որ ինքը պարտա-  
վոր է հետևել ինձ: Մենք ընդամենը 8 հոգի էինք: Լեռնային  
շավիղը ձգվում էր մեր վաշտերի մարտակարգերի հենց թիկուն-  
քից, թեև շավիղի աննկատելի էին մնում մարտակարգերը,  
որովհետև նրանք խրամատավորված էին բարձունքի լանջերի  
խիտ թփուտների մեջ: Անհրաժեշտ եղավ ստուգել թեթև ալա-  
նանետների կրակային նոր դիրքերը, այնուհետև շարունակել  
հետախուզությունը:

Հետախուզական մի ջոկ, որը գիշերային հետախուզություն-  
ներից հետո հանդատանում էր շավիղի մոտ, հաղորդեց մեզ բար-  
ձունքի վրա հիտլերականների կրակային կետերի դասավորման  
որոշ մանրամասնություններ, ինչ հաջողվել էր պարզել գիշե-  
րային հետախուզության ժամանակ: Այսպիսով մինչև անձամբ  
կհետախուզելինք մեր նպատակադրած վայրը, լրացուցիչ տեղե-  
կություններ ստացանք հակառակորդի մարտակարգերի մասին  
1006 բարձունքի վրա: Բայց մեզ անհրաժեշտ էր շրջանցի ելք  
գտնել՝ խուսափելու համար շարդարացված կորուստներից:

Համոզված լինելով, որ վայրի ուղեքը մեզ հնարավորու-  
թյուն կտա աննկատելիորեն աջից թևանցել հակառակորդի մար-  
տակարգերը և դուրս գալ բարձունքի հյուսիսային լանջի ելքերը  
հետախուզելու համար, որոշեցինք շարունակել մեր ուղին:

Յերեկով մեր ձախ թեի շրջակայքում ուժեղ կրակ չէր

նկատուում. բացի ականանետային հատուկենտ. կրակից, ոչինչ  
չէր լսվում: Այդ էլ հիմք դարձավ, որ համոզվենք մեր մտա-  
հոացման իրականացման հնարավորութեանը: Մենք. մտադիր  
էինք անցնել Բեշտայի կիրճի թաքստոցներով և հարմար տեղ  
ամրանալով հետախուզել բարձունքի հյուսիսային լանջերից  
դեպի Սանչարո ասնուղ ելքերը:

Բացի դրանից դեռևս ճշտորեն չէին որոշվել մեր ձախ թե-  
վում դորձող վաշտի դիրքերը, որը գիշերվա ընթացքում մար-  
տեր վարելով, ըստ տվյալների, պետք է հասած լիներ լեռան  
հյուսիս-արևմտյան լանջը: Անհրաժեշտ էր սահմանել նաև այդ  
վաշտի դիրքերը:

Այնուամենայնիվ մենք շարժվում էինք դգույշ, անհրաժեշտ  
հեռավորութեան պահպանելով միմյանցից: Շուտով դուրս եկանք  
անտառի եզրերից. դնում ենք բաց լանջով, որ այնուամենայ-  
նիվ որոշ չափով հարմար էր մեղ համար. մտնում ենք արևմը-  
տյան լանջի անտառի եզրերը, մինչև որ վերջնականապես սպառ-  
վում է անտառը, և մենք մերկ լեռան լանջով առաջ ենք շարժ-  
վում հյուսիս-արևմտյան փեշերով: Բարձունքի հյուսիս-արև-  
մտյան լանջի դադաթից մինչև ստորոտը ձգվող սղնաշարածե  
պարանոցը հասնելով՝ հրամայեցի ուղեկիցներին պառկել, իսկ  
ես բարձրանալով պարանոցի վրայի դիտելու համար հարմար  
թումբը՝ հեռադիտակով դնում էի շուրջը: Աջափշ լեռնանոցը  
բավականաչափ հեռու է, մեղ նրանից բաժանում է Բեշտայի  
խոր անդունդը: Հեռադիտակով դնում եմ Աջափշ լեռնաշղթան,  
որ ընկնում է դեպի հյուսիս-արևելք և կարծես վերջանում կո-  
նաձև զգված բարձր ժայռերով, որոնց լանջերին տեղ-տեղ հա-  
վիտենական ձյան սառցաշերտեր են ընկած: Աջափշի վրա,  
լեռնաշղթայի երկարութեամբ մարդկանց հատուկենտ շարժում  
եմ նկատում. դա տարակուսանք է առաջ բերում... Մեր ունեցած  
տեղեկութեանս համաձայն Աջափշ լեռնաշղթայի մի մասը,  
ընդհուպ մինչև լեռնանոցը, պետք է գտնվեր հեռակալային դըռ-  
րոցի ստորաբաժանումների ձևքում: Չէր կարող պատահել, որ  
միանգամայն բաց վայրում լեռնանոցի երկու կողմում էլ, երկու  
հակառակորդներ այդպես ազատորեն շարժվեին: Իժբախտաբար  
տարածութեանը հնարավորութեան չափեց, և ես չկարողացա  
տարբերել, թե ովքեր են նրանք, մերոնք, թե՛ գերմանացիները:

Մինչդեռ ես դիտում էի լեռնաշղթայի պարանոցը, Իվան-  
չենկոն մի կարծիքքանակայինի հրամայել էր լինել ինձ հետ:  
«Լերջինս կանգնել էր ինձ մոտ ձախ կողմից:

Հանկարծ տղան ինչ-որ ճիչ արձակեց կրակոցի հետ միա-  
սին, և ընկավ: Անմիջապես պառկեցի, քաշելով նրան թմբի մի  
կողմը: Մի քանի տեղից մեզ վրա գնդացրային և ավտոմատա-  
յին կրակ սկսվեց: Գնդակները սուլում էին: Պառկած տեղում  
գննեցի վիրավորին. սնայակերը ըստ երևույթին նշան բռնելով  
ինձ, վիրավորել է կարծիքքանակայինին աջ ոտի ազդրից, քայց  
ոսկորն անմասա է մնացել: Մյուսները կապեցին նրա վերքը:

Գնդակների չընդհատվող տարափը սկզբում ոչ մի հնարա-  
վորութուն չստեղծեց սահմանել հիտլերականների կրակակետերը:  
Մենք սողալով աշխատում էինք հարմար դիրք ընդունել գնդակ-  
ներից պաշտպանվելու համար: Հիտլերականները մեզ հնարավո-  
րութուն չստեղծեցին կրակով պատասխանել, գնդացրային հերթերն  
անընդհատ կրկնվում էին, իսկ մենք հարմար դիրք չունեինք:  
Իվանչենկոն այդ պահին մտահոգված էր մեր վիճակով և առա-  
ջարկում էր շտապել:

Մենք սողալով մտեանում էինք մեղնից ընդամենը մի քա-  
նի քայլ հեռու ընկած բնական հարմար դիրքին, որտեղ հնարա-  
վոր էր պաշտպանվել քարերի հետևը: Մի գնդակ դիպչելով սա-  
ղավարտիս՝ շեղեց ուղին ու մի կողմ անցավ: Իվանչենկոն սողում  
էր ինձ հետ կողք-կողքի և շտապեցնում:

Ընտրելով պաշտպանվելու հարմար դիրք, աշխատում էինք  
սահմանել հիտլերականների կրակակետերը: Մեր հետախույզ  
ռազմիկները՝ արդեն կրակով պատասխանում էին հիտլերա-  
կանների կրակին: Հնարավոր չեղավ ամբողջութեամբ սահմանել  
հակառակորդի կրակակետերն այդ տեղամասում, այնուամենայ-  
նիվ մեզ հաջողվեց պարզել նրա մարտակարգերի դասավորու-  
թյան մոտավոր պատկերը: Հրամանատարական հետախույզու-  
թյունը տվեց նաև մի այլ արդյունք. ցերեկով մենք ուսումնա-  
սիրեցինք բարձունքի հյուսիս-արևմտյան լանջերը, թեև չկա-  
րողացանք հետախույզել լեռան հյուսիսային կողմը և դիտել  
դեպի Սանչարո տանող ելքերը:

Մյուս կողմից մեզ համար պարզվեց, որ մեր ձախակողմ-  
յան վաշտը չէր կարող այդչափ խորանալ հիտլերականների

աջ թևից, քանի որ բարձունքի բոլոր ելքերը գտնվում էին նրանց ձեռքում:

Այդտեղից դուրս գալու մեր միակ ելքը ընկնում էր դեպի ցած, անտառի եզրերը, բայց չընդհատվող կրակը հնարավորութուն չէր ապրիս դուրս գալ հենց դրանից քիչ առաջ գրաված դիրքերից:

Կարելի էր ենթադրել, որ հարմար դիրքերում քողարկված թշնամին նկատել էր մեզ սկզբից, բայց չէր խանդարել առաջ գնալ, ըստ երևույթին նպատակ ունենալով կենդանի բռնել կամ այնպես անել, որ ոչ ոք չվերադառնա: Մեզ համար մի առավելութուն կար միայն՝ թշնամու կրակային կետերը մեզնից այնքան էլ մոտիկ չէին, իսկ կենդանի բռնելու համար հարկ կար, որ նրանք դուրս գային թաքստոցից: Մենք զգում էինք այդ և բոլորս էլ շրջահայաց՝ հետևում էինք հիալերականների կրակակետերին. բավական էր, որ նրանք փորձ անեին դուրս գալ թաքստոցից մեր անելիքը որոշված էր:

Հրամայեցի սողալ դեպի անտառի եզրերը:

Օգտագործելով տեղի պարագաները և ոչնչացնելով մեզ սպառնացող երկու կրակակետեր, մենք հաջողությամբ հասանք անտառը առանց կորստի, մեզ հետ տանելով միակ վիրավորին:

Թշնամին շարունակում էր կրակը: Մենք բավականաչափ հեռացել և ուղղութուն էինք վերցրել դեպի մեր մարտակարգերը: Երբ թշնամին կորցրեց մեր հետքերը, նորից դուրս եկանք լեռան արևմտյան լանջի անտառի եզրերը: Ուղեկիցներս պառկել էին, իսկ ես վերցնելով մի կարմիրբանակային՝ ցանկացա բարձրանալ մինչև թփուտների ծայրը՝ ստուգելու համար թշնամու դիրքերը: Հենց անտառից դուրս գալիս հակառակորդը նկատեց մեզ. լսվեց գնդացրային հարատև կրակ: Մենք սողում էինք, գնդակները սուլում էին մեզնից բարձր՝ շոշափելով թփերի տերևները: Ետ նայեցի, բանակայինը չկար, բայց քիչ ներքև սողում էր Իվանչենկոն ձեռքով ինչ-որ նշաններ անելով մեկին: Նա կանչում էր ինձ հետ դեպի վեր սողացող կարմիրբանակայինին, որը կրակի տակ ընկնելով ուղղակի գլորվել էր ցած: Նա նորից շարունակեց սողալ: Թփուտների մեջ գրեթե իրար կողքի սողում էինք, երբ նորից մեզ վրա գնդակներ տեղացին: Պառկած տեղից զգուշությամբ դիտեցի վեր, ես պարզա-

րեն նկատում էի հակառակորդի կրակային որոշ կետերը  
Թփուլաներից քիչ բարձր:

Փոքր ինչ աջ ընդունելով՝ հանդիպեցինք մեր մարտա-  
կարգերի ձախ թևին:

Պարզվեց, որ մեր ձախակողմյան վաշտը գիշերվա ընթացքում,  
գուրս վունդելով հիտլերականներին մի քանի կրակակետերից,  
որոշ չափով տարածվել էր դեպի ձախ և ընդամենը մի քանի  
քայլ առաջ շարժվել դեպի բարձունքի գագաթը, ամրացել  
Թփուլաների հյուսիսային մասում:

Ստուգելով մեր երկու վաշտերի մարտակարգերը և ինֆոր-  
մացիա ստանալով լեյտենանա Սոխանից և ավագ քաղզեկ Մի-  
րաքյանից, մեկնեցինք Բրաժնիկի հրամանատարական կետը:

Հրամանատարական կետում լուռ նստել ծխախոտ էինք փա-  
թաթում, ոչ ոք ոչինչ չէր խոսում: Դժվար է ասել, թե ինչպիսի  
ապրումներ ունեին իմ ուղեկիցները, երբ անմիջական մահը շեղել  
էր ուղին: Պատերազմը խմբազրում է կյանքի դիպվածները...  
Եւ ոք ուշադրութուն չէր դարձնում դրա վրա, բոլորն էլ հան-  
գիստ էին սովորականի նման: Վերջապես Միխայլովի «չախմա-  
խը» խանգարում է լուսթյունը:

Մենք ամփոփում ենք հրամանատարական հետախուզու-  
թյան տվյալները, ճշտում հակառակորդի մարտակարգերի դասա-  
վորությունը տեղագծական քարտեզի վրա: Այսպիսով, գրեթե  
մի ամբողջ օր մենք գրադված էինք որոշելու համար գիշերն  
ստացված ինֆորմացիայի անճշտությանը: Կողմնակի կարգով  
նկատեմ, որ, ինչպես պարզվեց հետագայում, նույնօրինակ սխալ  
ինֆորմացիայի հետևանքով մեր ինքնաթիռներից մեկը մեղնից  
ձախ գործող ստորաբաժանումների համար նշանակված եր-  
կու պարկ պարենը նստել էր հակառակորդի մարտակարգերի  
շրջանը:

Հրամանատարական հետախուզությունը կարևոր նշանակու-  
թյուն ունեցավ բարձունքը գրավելու գործում:

Բարձունքի շրջանցումը կատարելու մեր սահմանափակ  
հնարավորությունը, մնում էր ձախ թևը, չնայած նա զուրկ  
էր ստորաբաժանումները ծավալելու հնարավորությունից և վե-  
րահսկվում էր հիտլերականների կողմից:

Ձախ թևը մեզ համար շարիքի փոքրագույնն էր և պետք

է օգտագործվել: Բայց մի քանի անգամ փորձեր կատարելով  
մենք արդեն գգուշացրել էինք թշնամուն: Վերջինս վերադասա-  
վորել էր իր ուժերը, կրակի տակ առել բարձունքի լեռնալան-  
ջերը և այսպիսով առավել դժվարացրել մեր գործը: Հարկավոր  
էր գործել այնպես, որպեսզի թշնամին շարունակեր համոզված  
լինել, որ մենք չենք հրաժարվում ձախից հարձակվելու մտա-  
դրությունից: Այդ նպատակով ձախից գործելը դադարեցնել չէր  
կարելի, պետք էր անընդհատ հարձակման նշաններ ցույց տալ  
ձախից, թեկուզ փոքրիկ խմբերով: Հարձակման տպավորություն-  
ներ ստեղծող գործողություններին գուզընթաց հետախուզու-  
թյուն էր հարկավոր, որովհետև, ինչպես պարզվեց այդ օրը, Ա-  
ջափշ լեռնաշղթան գրեթե ամբողջապես, ներառյալ լեռնանցքը,  
գանվում էր հակառակորդի ձեռքին և նա կարող էր խանդարել  
մեր ձախ թևին, Բեշտաշի հովիտը մտնելիս:

Այլ թևի դիմաց (հակառակորդի ձախ թևում) բարձունքը  
շատ ավելի մեծ թեքություն ուներ, անգամ սողալու համար քիչ  
մատչելի: Իհու անատուր չվերջացած սկսվում է ուղղահայաց մի  
ահուելի ժայռ, որ անշատուժ է բարձունքը Ախեյի կերճից և բացար-  
ձակ անհնարին դարձնում ելքը դեպի բարձունքը հարավ-արևել-  
քից: Կարելի էր մի քանի հոգի բարձրացնել ժայռից բարձունքի  
թիկունքը, նրա արևելյան կողմը, բայց գիշերով այդ անհնա-  
րին էր, իսկ ցերեկը՝ առավել: Ժայռին գրեթե դուզահեռ դեպի  
բարձունքի գագաթը ընկնում է տեղ-տեղ ապառաժներով, առան-  
ձին քարերով ու թփերով պատած մի պարանոց, որից դեպի  
արևմուտք տարածվում է քարերից ու թփերից գուրկ լանջը, որ  
հարավ-արևմտյան մասում նույնպես յուրատեսակ պարանոց է  
կաղմում: Լեռան այդ բաց լանջին մենք հակառակորդի ոչ մի  
կրակային կետ չէինք նկատել: Միայն նշածս պարանոցների  
ուղղությամբ քարափների ու թփերի մոտ վերևից-ներքև, իրար  
հետևից մի քանի խրամատներ էին փորված և կրակային կե-  
տերով ամրացված: Գագաթի շուրջը գերմանացիները գրեթե  
չըջանաձև խրամատ էին փորել և այնտեղից գնդակոծում էին  
բարձր լանջերը ու ապահովում սեփական առաջավոր կրակային  
կետերը: Բարձունքը գրավելու համար հարկավոր էր՝ կամ շրջ-  
շապատել հակառակորդին նրա վրա և հյուսիս-արևելքից գրոհել  
նրան, կամ թե տիրանալ այդ խրամատին:

Բարձունքի գրավումը մեզ համար կարևոր նշանակություն ունի, նախ՝ մեր ստորաբաժանումները դուրս կգային լեռնաշանջին սեղմված լինելու դաժան վիճակից և երկրորդ՝ որ կարևոր է, 2006 բարձունքը Սանչարոյի նախադուռն է, իսկ վերջինիս գրավումից էլ կախված էր մյուս լեռնանցքների ադատագրումը:

Բարձունքը գրավելու հրամանը պատրաստ էր:

Այդ օրը մեր հրամանատարությունը առաջին անգամ ստորաբաժանումներից մի վաշտ լեյտենանտ Կալինինի հրամանատարությամբ խնդիր ստացավ մութն ընկնելիս իջնել Բեշտա գետի ափը, շարժվել դեպի նրա հյուսիսային հովիտը և կապ հաստատելով հետևակային դպրոցի ստորաբաժանումների հետ, հարձակման անցնել արևելյան ուղղությամբ: Լեյտենանտ Սոխանի վաշտը խնդիր ստացավ գիշերով հետախուզություն կատարել բարձունքի հյուսիս-արևմտյան լանջում: Երեկոյան Ախեյի հովտից մեր երկու լեռնային հրանոթները կրակ բաց արին Սանչարո լեռնանցքի ուղղությամբ, իսկ ականանետները՝ 2006 բարձունքի գագաթի վրա:

Կապիտան Չերնենկոն խնդիր ստացավ հետևել լեյտենանտ Կալինինի վաշտի գործողություններին, իսկ մայր Յակովենկոյին հրամայվեց ղեկավարել գիշերային հետախուզությունը և հարձակվելու տպավորություն ստեղծող գործողություններ սկսել մեր ձախ թևից:

Գիշերը և մյուս առավոտյան նախապատրաստում էինք բարձունքի գրավման համար նախատեսված ստորաբաժանումներին: Կազմվեց մարտերում փորձված, խիզախ մարտիկներից մի շուկատ 18 հոգուց բաղկացած, նրանց կամավոր ցանկությունը: Չոկատի ղեկավարությունն իր վրա վերցրեց լեյտենանտ Յվետկովը, իրեն օգնական վերցնելով լեյտենանտ Ասատչուկին: Նրանց ղինեցինք ավտոմատներով և նռնակներով: Միայն 5—6 հոգի զինվեցին թեթև հրացաններով: Յվետկովի Չոկատի խնդիրն էր՝ մեր աջ թևից, ժայռին դուգահեռ պարանոցով, գիշերով սողալ մինչև հակառակորդի կրակային կետերը, քողարկվել ժայռի գլխին, ապառաժների մեջ և երբ մեր ձախ թևը հարձակման անցնի ու թշնամու ուշադրությունն իր վրա գրավի, նռնակներ նետել թշնամու կրակակետերին, ոչնչացնել նրան պարանոցի վրա, այ-

նուհետև գրոհել նրա դիրքերը բարձունքի գագաթին և ամրա-  
նալ նրանց խրամատներում:

Բրաժնիկի վաշտը խնդիր ստացավ դժային հարձակման  
կարգով սողալ մինչև թշնամու կրակային կետերի ուղղությունը  
հարավից և քողարկվել թիոււտներում: Մինչ այդ վաշտը պետք  
է մի դասակ առանձնացներ և օգտվելով գիշերային մթություն-  
նից՝ բարձրացներ լեռան հարավ-արևմտյան և արևմտյան պա-  
րանոցների միջև ընկած լանջով խրամատավորվել և երբ հետա-  
խուզող վաշտը արևմտյան լանջում կսկսեր ակտիվություն ցույց  
տալ և դրավել թշնամու ուշադրությունը լեռան արևմտյան պա-  
րանոցից, կրակ բաց անել նրանց դիրքերի վրա:

Տեսնելով այդ՝ թշնամին հավանաբար կրակի հիմնական-  
ուժը կուղղեր դասակի կողմը: Հենց այդ էլ անհրաժեշտ էր մեզ  
Դրանից օգտվելով՝ վաշտի մյուս դասակները թիոււտներից կտ-  
ղային դեպի գագաթը և կօգնեին Տվետկովի ջոկատին գրավել  
այն: Այնուամենայնիվ անհրաժեշտ եղավ ստորաբաժանումներից  
մեկի կոմիսար, ավագ քաղղեկ Դանիելյանին հանձնարարել  
շարժվել լեյտենանտ Բրաժնիկի վաշտի հետ և նրա փաստական  
կոմիսարի դերը կատարել: Դանիելյանը վերցնելով սառ հոգի  
խիզախությամբ առավելապես աչքի ընկնող մարտիկներ՝ գործի-  
անցավ:

Տվետկովի ջոկատի և Բրաժնիկի վաշտի անձնակազմից հա-  
նեցինք շինելները և հազցրինք կարճ, թեթև բաճկոններ, նրանց  
ավելի դյուրաշարժ դարձնելու համար: Հարկ եկավ մտածել նաև նը-  
րանց սննդի մասին. անձնակազմի յուրաքանչյուր մարտիկի տրվեց  
մեկական պահածո (կոնսերվա) և սուխարի: Մինչև երեկո Մի-  
խայլովը, Վաչնաձեն և դորամասի պարտկոմի քարտուղար Բո-  
րովիկը քաղաքական մեծ աշխատանք կատարեցին Տվետկովի  
ջոկատի և Բրաժնիկի վաշտի անձնակազմի հետ: Մարտիկները  
մեծ ոգևորությամբ սպասում էին գործելու հրամանին:

Մեր ձախ թևում, Բեշտայի ուղղությամբ գործող վաշտից  
երեկոյան ստացվեց հետևյալ հաղորդագրությունը.

«Ընկեր հրամանատար!

Հասել եմ Աջափշ. առանց ականանետային ու զնդացրա-  
յին կրակի օգնության վաշտով անցնել Բեշտա գետի հովիտը  
հնարավոր չէ: Թբիլիսիի ուսուսնարանը շարժվում է այդ լեռ-

Նաշղթայով մինչև լիճը, որ բարձր է 1209 նշանակետից, խնդիր ունենալով օգնել իրենց ստորաբաժանմանը, որ շարժվում է Չմախարայից, և ոչնչացնել թշնամու խմբավորումը լճից ձախ։ Ուղարկում եմ հետախույզներ Բեշտայի հովտի ուղղությամբ։

Նշանակետ 1209, 17.9. 1942 թ. 17.00. Կալինին»։

Հաջորդ երեկոյան գրեթե կրկնում էինք նույն գործողությունները։ Կալինինի վաշտը խնդիր ստացավ անհանգստացնել թշնամու Բեշտայի կիրճին հսկող ստորաբաժանումներին։

Սեպտեմբերի 18-ին, երեկոյան դեմ, սովորական ժամին, մեր լեռնային տիպի հրանոթները նորից կրակ բաց արին Մանչարոյի վրա, իսկ լեյտենանա Կուզնեցովի ականանետային վաշտը և երեք 107 միլիմետրանոց ականանետներ՝ 1006 բարձունքի գագաթին և լանջերին տեղավորված դիրքերի վրա։ Սակայն այս անգամ ավելի ուժեղ և հարատև։

Ժամը 21,30 ընդհին սկսվեց կրակային ուժեղ մարտը։ Բրաժնիկի վաշտից այն դասակը, որ խնդիր էր ստացել իր վրա բևեռել հակառակորդի ուշադրությունը, բավականաչափ հաջող կատարեց իր խնդիրը, թեև ժամանակը չէր ներել խրամատավորվել ինչպես հարկն է, և կորուստներ էր կրել։

Մեր ձախ թևում կրակային մեծ ակտիվության հետ միասին մեծ ադմուկ էին ստեղծել նաև հաճախակի կրկնվող ուռանները, նրանք իրենց վրա էին բևեռել հակառակորդի ուշադրությունը և կրակային հիմնական ուժը։ Մինչդեռ աջ թևում ամեն ինչ լուռ էր և միայն թիկունքից հազվադեպ գնդակներ էին արձակվում։ Լուռ սողում էին Ցվետկովի ջոկատի և Բրաժնիկի վաշտի մարտիկները։

Արդեն ժամը 23,00 ընդհին հեռախոսավարը զեկուցեց, որ Ցվետկովի ջոկատը ոչնչացրել է մի քանի կրակային կետեր և շարունակում է առաջ շարժվել։ Ցվետկովի տեղը շատ էր դժվար, լեռան պարանոցում թեքությունը տեղ-տեղ 70 աստիճանի էր հասնում, սակայն մեր անվեհեր մարտիկներն ու սպաները շարունակում էին գրոհել եռանդուն կերպով ու մեծ վճռականությամբ։ Ամբողջ գիշերը նրանք գնդակների տարափի տակ, չը տեսնված համառությամբ գրոհում էին հակառակորդին. երբեմն կարիք էր լինում միևնույն կրակային կետի վրա մի քանի անգամ գրոհել, մինչև որ ոչնչացնում էին։ Ահա 100 մետր է մնա-

ցել մինչև գագաթը... 50 մետր, այնուհետև 25... Եվ ամեն մի  
մետրը արյուն, քրտինք և էներգիա է կլանում մարտիկներից,  
լարում նրանց ջղերը:

Նույն ժամին լեռան լանջով սողում էր Բրաժնիկի վաշտը:  
Իր ձախ թևով վաշտը փոքր ինչ անկյունաձև թեքվել էր դեպի  
լեռան պարանոցը և կրակի տակ էր պահում հակառակորդի այն-  
դիրքերը, որոնց գնդացրային կրակը ուղղված էր Ցվետկովի  
Չոկատի վրա: Վաշտի հրամանատար Բրաժնիկը մարտում վի-  
րավորվեց մեջքից՝ ահանի բեկորից: Ավագ քաղղեկ Դանիելյանը  
հրամայեց նրան թիկունք փոխադրել, իսկ ինքն իր ձեռքը վերց-  
րեց վաշտի հրամանատարութունը. Դանիելյանը Ցվետկովի հետ  
հեռախոսային կապ չուներ և ոչ էլ հնարավոր էր կապավորներ  
ուղարկել: Սակայն մարտական գործողությունների ընթացքը  
երբ նրան հետևում են, ճշտությամբ վկայում է անմիջական հա-  
րևանի վիճակը: Դանիելյանը աջ թևից նունակների պայթյուն  
լսեց. «Ուրեմն Ցվետկովը հասել է խրամատներին» — մտածեց նա  
և հրամայեց արագացնել շարժումը: Վաշտը հասել էր հակառա-  
կորդի դիրքերին և դաժան, երբեմն մենամարտի հասնող, կուլով  
ոչնչացնում էր հիտլերականներին:

Դիշերը պետք եղավ լրացուցիչ միջոցներ ձեռք առնել գոր-  
ծող Չոկատի և վաշտի հաջողություններն ամրացնելու համար:  
Մայր Ցակովենկոն դեկուցեց, որ հակառակորդը մեր ձախ թևից  
սկսել է մեծ ակտիվություն ցուցաբերել: Դանիելյանն ստիպված  
էր ուժերի մի մասը ուղղել այն կողմը՝ թևից պաշտպանվելու  
համար:

Լեյտենանտ Սոխլովը իսկույն հրաման ստացավ մեկ վաշ-  
տով գրոհել 1006 բարձունքին կից անանուն բարձունքը: Սոխ-  
լովը, որ փորձված և քաջ հրամանատար էր, խնդիրը կատարեց  
մեծ արագությամբ և անվտանգ դարձրեց Դանիելյանի վաշտի  
ձախ թևը:

Լուսաբացին, ժամը 5.00 բուպեին, Ցվետկովի Չոկատը գրո-  
հում էր բարձունքի գագաթը: Դանիելյանի ստորաբաժանումը  
գագաթից ոչ հեռու սվինահար էր անում հիտլերականներին և  
թևանց կատարելով անցնում նրանց թիկունքը:

Լեյտենանտ Վլադիմիր Ցվետկովը, կրտսեր սերժանտ Սե-  
րեզան, կարմիրբանակային Սակվարելիձեն և մյուսները առա-

Ղինը երևացին լեռան դագաթին: Բարձունքի գագաթի մյուս ծայրից լավեց Ալեքսանդր Դանիելյանի ձայնը՝ «Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի, հանուն մայր Կովկասի, առաջ»: Ոմանք ընկնում էին, իսկ վաշտը համառ գրոհում էր:

Բարձունքը գրոհող սովետական անվեհեր մարտիկների սխրագործություններին «Герой родины» կարմիրբանակային օրաթերթը մի հատուկ էջ նվիրեց: Ավելորդ չենք համարում մի քանի մեջբերումներ կատարել թերթի այդ էջից:

Լեյտենանտ Վլադիմիր Մատվեյեվիչ Յվետկով. — «Արհամարհելով մահը և ատելությամբ լի դեպի թշնամին՝ ընկ. Յվետկովը մի խումբ խիզախ մարտիկների և հրամանատարների հետ միասին առաջինը բարձրացավ բարձունքը, համարձակորեն ոչնչացրեց հիտլերականներին նոնախներով, սվինով և ագուստով (прикладом)»:

Ավագ քաղվել Ալեքսանդր Մինասի Դանիելյան. — «Բարձունքի համար մղվող մարտերում նա հմտորեն կազմակերպեց քաղաքական աշխատանքը մարտիկների հետ: Ամբողջ գիշերը ընկ. Դանիելյանը սողում էր մարտիկների մի խմբից մյուսը, զրուցում նրանց հետ առաջիկա խնդիրների մասին: Եւք ավարտվեց գրոհի նախասլաքատումը և տրվեց հրաման, ընկեր Դանիելյանը առաջինը բարձրացավ բացազանչելով՝ «Ուոռն, հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի, հանուն մայր Կովկասի»: Անձնական օրինակով նա ոգեշնչում էր զինվորներին մարտական սխրագործություններին»:

Կարմիր բանակային Գեորգի Միխայլովիչ Սակվարելիձե. — «Կարմիր բանակի անվախ մարտիկ: Բարձունքի համար մղվող մարտում նա ոչնչացրեց 8 ֆաշիստ: Ընկ. Սակվարելիձեն առաջիններից մեկը նեավեց հակառակորդի խրամատները, անխնա ոչնչացրեց ֆաշիստներին նոնախներով»:

Կրտսեր սերժանտ Մակար Կարպովիչ Սերեդա. — «Խիզախների խմբակում (Չոկատում: Ս. թ.) նա պարտկազմակերպիչ է եղել: Գրոհից առաջ ընկ. Սերեդան հայտարարեց՝ «Երգվում եմ բարձր պահել կոմունիստի կոչումը»: Նա այդ ապացույցեց մարտում իր անվեհերությամբ: Առաջինների թվում նա նեավեց հակառակորդի խրամատների գրոհին: Նա ընկավ քաջի մահով»:  
(Տես «Герой родины», 1 հոկտեմբերի 1942 թ.):

Հատուկ բաժնի լիազոր կրտսեր քաղղեկ Ազարյանը բարձունքի համար մղվող մարտերում մշտապես գտնվում էր առաջավոր գծում: Նա մի քանի անգամ գրոհի գնաց մարտիկների հետ կողք-կողքի և վիրավորվելով չթողեց մարտի դաշտը: Միայն բարձունքը գրավելուց հետո ընկ. Ազարյանը մեկնեց հոսպիտալ, սակայն չանցած մի քանի օր, նա դարձյալ իր մարտական պոստումն էր:

Կրտսեր քաղղեկ Ալեքսանդր Յուզինը ոչնչացրեց թշնամու ծանր գնդացիքը՝ իր համարներով: Քաղղեկի տեղակալ Իլյա Խաչատուրովը և կրտսեր լեյտենանտ Սերգեյ Ֆեոդորովը միասին ոչնչացրին երկու գնդացի համարներ, գրավեցին գնդացիները և ոչնչացրին էլի երեք հիտլերականներ: Իլյա Խաչատուրովը վիրավոր էր, բայց չթողեց մարտի դաշտը մինչև որ գրավեցին բարձունքը:

Սանչարոյի նախադուռը մեր ձեռքին էր:

## Ս Ա Ն Չ Ա Ր Ո

Մենք ընդհուպ մոտեցել էինք Սանչարո լեռնանցքին: Ռազմաճակատի հրամանատարության ներկայացուցիչ ընկեր Պետրովը 1006 բարձունքը գրավելուց հետո մեկնել էր մեր մարտակարգերի շրջանը: Նա ծանոթանալով իրադրության հետ, գործնական ցուցումներ տվեց առաջիկա մարտերի համար և հայտնեց, որ հրամանատարությունը կարևոր նշանակություն է տալիս Սանչարոյի ազատագրմանը, որովհետև այն հնարավորություն էր տալիս մեր զորամասերին ամբողջությամբ մաքրել լեռնաշղթայի հյուսիսային փեշերը հիտլերականներից և նպաստավոր դիրքեր գրավելով արագացնել նրանց ջախջախումը Հյուսիսային Կովկասում: Աջափշից մինչև Ալաշտրախու ընկած ժայռապատ պարանոցը դեռ հակառակորդի ձեռքումն էր: Պարանոցը գրոհելու հնարավորությունները սահմանափակ էին: Տեղ-տեղ միայն նեղ, դժվարանցանելի լանջեր կան, որոնք մեծ թեքություն ունեն, իսկ այդ ելքերն էլ փակել էր հակառակորդը: Սանչարո տանող միակ շավիղը, որ Բեշտայի հովտից անջատվելով դեպի արևմուտք միացնում է նաև Աջափշ լեռնանցքը, անցնում է գրեթե ուղղանկյուն կազմող պարանոցից ցած, նրան զուգահեռ, զիզզազ,

քարափներով և ծառերից ու թփերից դուրի տարածութեաննե-  
րով, ընկած է պարանոցի հենց ստորոտին և վերահսկվում է վե-  
րևից՝ հակառակորդի դիրքերից:

Մենք շարժվել կարող էինք միայն գիշերով, որովհետև  
պարանոցի ամբողջ երկարութեամբ շարված հակառակորդի կրա-  
կային կետերը կարող էին շարքից հանել շավղի վրա երևա-  
ցող յուրաքանչյուր մարտիկի:

Հիտլերականների դիրքերը այնքան էին հարմար, որ նրանք  
ամբողջ ցերեկը նռնակներ նետելով ժայռագլխից անհանգստացը-  
նում էին մեզ: Նրանք անգամ ականներ էին նետում ձեռքով,  
որոնք զարնվելով քարերին՝ հեշտութեամբ պայթում էին: Իսկ գի-  
շերները հաճախ ռակետներով լուսավորում էին պարանոցի հնա-  
քավոր ելքերը և երբեմն անընդհատ կրակի տակ պահում:

Սյնուամենայնիվ մեզ հաջողվեց գիշերային գործողութեան-  
ներով տիրապետել լեռնանցքին կից շավղի աջակողմյան բար-  
ձունքը արևմուտքից և հսկել լեռնանցքին, թեև պարանոցը և  
լեռնանցքի երկու կողմերից կոնաձև ցցված բարձունքները,  
որոնք բնական իշխող դիրք ունեին, մնում էին հակառակորդի  
ձեռքում:

1006 բարձունքի գրավումից հետո 25 օր անընդհատ կա-  
տաղի մարտեր էինք մղում կովկասյան գլխավոր լեռնաշղթայի  
այդ հատվածում գազաթներին և Սանչարո լեռնանցքին տիրա-  
նալու համար:

Հարատև մարտերի ընթացքում ծավալվեց սնայպերական  
սքանչելի շարժում: Կարմիրբանակայինները, կրտսեր հրամա-  
նատարները, ստորաբաժանումների հրամանատարներն ու քաղ-  
աշխատողները ջանում էին ավելացնել իրենց հաշիվը սնայպե-  
րական կովի բալանսում: Հաճախ էր պատահում, որ շատերը  
առանց հացի ու ջրի ամբողջ օրը մնալով իրենց թաքստոցնե-  
րում՝ ուշի-ուշով դնում էին թշնամու դիրքերը, և հենց որ  
երևում էր որևէ հիտլերական, շարքից հանում էին խկույն:  
Քաղղեկի տեղակալներ Միշչենկոն և Ֆեոդորովը մեկ օրում տա-  
սերկուական հիտլերականներ սպանեցին յուրաքանչյուրը: 3-րդ  
գումարաակի կոմիսար, քաղղեկ Սոկոլը իրար հետևից դիպուկ  
կրակով ժայռից ցած գլորեց հիտլերական մեկ սպայի և երկու  
ենթասպայի: Գերմանական սնայպերը վիրավորել էր մի կար-

միրքանակայինի, իսկ սպան բարձրացնելով գլուխը՝ ծիծաղում էր ծաղրաբար: Սուկուրը սպային դիպուկ կրակով գլորեց ժայռից, և մեր վիրավորը վրեժխնդիր ծիծաղով ծաղրեց նրան, իսկ կարմիրքանակային Սապեգինը շարքից հանեց ֆաշիստ սնայակերին, երբ նա աշխատում էր փոխել իր դիրքը: Նմանօրինակ փաստեր կրկնվում էին ամեն օր:

Հակառակորդը շարունակում էր մնալ լեռնանցքում: Սանչարոյին տիրելու մեր մի քանի փորձերը սկզբում հաջողությամբ չպսակվեցին:

Ընկեր Պիյաշևը և Չղայնանում էր մեզ վրա, և հաշվի առնելով մեր պայմանները, խորհուրդ տալիս խնայել անձնակազմը, պահանջում, որպեսզի լեռնանցքը գրավելու գործողությունները լինեն մտածված և առավել նվազ կորուստներով:

Մենք մի շարք փորձեր կատարեցինք և աշխատում էինք որքան հնարավոր է արագացնել լեռնանցքի գրավումը: Սեպտեմբերի 23-ին որոշեցինք գիշերով մի ջոկատ բարձրացնել լեռնանցքից հյուսիս-արևմուտք — ժայռոտ պարանոցը, նպատակ ունենալով անցնել թշնամու թիկունքը լեռնանցքի մոտ և դիշերային հանկարծակի գրոհով ճակատից ու թիկունքից նվաճել Սանչարոն:

Ջոկատը, որ ընդամենը մի քանի հոգուց էր բաղկացած, պատրաստ էր: Նրանց հետ գրույցի ժամանակ մատնանշեցինք խնդրի կարևորությունը և այն պանծալի դերը, որ նրանք պետք է կատարեն Հայրենիքի և սերունդների փառքի համար: Թիգախները հուզված էին, ոգևորված: Նրանց հայացքներում Հայրենիքի համար կյանքը դո՛հելու պատրաստակամություն էր կարգացվում: Զրույցը վերջանալուց հետո մոտեցավ մի երիտասարդ մարտիկ ու հանձնեց մի դիմում: Կարդում եմ.

«Սկզբնական պարտիական կազմակերպությունը:

Վասիլի Իոսիֆովիչ Ուլյանովից

Ի ի մ ու մ

Այս պահին, երբ մեր Սովետական երկրի վրա լուրջ վճռանգ է ծառայել, երբ թշնամին ձգտում է ճեղքել ճակատը, մտնել սովետական կովկաս և դավթել մեր աշխատանքով վաս-

տակած նավթը, խնդրում եմ . . . սկզբնական պարտկազմակերպութեանը ընդունել ինձ, որպես ՀամԿ (բ) Պ անդամութեան թեկնածու: Ես դեմքը ձեռքիս և կրելով պարտիական փաստաթուղթ, կշախշախեմ ֆաշիստական զավթիչներին այնպես, ինչպես ջախջախում և կործանում են նրանց մեր փառապանծ գլխարդիականները:

Ուլյանով:

23. 9. 1942 թ.:

Դիմումը հանձնելով զորամասի պարտիական կոմիտեի քարտուղար քաղղեկ ընկեր Բորովիկին, դառնում եմ Ուլյանովին:

—Սյս մոմենտից Ձեզ բոլշևիկ համարեք և կռվեք որպես բոլշևիկ:

—Կա, ընկեր կոմիսար, կռվել որպես բոլշևիկ: Եթե հարկ չիմի, կյանքս կտամ, պարծանքով կմեռնեմ որպես բոլշևիկ և ոչ մի քայլ չեմ նահանջի:

Ուլյանովի պատասխանը շարժեց բոլորի զգացմունքները. ոմանք արտասովելու չափ հուզվել էին երիտասարդ մարտիկի հայրենասիրական բուռն պափոսից:

Չոկատը պատրաստ էր: Ուրշված էր գրոհել Մանչարոն լույս սեպտեմբերի 26-ի դիշերը: Նախապատրաստվեց նաև մի այլ Չոկատ, որ Մանչարոն տիրանալուց հետո պետք է զարգացներ հարձակումը լեռնաշղթայի պարանոցով:

Սեպտեմբերի 25-ին անվեհեր մարտիկները, լեյտենանտ Մալրշևի և կրասեր քաղղեկ Սմիրյանի ղեկավարութեամբ՝ հաջողութեամբ բարձրացան ժայռամիջով դեպի լեռնաշղթայի պարանոցը: Դիշերը ձակատում համեմատաբար հանգիստ անցավ: Մանչարոյի դիմաց կանգնած մեր ստորաբաժանումները, առանց մի գնդակ արձակելու, սրտատրոփ սպասում էին ազդանշանի:

Լույսը բացվեց, բայց Մալրշևի Չոկատը չկար . . . Մյուս Չոկատի հրամանատարութեանը հանձնարարվեց ավագ լեյտենանտ Ռաբինովիչին, իսկ կոմիսար նշանակվեց զորամասի պրոպագանդայի գծով հրահանգիչը, ավագ քաղղեկ Իբրահիմովը: Չոկատն իր մեջ ընդգրկում էր փոքրիկ ենթաշոկատներ միջին հրամանատարների գլխավորութեամբ, քանի որ անխուսափելի էին նրանց գործո-

դուժյուշները առանձին-առանձին իրարից անջատ: Ավագ լեյ-  
տենանտ ժուկովը նշանակվեց Ռաբինովիչի օգնական: Սեպտեմ-  
բերի 26-ին, երեկոյան, ջոկատը շարժվեց որոշված ուղղութեամբ:  
Մենք գիշերով հեռախոսային գիծ անցկացրինք մինչև պարա-  
նոցի ստորոտը. հրամայված էր զեկուցել լեռան պարանոցը  
քարձրանալու մասին:

Գիշերը Ռաբինովիչը զեկուցեց, որ շարունակել առաջ շարժ-  
վել հնարավոր չէ, և խնդրեց թույլատրել վերադարձնել ջոկա-  
տը: Ջոկատի կոմիսարը առարկոււմ էր դրան: Նա չէի կարող հա-  
մաձայնել դրա հետ, քանի որ մինչև ջոկատը նորից իջներ  
ժայռամիջով, լույսը կբացվեր և բաց տարածութեան վրա հիտ-  
լերականները հրամայողական դիրքերից կարող էին ոչնչացնել  
նրան: Հրամայեցի շարունակել մարտական խնդրի կատարումը:

Լեռներում դժվար է դիտել ամեն ինչ և կողմնորոշվել: Թեև  
մենք ամբողջ գիշերը և հաջորդ ցերեկը անցկացրինք դիտման  
կետում, որտեղից պարզ դիտվում էր լեռան պարանոցի դեպի  
մեզ ընկած լանջը, լսեցինք կրակոցներ, այնուամենայնիվ ջոկա-  
տի վիճակը այս անգամ ևս անհայտ մնաց մեզ: Բնական է, որ  
մեր անհանգստութեամբ իր դագաթնակետին էր հասել:

Միայն սեպտեմբերի 28-ին, առավոտյան ժամը 10-ին,  
հայտնեցին, որ Ռաբինովիչը վերավոր է, գտնվում է դորամասի  
սանիտարական մասում: Ավագ լեյտենանտ Ռաբինովիչը պատ-  
մեց, թե ջոկատը անհաջողութեան է հանդիպել, և իբր թե մար-  
տիկներից ոմանք խուճապի են մատնվել առաջին խակ կրակոցնե-  
րից և ոմանք էլ առանց գնդակի մեռել՝ գլորվելով ճայռից: Այ-  
նուհետև պատմեց թե իրենք հազիվ են դուրս եկել կոշմարային  
ըջապատումից,

Նրա հաղորդումը վստահութեամբ չնեղեց, մանավանդ որ  
դեպքի վայրը, նրա պատմածի համաձայն, դիտվում էր մեր  
դիտման կետից: Նա վերավոր էր, փոխադրվեց հոսպիտալ:

Հետախույզները զեկուցեցին ջոկատի վիճակի մասին որոշ  
մանրամասնութեամբ: Նրանք սահմանել էին ժուկովի տեղը  
և որոշ տեղեկութեամբ լեռներ քաղել: Այնուհետև ամեն ինչ պարզվեց:

Սեպտեմբեր 29-ի առավոտյան ավագ լեյտենանտ ժուկո-  
վը այսպես պատմեց իրողութեամբ.

«Ջոկատը վերադարձնելու մասին մերժում ստանալով՝ ավագ

լեյտենանտ Ռաբինովիչը դժգոհ էր մնացել և ակամա շարժվում էր ջոկատի հետևից մի քանի հոգով: Ինձ հանձնարարվել էր շարժվել ջոկատի ավանգարդում և հետախուզություն կազմակերպել: Թիկունքում և թևերի կողմից հետախուզություն չէր տարվում: Լույս 28-ի գիշերը մենք անցել էինք լեռան պարանոցի մյուս կողմը, այնտեղ մյուսին գրեթե զուգահեռ մի պարանոց ևս կա: Ռաբինովիչը չէր երևում. երկու հոգի ուղարկեցինք նրան գտնելու: Ուղարկածս կապավորները վերադառնալով պեկուցեցին, որ Ռաբինովիչը, Իբրահիմովը և մյուսները քնած են ժայռի վրա, թաքստոցում, և հրամայել է կապվել իր հետ ժամը 10-ին: Ինքս էի նկատել, որ լուսաբացին մեր թիկունքում աղմուկ բարձրացավ: Կապավորները պատմեցին, որ Իբրահիմովը սպանվել է, իսկ Ռաբինովիչը, հանկարծակիի գալով, փախել է: Մնացածներից մեկը ցանկացել էր դերի հանձնվել, ընկերները նրան գետին են տապալել գնդակով: Մյուս վեց հոգին ընկել են անհավասար կռվում: Այդ պահին մի քանի տեղերից գնդակներ արձակվեցին ջոկատի վրա: Ջոկատը երեք մասի էր բաժանված: Առաջավոր ենթաջոկատը ինքնուրույն կերպով մարտի բռնվելով ոչնչացրեց մի քանի հիտլերականներ, բայց չկարողացավ դիմանալ թշնամու հարվածներին ու երկու հոգի կորցնելով սեղմվել էր պարանոցի հարավային լանջին և միայն գիշերն իջել պարանոցից դեպի այս կողմ: Հարվածի տակ էր ընկել նաև ձախից գործող ենթաջոկատը, ինչպես և մենք՝ թիկունքից: Իրությունը լուրջ էր. մի կերպ միացրի երկու ենթաջոկատները և աջ ընդունելով ամբողջ ժայռածածկ բլրակի շուրջը և այս գիշեր մեծ դժվարությամբ իջեցրի ջոկատը լեռան պարանոցից: Եթե ես իմանայի, որ թիկունքից ապահովված չեմ, որոշ միջոցներ ձեռք կառնեի, բայց անտեղյակ էի Ռաբինովիչի այդ անտարբերությանը վտանգավոր ժամին:

Գիշերը ձախակողմյան հետախույզները զեկուցեցին, որ Սովետական բանակի հանդերձանքով դիակների են հանդիպել: Մի փոքր խմբով մեկնեցի այն կողմ և մի քանի քայլից դիակների ու շարդված հրացանների հանդիպեցի: Սառույցի ծայրին ընկած էր լեյտենանտ Մալրշևի դիակը, նրա ձակատին դանակով հնգաթև աստղ էր կտրված: Գտանք նաև մյուսներին, ոմ անք կապած վերքեր ունեին, երևում է դիմադրել են վիրավոր վի-

ճակում ևս և ընկել են հաջորդ գնդակներից: Դիակներին նայե-  
լով պետք էր ենթադրել, որ նրանք դիմադրել են մինչև վերջին  
մարդը: Ինձ այդ համոզմունքին են բերում ոչ միայն նրանց փա-  
թաթած վերքերը: Ինչպես երևում է, նրանց համառ դիմադրու-  
թյունից ավելի են կատաղել Փաշխտական գազանները:

Ամեն ինչ պարզ էր: Այդ մասին էին վկայում մյուսները  
ևս: Կասկածից վեր էր, որ Մալըշևի ջոկատը կամ սխալ էր վերց-  
րել ուղղությունը գիշերով, կամ թե հակառակորդի ուժեղ  
ճնշմանը ենթարկվելով, ստիպված էր եղել սեղմվել պարանոցի  
բարձունքներին և անհավասար կռվում ընկնել քաջի մահով:

\* \* \*

Կովկասյան լեռներում ուշ աշուն էր արդեն, կարծես թե  
աշունը լեռների գագաթներից էր իջնում. սկզբից դեղնեց կա-  
նաչ խոտը բարձրաբերձ լանջերում, հետո ցածրիկ թփուտները,  
իսկ այնուհետև անտառը, որ ցած խոյացող լեռների պարանոցնե-  
րով տարածվում էր դեպի կիրճերը: Սկսվեց աշնան անձրևախառը  
քամին: Նա մերկացրեց անտառը բարձր լանջերում ու քշեց  
տերևները դեպի հարավ, որտեղ կանաչը դեռ չէր դիջել իր  
տեղը:

Իզուր էին ճգնում գեթելսյան ճիվաղները հուսալքել մեր  
մարտիկներին իրենց թռուցիկներով: Մոտեցել էր հիտլերյան  
հորդանների վախճանը Կովկասում: Եվ փույթ չէր, որ նրանք  
մահ էին խոստանում մեզ, երբ մենք էինք մահ պատրաստում  
նրանց համար և, որ կարևոր է, շտապեցնում էինք այն:

Ստալինգրադի շրջանում սովետական զորքերի չզերա-  
զանցված համառ դիմադրությունը հիտլերյան ռադմական մեքե-  
նային և դերմանական դիվիզիաների մեկը մյուսի հետևից ջախ-  
ջախումը, ակնառու կերպով ցույց էին տալիս Սովետական Մի-  
ության զինված ուժերի հարվածների ամենօրյա աճը: Ստալին-  
գրադի հերոսական մարտերը ոչ միայն ամբապնդում էին սովե-  
տական մարդկանց հավատը Փաշիդմի վրա վերջնական հաղթա-  
նակ տանելուն, այլև կարծես ինչ-որ եղանակով հիմք էին տա-  
լիս նրանց կռահելու և տեսնելու, որ հենց Ստալինգրադում  
կղբովի հիտլերյան արյունարբու բանակի վերջնական ջախջախ-  
ման սկիզբը: Այդ համոզմունքը սովետական մարտիկներին մղում

էր արագացնելու թշնամու ուժերի ջախջախումը ճակատի իրենց անմիջական տեղամասում, արժանի բաժին մտցնելու առաջիկա հաղթանակի մեջ:

Ռազմաճակատի մեր հատվածում, հաշվի առնելով դժվարին պայմանները, հրամանատարական կազմը քրտնաջան աշխատում էր, որպեսզի մաքսիմալ կերպով օգտագործվեն բոլոր հնարավորությունները՝ արագացնելու համար հիտլերականների ջախջախումը լեռնանցքներում: Տեղի բնական դիրքը ստիպում էր մեզ փնտրել լեռնանցքները գրոհելու առավել ձեռնառու ելքեր:

Թշնամու ստորաբաժանումները ջախջախելու և լեռնանցքներն ազատազրելու դժվարությունները մեր տեղամասում ամենից առաջ պայմանավորվում էին մեր մարտական կարգերի շրջանի բնական աննպաստ դիրքերով, որոնք սահմանափակում էին սեփական ուժերի ծավալման հնարավորությունները: Այնուամենայնիվ հետախուզելով և ուսումնասիրելով հակառակորդի դիրքերը՝ հնարավոր էինք համարում գրոհել թշնամու ստորաբաժանումները մի քանի տեղերից:

Ընկեր Պիյաշևը իրավացիորեն չորոշեց հարձակում սկսել միայն Մեծ Լարա գետի հոսանքի ուղղությամբ, ինչպես առաջարկում էին ոմանք, որովհետև այդ դեպքում ստիպված պետք է լինեինք ուժերի փոխադրումներ կատարել որոշ տեղամասերից, թուլացնելով սեփական դիրքերը անհամեմատ բնական առավել դիրքեր ունեցող հակառակորդի մարտակարգերի դիմաց, իսկ ժամանակը և արագ փոխադրումներ կատարելու հնարավորության բացակայությունը չէին ներում, թեպետև մի քանի օրով, ձգձգել մարտական խնդրի կատարումը: Բացի դրանից, այլ հանդամանքներ էլ տվյալ դեպքում սահմանափակում էին հաջողության շանսերը:

Մնում էր Սանչարո և Աջափշ լեռնանցքները անմիջականորեն գրոհելու համար այլ ելքեր օգտագործել:

Զորամասի ստորաբաժանումները եռանդուն կերպով նախապատրաստվում էին նոր գրոհների: Մեր ինքնաթիռները օրական մի քանի անգամ թռիչքներ էին կատարում հիտլերականների դիրքերի և թիկունքի վրա և ուժերը նետում:

Սեպտեմբերի 30-ին հրամանատարական հետախուզությամբ սահմանվեց, որ գերմանացիները Սանչարո լեռնանցքի

իրենց դիրքերի թիկունքից որոշ ուժեր են փոխադրում Աջափշ լեռնանցքը, իսկ մեր ձախ հարևանը տեղեկացրեց, որ հյուսիսից բեռնատար քարավան է մտնել նույն լեռնանցքին, ըստ երև- վույթին, ուղղված թերթների զգալի պաշարով: Չնայած դրան, ընկեր Պիյաշևը հրամայեց որոշ ստորաբաժանումներով գրո- հել Աջափշ լեռնանցքը արևելյան կողմից և համագործակցելով հարավից լեռնաշղթայի երկայնությամբ գործող հետևակային դպրոցի ստորաբաժանումների հետ, տիրանալ լեռնանցքին: Ան- հրաժեշտ էր ստիպել, որ գերմանացիները իրենց այդ տեղամա- սի ուժերի ամբողջ ուշադրությունը կենտրոնացնեն Աջափշ լեռնանցքի վրա:

Միաժամանակ մենք նախապատրաստվում էինք այնուհետև վճռական գրոհ սկսել հիտլերականների դիրքերի վրա Սանչարո լեռնանցքում: Այդ նպատակով ես հայտնել էի ընկեր Կուզ- նեցովին, որը դրանից մի քանի օր առաջ արդեն վերադարձել էր մեր մյուս զորամասերի մարտակարգերի շրջանը, Անշխայից Սանչարո ուղարկել մեր ստորաբաժանումներից մի քանիսը: Մի քանի օր հետո այդ ստորաբաժանումները լեյտենանտ Եզոբովի և քաղղեկ Սիմոնյանի հրամանատարությամբ հասան մեր մար- տակարգերի շրջանը և սպասում էին հրամանի:

Հոկտեմբերի 1-ի երեկոյան սկսվեց հարձակումը: Առաջի- նը խնդիր ստացավ մի դասակ: Նա պետք է գիշերը բարձրանար Աջափշ և Սանչարո լեռնաշղթաների միացման տեղում անկյուն կազմող բարձունքների լանջով և իր վրա բևեռեր հակառակորդի ուշադրությունը: Մի քանի դասակներ խնդիր ստացան գիշերով բարձրանալ լեռնաշղթան արևելքից, գրոհել թշնամուն լեռնանց- քից հյուսիս-արևելք, այնուհետև, համագործակցելով հետևակա- յին դպրոցի ստորաբաժանումների հետ, տիրանալ լեռնանցքին և շարունակել հարձակումը դեպի արևելք՝ լեռան պարանոցով:

Բայց լուսադեմին, կրակային իրարանցման ժամանակ, Չո- կատի հետ հեռախոսային կապը կտրվեց: Մյուս ստորաբաժա- նումները չհասցնելով դուրս գալ պարանոցը, նրա ստորոտում քողարկվել էին կաշկառատների մեջ: Քաղղեկ Կվիչիան մեկնել էր Չոկատի տեղը պարզելու համար: Հաջորդ օրը նա դեկուցեց:

«Առաջին վաշտից առանձնացված մարտիկների խումբը չգտա: Ենթադրություն կա, որ նրանք գտնվում են թշնամու

կրակային կետերից ոչ հեռու և հնարավորութեամբ չունենալով ազատ  
գործելու: Իմ կողմից, փնտրելու նպատակով ուղարկված խմբա-  
կը՝ վաշտի հրամանատարը և երեք կապավորները հենց նոր  
վերադարձան և զեկուցեցին, որ թշնամին հնարավորութեամբ չի  
տալիս առաջ շարժվել... Եթե որևէ հնարավորութեամբ լինի,  
ասլա ձեռք կառնեմ բոլոր միջոցները, որպեսզի սահմանիմ խում-  
բի գտնվելու տեղը»:

Երկու վաշտ նախապատրաստվել և սպասում էին գիշերը  
Աջափշը գրոհելու հրամանի:

Նրանց օգնելու համար մեկնեց նաև քաղաքի պետի կոմ-  
սոմոլի գծով օգնական Գոգազինը:

Գիշերը կրկնվեց հարձակումը: Հետախույզը դիտման կետը  
հասնելով զեկուցեց, որ դասակը ամրացել է լեռան պարանոցի  
լանջին և նախապատրաստվում է գրավել ու ամրանալ բարձուն-  
քում: Առավոտյան զեկուցագիր ստացա.

### «Ընկեր կոմիսար.

Զեկուցում եմ, որ գալով... հրամանատարական կետը, ինձ  
պարզ եղավ, որ 5,6 և 1 վաշտերը զարգացնում են հարձակումը  
և գիշերվա ժամը 2.00 բոպեին անցել են լեռնաշղթա տանող  
ճանապարհի կեսից ավելին: Տեղեկութեամբ չունենալով 5-րդ վաշ-  
տի մասին՝ ես չկարողացա դուրս գալ այնտեղ, քանի որ այն-  
տեղ են ուղարկված եղել երեք կապավորներ, որոնք մինչև հիմա  
չեն վերադարձել, իսկ դուրս են եկել ժամը 23.00 բոպեին: Մենք  
ուղարկեցինք էլի երկու միջին հրամանատարներ, նույնպես չեն  
եկել: Առավոտյան պարզվեց, որ 6-րդ վաշտը հասնելով լեռնա-  
շղթային, որ մնացել էր միայն 150—200 մետր մինչև վերջնա-  
կան նպատակակետը, թշնամու ուժեղ կրակի տակ... ետ է քաշ-  
վել... 5-րդ վաշտը չի կարողացել դուրս գալ նշված բնագիծը  
և նրա մասին մինչ այժմ ոչ մի տեղեկութեամբ չունենմ, թե որ-  
տեղ է գտնվում: Գումարտակի հրամանատարը դնացել է փնտրե-  
լու նրանց և ինքը նրանց հետ կբարձրանա գագաթը... Քիչ առաջ  
խոսակցութեամբ չունենեցա վաշտերի հրամանատարների և քաղաքի  
ների հետ և հրամայեցի սկսել հարձակումը լեռնաշղթայի վրա:

Կազմում ենք խիղախնեքի ջոկատ, մորիլացնում ենք կոմերի-  
աականներին և կոմունիստներին: Շատ մեծ թեքություն է,  
կառչելու ոչ մի բան չկա: Սպասում եմ Ձեր ցուցումներին:  
4.10.42 թ. Դոգադին»:

Երկու ժամ հետո Դոգադինը գեկուցում է.

«5-րդ վաշտը գտնվում է շավղից երրորդ լանջի վրա (ձա-  
խից, հենց անտառը վերջանալու տեղը): Գումարտակի հրամա-  
նատարը այնտեղ է գտնվում, իսկ նրա հետևից ուղարկել եմ,  
հիմա կգա: Ուղարկում եմ 5-րդ վաշտի հրամանատարի հաղոր-  
դագրությունը, նույնպես էլ 6-րդ վաշտինը կուղարկեմ ուշ: Կար-  
ծում եմ, մինչև կես ժամ վաշտերը կսկսեն հարձակուժը... Խա հի-  
մա պետք է ձեռք առնեմ բոլոր միջոցները, որպեսզի օպերա-  
ցիան վերջացնենք մինչև ժամը 15-ը:

4.10.42 թ.

Դոգադին»:

Ցերեկով հարձակուժը այդ պայմաններում ձեռնառու չէր:  
Այդ պատճառով էլ հետաձգեցինք, հրամայելով նախապատրաստ-  
վել գիշերվա հարձակման համար:

Չորս օր անընդհատ գիշերով մեր ստորաբաժանումները  
կրկնում էին գրոհները, բայց հակառակորդի ուժեղ դիմադրու-  
թյանը հանդիպելով ստիպված ետ քաշվում իրենց նախկին դիր-  
քերը: Վերջապես երեք տեղից գրոհելով լեռնաշղթան ժամը 5.00  
քոպեին նրանք ամրացան լեռնանցքի և դեպի հյուսիս-արևելք  
ընկած սեպաձև բարձունքի միջև ընկած պարանոցի վրա:

Դոգադինը գեկուցեց.

«Ընկեր կոմիսար.

Հրամանը կատարված է, լեռնաշղթան գրավված է, դրադ-  
ված ենք պաշտպանությամբ: Թշնամու կրակային կետերը ձախ  
թելից, որտեղ ամենաբարձր գագաթն է, կրակ են բաց արել դեպի  
մեզ: 5 և 6-րդ վաշտերը շրջապատված են եղել և մեծ մնասներ  
են կրել, ըստ ավագ լեյտենանտի ասածի: 6-րդ վաշտում սպան-  
վածներ ու վիրավորներ կան: Առաջին վաշտի մասին չգիտեմ,  
գիտե Նե... գումարտակի կոմիսարը: 6-րդ վաշտի հրամանատարը  
եկավ մեր գտնված տեղը: Սպասում ենք Ձեր ցուցումներին, եթե  
[անհրաժեշտ է] լինել հրամանատարական կետում, ես ինքս կլինեմ

մինչև ընդհարման վերջը, մինչև արյանս վերջին կաթիլը և վերջին շունչս, իսկ եթե հրամայեք վերադառնալ, տվեք ոսկետ:

5.10.42 թ.

Դոգադինո:

Շտապ ստուգեցինք գրությունը: Պարզվեց, որ Դոգադինը վերցրել էր մի ջոկատ և անձամբ գրոհի գնացել: Իրերի գրությունն այնպես էր դասավորվել, որ նա չէր կարող իմանալ իրագրությունը և չստուգված տեղեկությունների հիման վրա էր գեկուցագիր ներկայացրել: Իրականում վաշտերը գրոհելով անցել էին պարանոցը և հնարավորություն չունենալով թևից զարգացնել հարձակումը, ամրացել էին պարանոցի հակառակ լանջին, թևերից իրենց վրա վերցնելով հակառակորդի հարվածները: Հրամանի համաձայն վաշտերը գիշերով ետ քաշվեցին և պարանոցի վրա հարմար գիրքեր գրավեցին:

Աջափշ—Սանչարո ուղղությամբ տարածվելու միտքը հաջողությամբ չստանալից: Լեռնաշղթայի պարանոցին ամրացած ստորաբաժանումները պաշտպանության անցան: Այսպիսով ստորաբաժանումներն ամրացան ճակատի այդ մասում. ոչ մի հնարավորություն չկար նրանց օգնական ստորաբաժանումները փոխադրել մյուս տեղամասերը, որովհետև դա կվտանգեր լեռան պարանոցին կառչած ստորաբաժանումների գրությունը, իսկ հակառակորդը լրացնում էր իր ուժերը: Այնուամենայնիվ ակտիվ պաշտպանության անցնելով լեռնաշղթայի պարանոցին՝ մեր ստորաբաժանումները լարված վիճակում էին պահում հակառակորդին. վերջինս ստիպված էր առավել ուշադրություն նվիրել Աջափշ լեռնանցքին և լրացուցիչ ուժեր կենտրոնացնել:

Վերջապես հերթը հասավ Սանչարո լեռնանցքը գրոհելուն: Հրամանատար Պիյաշևը համաձայնեց լեռնանցքը գրոհել նրա արևմտյան պարանոցին տիրելուց հետո:

Զորամասի շտաբը լարված աշխատում էր: Անգնահատելի ծառայություն մատուցեց նրա պետ կապիտան Կուզնեցովը: Նա ամենայն մանրամասնությամբ և վարպետորեն մշակեց Սանչարոն գրավելու պլանը մինչև դասակների գործողությունները ներառյալ Կապիտան Կուզնեցովը առանձին խնամքով մշակեց վաշտերի ու դասակների փոխադարձ գործողությունները: Շտաբի յուրաքանչյուր սպա որոշակի բաժին մտցրեց նրա մեջ: Կապի-

տան Կուղնեցոյը կաղմեց նաև սխեմաներ վաշտերի հրամանա-  
տարների համար և հանձնեց նրանց: Պատրաստ էին նաև ստո-  
րաբաժանումների փոխդործողութեան ազդանշանները:

Հրամկազմը հավաքելու հնարավորութեան չկար, միայն  
ստորաբաժանումների հրամանատարներն ու քաղղեկները ներ-  
կայացան հրամանատարական կետը և հարձակման խնդիր ստա-  
ցան:

Որոշվեց դասակների հրամանատարներին ծանոթացնել հար-  
ձակման պլանի հետ տեղում, հենց մարտակարգերում:

Կյանքը ետում էր: Ավագ քաղղեկ Վարդանովը նախապատ-  
րաստում էր Եզորովի ստորաբաժանումը: Նա մի ամբողջ օր դա-  
սակից դասակ էր անցնում և բացատրում մարտական խնդիրը:  
Զորամասի շտաբի պետ կապիտան Կուղնեցոյը նախապատրաս-  
տում էր ստորաբաժանումների հրամանատարներին և կրտսեր  
հրամկազմին Իանիելյանի մոտ: Պարտկոծիտեի քարտուղար քաղ-  
ղեկ Բորովիկը աշխատում էր Սոխլովի ստորաբաժանումներում:  
Աշխատում էին բոլորը՝ շտաբի սպաները, քաղբաժնի աշխատող-  
ները: Նրանք ստուգում ու կարգի էին բերում անձնակազմի  
հանդերձանքից սկսած մինչև զինամթերքներով ապահովվածու-  
թյունը, բացատրում նրանց անելիքը և կովկասյան լեռնաշղթան  
ազատագրելու քաղաքական ու ռազմական նշանակութեանը:

Մի հանգամանք վճռական նշանակութեան ունեցավ առա-  
ջիկա ճակատամարտի համար. զորամասի զինկոմ, գումարտա-  
կային կոմիսար Իվանովը, հրամանատարական կետից հեռախո-  
սով կապվեց գիտման կետի հետ և հայտնեց, որ սպա Պի-  
յաշևը ռազմաճակատի հրամանատարից լուր է ստացել, որ ըն-  
կեր Ստալինը հետաքրքրվել է լեռնանցքների հարցով և ողջուն  
է հղել նրա համար մարտնչող մարտիկներին, հրամանատար-  
ներին և քաղաշխատողներին:

Իժվար է նկարագրել, թե ինչ կատարվեց: Կարծես ստորա-  
բաժանումներին լուրը ավելի շուտ հասած լիներ: Այնուամենայ-  
նիվ չառանձնացավ ոչ մեկը, որ կարելի լիներ ցույց տալ թե-  
կուզ, որ նա լուրը հասցրեց կարմիրբանակայիններին: Գուցե  
հեռախոսավարները լսել են ինդուկցիայով: Մի երևույթ էր մի-  
այն նկատելի. բոլորը՝ կարմիրբանակայինները, սերժանտնե-  
րը, հրամանատարները, քաղաշխատողները, — բոլորը միմյանց

Տրճվանքով հայտնում էին լուրը, ամենուրեք լսվում էր Մեծ Ստալինի անունը:

Չորամասը կարծես էլեկտրականացած էր: Հրամանատարական կետերում, շտաբում, թիկունքային ստորաբաժանումներում, վաշտերում, — ամեն տեղ Ստալինի անունն էր ամենուրեք լսվում: Հարձակման նախապատրաստվածը առավել եռուն ընթացք ստացավ: Գիտեր այդ մասին յուրաքանչյուր կարմիրբանակային, թեկուզ նա նստած էր իր դիրքում մի քարի հետև միայնակ, կամ թե իր բախտակցի հետ: Հրամանատարները նորից էին նախազգուշացնում ենթակա ստորաբաժաններին առաջիկա գործողութունների մասին, քաղաշխատողները դիրքից դիրք էին անցնում, համառոտակի բացատրում խնդրի կարևորութունը, հիշեցնում Ստալինի ցուցումները: Կրտսեր հրամանատարները նայում էին կարմիրբանակայիններին ոտից դուռիս, ստուգում զենքերը և արագ կերպով սողում իրենց դիրքերը, կոմունիստներն ու կոմերիտականները հիշեցնում էին իրենց մարտական ընկերներին մարտական փառքի մասին Ստալին և Հայրենիք բառերը շրթունքներին, փնտրում էին կարմիր կտավ և ամենից աչքի ընկնող մարտիկին տալիս, թե՛ «Դեհ, քեզ տեսնեմ, տեսնենք երբ է ծածանելու Սանչարոյի գլխին»: Իսկ ի՞նչ էին անում շարքայինները իրարից հեռու քարերի հետև նստած դիրքերում: Ավագ քաղղեկ Վարդանովը քարերի հետևից կուզեկուզ մոտեցավ Ստալինիկին:

Նա մենակ էր, ավտոմատը ձեռքին սլաքաբաժնի բռնած պառկել էր քարի հետևը և հայացքը հռոել թշնամու կողմը: Նա շուռու մուռ էր գալիս քարի հետևը, մեկ իրեն նայում, մեկ ավտոմատին, մեկ թշնամու կողմը... Ստալինիկը սրբանից հանեց մի հին շորի կտոր և այնպես ամուր էր քսում ավտոմատին, որ կարծես քերելիս լիներ:

— Ի՞նչ ես կարծում, Ստալինիկ, կարո՞ղ եմք ստիպել, որ վաղը Սանչարոն ժպտա, — հարցրեց Վարդանովը:

— Մի բան կանենք, ընկեր կոմիսար: Դե, Քրիցներն էլ ասում են, թե իրենց տեղը նեղ է, «կենսական տարածութուն» են ուզում: Ես ամեն մեկին երկու մետր տեղ կտամ:

Շատերը դիրքերում հանգիստ մնալ չէին կարողանում, կարծես թե արդեն հարձակման են անցել: Նրանք շրջահայաց

էին, իսկ պատկերացումներն մեջ հարձակումն արդեն սկսվել էր։  
Հարձակումը նշանակվեց ժամը 22.00 ընդհանրապես։ Անձնակազմը  
կազմ ու պատրաստ էր։ Սպասում էին սրտատրոփ։ Մարդիկ հա-  
յացքները հառած դեպի լեռնանցքը՝ անթարթ նայում էին, զըն-  
նում։ Սրյունը հոսում էր երակներում եռացող հեղուկի նման։

Ոմանք մտածում էին, թե քանի Ֆրից ու Հանս են հաշ-  
վելու իրենց անձնական հաշվում, ոմանք մտահոգված էին ան-  
նկատելի կերպով պարանոցը բարձրանալու ցանկությամբ և ան-  
գամ մտածում էին, թե ինչ կոչ են արձակելու գրոհի անցնելիս՝  
մարտիկներին առավել ոգևորելու համար։ Եվ այսպես ամենքը՝

Որպես վկայություն քաղաքական այդ բարձր տրամա-  
դրության և հաղթելու անսասան պատրաստակամության բերենք  
միայն մի քանի օրինակներ այն բազմաթիվ փաստերից, որոնք  
հաշվի են առնվել ստորաբաժանումների քաղաքական աշխատող-  
ների կողմից Սանչարո լեռնանցքը գրոհելու նախօրյակին։ Այդ  
վկայությունների մեջ պարզորոշ արտահայտվում են սովե-  
տական հայրենասերների անսահման նվիրվածությունը մեր մեծ  
գործին, ատելությունը դեպի թշնամին և այն ապրումները, որոնք  
կապված էին հրամանատարության առաջադրանքը պատվով կա-  
տարելու հետ։

Ահա այդ օրինակները.

«Իմ վաշտը դեռ չի կռվել, — ասում էր լեյտենանտ Զաբո-  
սինը, — վաղը պետք է մկրտություն ստանա։ Վաղը կլինենք  
լեռների գագաթներին, կդիտենք անձայրածիր տափաստանը,  
կնայենք դեպի մեր կողմը... Թախժոտ ժպիտ կերևա իմ դեմ-  
քին...»

«Ընկեր կոմբատ, ես իմ ջոկով առաջինը պիտի գրոհեմ գա-  
գաթը, այնպես չէ՞։ Ես պետք է ամբողջ հասակով մեկ կանգ-  
նեմ լեռան գագաթին ի սարսափ հիտլերականներին», — ասում  
էր սերժանտ Մխիթարյանը։

«Ես դիտեմ այդ լեռը, ես արդեն մեկ անգամ գրոհել եմ,  
իսկ այս կլինի երկրորդը և վերջինը։ Ես առաջինը կբարձրանամ  
Սանչարոյի ամենաբարձր գագաթը և սվինահար կանեմ նրանց,  
ովքեր կփորձեն արդելակել իմ հերոսական դասակի առաջխաղա-  
ցումը։ Այ, այս դրոշը կբարձրացնեմ լեռան գագաթին, զով քամին  
շոյելով կծածանի նրան, իսկ արևի վառ ճառագայթները ծիա-

ծանի գեղեցիկ պատկեր կկազմեն նրա շուրջը: Սանչարոն կը-  
փայտա՞, — այսպես էր ասում կրտսեր լեյտենանտ Չերնոբրովին,  
որ խնամքով ծախելով գրոշը դրեց իր ծոցում:

«Իմ վաշտը վաշտ հո չի, այլ դյուցադուներն էր ջակատ, ոչ  
ահ գիտի, ոչ տրտունջ: Բանի փամփուշտ ունենք, այնքան էլ  
Ֆրից ու հանս պիտի ընկնեն. այդպես չէ՞, ընկեր Երե-  
մյան, — դարձավ լեյտենանտ Նիկոլոսյանը քաղղեկին: — Մի-  
թե նրանք կծլկվեն մեր սվիններից... բայց մի բան կարող է  
խանդարել մեզ... Իրակները կկուտակվեն մեր առջև... Սրի էլի  
չբջանցում կատարի... Ոչինչ, թող կուտակվեն, մեր հողը չի  
հրաժարվի, ամեն մեկին երկու արշինանոց տեղ կտա... Չէ՞ որ  
նրանք հողի համար են եկել», — հեգնանքով վերջացրեց նա:

Կարմիրբանակային Գեորգի Սակվարելիձեն ծաղրանքով  
ասում էր.

«Սպա, Ֆրիցն ուղում էր լողանալ ծովում և ծառուղիներ-  
ում թեյ խմել վրացական լիժոնով... Բայց ինչ են անելու հիմա  
առանց լիժոնի, այդ հնց կլինի»:

Լեյտենանտ Չուբկոն այսպես էր պատասխանել Սակվա-  
րելիձեին.

«Մի անհանգստանա, բարեկամ, ես լիժոններ շատ ունեմ  
և անգամ ինքնայնու եմ բերել, տես», — և նա ցույց տվեց աղա-  
նանտի խողովակը և լիժոնաձև աղանները:

Այսպես էր ամենուրեք:

Ստորաբաժանումների անձնակազմի քաղաքական բարձր  
տրամադրության մասին են վկայում բազմաթիվ հիանալի մարդ-  
կանց՝ շարքայիների, սերժանտների և սպաների բարձր խան-  
դավառությամբ ցանկությունները՝ գրոհի նախօրյակին ընդուն-  
վել մեր փառապանձ պարաիայի շարքերը, գրոհի գնալ որպես  
կոմունիստներ: Նրանց անսահման նվիրվածությունը Հայրենի-  
քին, Լենինի — Ստալինի պարաիային իր բարերար արտահայ-  
տությունը գտավ նույնպես այն սրտաշարժ զգացմունքների  
մեջ, որ նրանք որոշեցին թողնել պատմությանն իրենց զգաց-  
մունքն արտահայտող փաստաթղթերում:

Սերժանտ Սերժուսը այսպես էր գրել իր դիմումի մեջ.

«Ցանկանում եմ գրոհի գնալ որպես կոմունիստ: Իսկ եթե  
պայանեն, խնդրում եմ հաշվել ինձ կոմունիստ»:

Սերժանտ Դոնցովը գրել էր.

«Մնորում եմ ընդունել ինձ Համկ(բ)Պ անդամության թեկնածու: Այս պահին, Հայրենական մեծ պատերազմի օրերին ուղում եմ գերմանական զավթիչների ոչնչացման կռիվում պատվով կրել մեծ առաջնորդներ Լենինի—Ստալինի պարտիայի անդամության թեկնածուի կոչումը»:

Կարմիրբանակային Գաբրիելիձեն գրել էր.

«Մնորում եմ ընդունել ինձ Համկ(բ)Պ-ի անդամության թեկնածու, որովհետև գրոհի գնալով ուղում եմ լինել կոմունիստ»:

Լեյտենանտ Նիկողոսյանի վաշտից դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Ռւլյանովը դիմում գրեց պարտիական կազմակերպությանը Համկ(բ)Պ շարքերն ընդունվելու համար և դեռ չհանձնած պարտկազմակերպչին կարգաց դասակի առջև և ավելացրեց, հետևելով լեգենդար Չապայևին՝ «Միայն առաջ, ոչ մի քայլ դեպի ետ: Եթե սպանեն, էլի գլխով նետվիր դեպի առաջ»:

Պարտիական կազմակերպությունները մեծ օպերատիվությամբ, ժամանակին քննում և վճռում էին նրանց հուզող հարցերը: Միայն քաղղեկ Բորովիկի գլխավորած պարտիական կազմակերպությունը Սանչարոյի ուղղությամբ մարտեր վարելու ընթացքում պարտիայի շարքերն էր ընդունել 113 անդամներ ու թեկնածուներ: Իրանք առաջավոր մարտիկներ էին, անսահմանորեն նվիրված մեր հայրենիքին և բոլշևիկներին պարտիային: Նրանք իրենց ամբողջ էությամբ մարտնչում էին ազատագրական-արդարացի պատերազմում չինայելով ոչ ուժ, ոչ կյանք:

Ավագ քաղղեկ Միխայլովը, որը պարտիական հանձնաժողովի քարտուղարի տեղակալն էր, հենց այնտեղ, հանձնաժողովի նիստերը գումարում էր գերազանցապես ստորաբաժանումներում և օպերատիվ կերպով քննում Համկ(բ)Պ շարքերն ընդունվելու վերաբերյալ պարտիական կազմակերպությունների որոշումները:

Հանձնաժողովի նիստերից անմիջապես հետո, ավագ սերժանտ Սուրեն Պոսրոնը, իր լուսանկարչական ապարատով, մեկնում էր ստորաբաժանները և հարմար տեղ ընտրելով ժայռերի հետևը, կամ բարձունքի դեպի մեր թիկունքն ըն-

կած լանջին, լուսանկարում էր պարտիայի շարքերն ընդունված-  
ներին: Այստեղ էլ ձևակերպվում էին նրանց պարտիական փաս-  
տաթղթերը և հանձնվում ընդունվածներին քաղբաժնի պետի  
կամ կոմիտարի կողմից:

Չկար ստորաբաժանումների կյանքին վերաբերող մի խըն-  
դիր, որի կողքից անցներ պարտիական կազմակերպությունը:  
Փամանակը պահանջում էր առավելապես բարձրացնել մարդկանց  
տոկունությունը, արհամարհանք դաստիարակել դեպի մահը, պող-  
պատի նման կռել կարգապահությունն ու կազմակերպվածու-  
թյունը գործառնելու: Ընկեր Ստալինի պահանջը՝ սահմանել  
մեր բանակում խստագույն կարգ և երկաթյա կարգապահու-  
թյուն, հանդիսանում էր պարտիական կազմակերպությունների,  
կոմունիստների ու կոմերիտականների գործունեության բովան-  
դակությունը:

Վեհության փառքով ու պատվով ծածկեցին իրենց կոմու-  
նիստներն ու կոմերիտականները, նրանք բարձր պահեցին բոլ-  
շևիկի իրենց կոչումը: Չկար թեկուզ մի փոքրիկ ստորաբաժանում,  
որտեղ կոմունիստները չլինեին առաջին շարքերում. հետախու-  
զության մեջ, թիկունքից թշնամու վրա կատարված հանկար-  
ծակի գրոհներում, կամ թե ճակատից ուժեղ կրակի դեմ, ամեն  
տեղ կոմունիստներն իրենց արժանի տեղն ունեին, խիզախու-  
թյան առաջին օրինակները նրանք էին տալիս:

Անձնագրահության և համառության օրինակ էր տա-  
լիս կոմունիստներին քաղբաժնի ավագ հրահանգիչ ավագ  
քաղղեկ Աբրահամ Մերգելի Վարդանովը: Նրան օտար էր  
սարսափը, իսկ մահը՝ արհամարհելի: Վարդանովը հմուտ քաղա-  
քական աշխատողի մեծ ընդունակություններ ցուցաբերեց. ամեն  
տեղ խանդավառ կրքոտությամբ էր հանդես գալիս և ուղղու-  
թյուն տալիս քաղաքական ապարտի ու պարտիական — կոմ-  
երիտական կազմակերպությունների աշխատանքին: Անդուլ աշ-  
խատանքով ու անձնական քաջությամբ Վարդանովը բոլշևիկ  
կոմիտարի տիպ էր հանդիսանում: Քաղաքական աշխատանքի  
մեջ նա հանդես էր գալիս այնպիսի կրքոտությամբ, ինչպես  
ուսու գինվորը սվինամարտի պահին, իսկ գրոհի ժամին ոչ մի  
ուժ նրան ետ չէր պահի, նա իսկական բոլշևիկ-գինվոր էր:

Բոլշևիկյան խոսքը դաստիարակում է չտեսնված վեհանձ-

նություն: Մարտակարգերու ճառեր չէին արտասանուի, ոչ ոք հանդիսավոր տեսք չէր տալիս իր խոսքին, ժամանակն ու պայմանները սուղ էին ընդարձակ ելույթների համար: Միայն կարճ ու հստակ գրույցները փոքրաթիվ մարդկանց հետ, հաճախ էլ անհատորեն, դառնում են բոլշևիկյան խոսքը մարտի դաշտում անձնակազմին հասցնելու հիմնական մեթոդը, այն էլ այնպիսի եղանակով, որպեսզի, ինչպես ասել է մեծանուն Նեկրասովը — խոսքերի համար նեղ լինի, իսկ մտքերի համար՝ լայնարձակ:

Իրենց բեղմնավոր աշխատանքով և մարտական սխրագործություններով կոմունիստները անձնակազմի մեջ դաստիարակում էին անսահման վստահություն գեպի մեր վերջնական հաղթանակը և մասսայական հերոսություն դարբնում:

Պատահական չէր, որ կոմունիստները բաց ճակատով անձնագոհության էին դիմում, կարծես նրանք դրա համար էլ ծնվել էին, իսկ մարտում ընկնողների վերջին ժպիտը սառչում էր նրանց շուրթերին: Իրա մեջ արապցովում էր բոլշևիկյան համոզվածության ուժը: Սովետական անվեհեր հայրենասերները հետևում էին նրանց օրինակին: Հաղթանակն ինքն իրեն չի եկել, նրանց արյունը, հորդառատ գետի նման, հաղթանակի հուն է բացել:

Մեծ առաջնորդներ Լենինի — Ստալինի անվեհերության օրինակը, բոլշևիկյան քաջադուն պարտիայի հաստատակամությունն ու անհաղթելիությունը, Ստալինի հանձարը և նրա քաջաբազան ու ռազմական չգերազանցված արվեստը դաստիարակել են կոմունիստների մեջ այն ամենը, ինչ անհրաժեշտ է հաղթանակի համար: Բոլշևիկյան տրադիցիաներով օժտված, մեր փառապանծ զինված ուժերի պարտիական կազմակերպչությունները առաջ էին տանում սովետական զինվորներին գեպի հաղթանակ, արհամարհելով մահը: Նրանց սրտերում վառվում էր Լենինի անհանգչելի պատգամը՝ արտասանված 1918 թ. նոյեմբեր 7-ին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի համար մղվող պայքարում ընկած մարտիկների հիշատակին նվիրված հուշարձանի բացման ժամանակ. «Երդում տանք մեզ դնալ նրանց հետքերով, նմանվել նրանց անվեհերությանը, նրանց հերոսությանը: Թող նրանց լողունգը դառնա մեր լողունգը. այդ լողունգն է՝ հաղթանակ, կամ մահ» (Լենին, հատոր 23, էջ 275):

Կոմերիտական Եզորովի ստորաբաժանումը շարժվեց մի  
ակնթարթում: Այստեղ էր Վարդանովը. նա Եզորովի և կոմիտար  
Միմոնյանի հետ միասին շարժվում էր ավանգարդում: Երբ մո-  
տեցան ժայռերին, նրանք կանգ առան և ցույց տալով ելքերը՝  
երեք ուղղությամբ բաժանեցին ստորաբաժանումները: Մարդիկ  
սողալով բարձրանում էին ժայռամիջյան քարքարոտ, դժվարին  
զառիվայրով: Ամեն ոք զգում էր, որ ամենափոքր անզգշությու-  
նը կարող էր մեծ անախորժությունների պատճառ դառնալ:  
Հուռ էին նրանք ու հուզված: Նրանք սողում էին լուռ, վստահ  
լինելով, որ առավոտյան, երբ ծագի արևը, կլինեն լեռնաշղթա-  
յի բարձր գագաթին, կազատագրեն իրենց փառքի բաժին ըն-  
կած Սանչարոն:

Թշնամին երբեմնակի ոակետներ էր նետում, լուռավորում  
ժայռոտ պարանոցի ելքերը. մերոնք կամ վայրկյանաբար պառ-  
կում էին անշարժ, կամ թե մեխվում տեղը կուչ գալով՝ իբր թե  
«քարեր են», էլի սողում՝ հենց որ շուրջը մութ էր: Հանդիպելով  
ժայռին, շոշափելով փնտրում էին հարմար ճեղքեր, կառչում  
հնարավոր հենարանի, երբեմն էլ մեկը մյուսի վրա բարձրա-  
նում, ելնում քարափի գլուխը և թևից բռնելով ներքևում մնա-  
ցածին՝ դուրս քաշում վեր:

Մեր աջ թևում դորամասի երկու ստորաբաժանումները մթու-  
թյան մեջ սողալով և պաշտպանություն դառնելով քարերի թի-  
կունքում՝ լռելյայն սլառկել էին հակառակորդի դիրքերին շատ  
մոտիկ, երբեմն 20—25 մետր հեռավորության վրա:

Շուրջը խավար էր: Ստորաբաժանումները բռնել են իրենց  
տեղերը, սպասում են ազդանշանին: Ժամը 3.00 ըոպեն էր:  
Վարդանովը կամացուկ դարձավ Եզորովին՝ «ժամանակն է»: Ազ-  
դանշանը տվեց լեյտենանտ Եզորովը ձախ թևում: Լավեց ուռ-  
սական ահազուռ ուռան, որ հաջորդաբար կրկնվում էր պարա-  
նոցի երկարությամբ, և դասակները առաջ անցան: Թոսում  
էին փողերը, պայթում նռնակները... Հրամայված էր՝ ադմուկ  
ստեղծել:

Հիտլեբականների կրակային կետերը պարանոցի հարավա-  
յին լանջին ոչնչացվեցին: Շատերը թողնելով ծանր տեսակի  
զենքերը և ուղմամթերքը՝ գլխիկոր փախուստի դիմեցին: Մե-  
րոնք հետապնդում էին նրանց:

Լուսատու գնդակները մի պահ նշմարելի են դարձնում գե-  
տինը, երբեմն նկատելի էր դառնում գրոհը տեղ-տեղ:

Իրարանցումն ուժեղացավ: Հակառակորդը բարձունքներից,  
քարերի հետևից և պարանոցի ողնաշարածև ընկած դիրքերից  
խաչածև մասսայական կրակի տակ առավ մեր ձախ թևը՝ լեյ-  
տենանտ Չարոսինի վաշտը:

Ծանր կլիներ Չարոսինի վաշտի վիճակը, եթե Նիկողոս-  
յանն իր վաշտով չօգտվեր թշնամու կրակի հիմնական մասի դե-  
պի ձախ թևն ուղղած լինելու հանգամանքից և մեծ արագու-  
թյամբ չհարձակվեր նրա դիրքերի վրա մասսայական կրակով  
ու նռնակներով:

— Կովկասի փառքի համար, առաջ, — լավեց քաղղեկ  
Երեմյանի հատու ձայնը:

Վաշտը առաջ սլացավ: Նա համարձակ գործողություններով  
խախտեց թշնամու կրակային սխտեմը, շփոթություն առաջ բե-  
րեց նրանց շարքերում և մեծ ջարդ տվեց:

Չարոսինի վաշտի դրուժյունը թեթևացավ: Երկու վաշտե-  
րը գրոհեցին լեռնաշղթայի գագաթները: Մի բարձունք գրավե-  
լիս սերժանտ Մխիթարյանը ծանր վիրավորվեց: Քաղղեկ Կրաս-  
նովը մի խուճբ մարտիկներով ամրացավ բարձունքի գագաթին  
և շեշտակի հարվածներով մաքրեց նրա լանջերը հիտլերական-  
ներից: Այնուհետև մի դասակ թողնելով բարձունքի վրա՝  
վաշտը առանց կանգ առնելու թևքվեց դեպի գլխավոր կետը՝  
Սանչարո: Այդ նույն ժամանակամիջոցում Նիկողոսյանի վաշտը  
մի բարձունք ևս գրավեց և երբ դարձավ դեպի Սանչարո, Երե-  
մյանը վիրավորվեց:

Կարմիրբանակայինները կապեցին նրա վերքը: Երեմյանը  
մնաց շարքում: Ցերեկով ծանր մարտեր տեղի ունեցան վերջին  
1215 բարձունքի համար, որը իշխում է շրջապատին: Դա Սան-  
չարո բարձունքն է, որի ստորոտում գտնվում է նույնանուն  
լեռնանցքը:

Այլ թեևում զորամասի ստորաբաժանումները գրոհի սկզբում  
մեծ ակտիվություն չէին ցուցաբերում, սահմանափակվել էին  
մոտիկ կրակային կետերի մասնակի գրոհումներով և կրակի տակ  
էին պահում լեռնանցքին կից երկու բարձունքները: Նրանք  
սպասում էին Եգորովի վաշտերի գրոհին: Միայն Դանիելյանի

ստորաբաժանման ձախ թևում կրտսեր լեյտենանտ Չերնոբրովովու դասակը որոշ հաջողություններ ունենալով ամբացել էր բարձունքի հարավ-արևմտյան լանջին և գազաթը բարձրանալու փորձ էր անում փոքրիկ խմբերով: Առաջին փորձը անհաջող անցավ, գազաթին մոտեցող յոթը հոգուց մեկը ընկավ թշնամու գնդակից, մյուսները չկարողացան ամրանալ հասած տեղում, ստիպված էտ քաշվեցին:

Հոկտեմբերի 13-ին և 14-ին հիտլերականները երկու անգամ հակազրոհի անցան: Նրանք գրոհեցին Սանչարո բարձունքից, լեռնաշղթայի հյուսիսային լանջերից և պարանոցից: Գազանաբար առաջ էին նետվում հիտլերականները՝ օդաազործելով մասսայական կրակային ուժը: Մարտն ավելի սաստկացավ:

Գերմանացիներին հաջողվեց ներխուժել մեր մարտակարգերի մեջ:

Չերնոբրովովու դասակի գրությունը խիստ ծանր էր: Նավինամարտի հրաման արձակեց: Նրա կոչին հետևեց Նիկողոսյանի վաշտը:

Գիտե՞ր արդյոք գրոհի անցած հիտլերականների ավտոմատավորների վաշտը, որ Նիկողոսյանը կթեքի իր ուղղությունը և սվինամարտի կնետվի, երբ իրենք կատաղի թափով նետվեցին Չերնոբրովովու դասակի վրա: Դժվար է կռահել:

Փոքրաթիվ դասակը ոտքի էր ելել բարձունքի քարքարոտ լանջին, ստորոտից ոչ հեռու, սկսվեց սվինամարտը մի ամբողջ վաշտի դեմ: Մեկը կատաղած հերթային կրակ է թափում ուղղակի դեմ առ դեմ, մյուսը խոցում է ու մի կողմ ցատկում, նորից խոցելու վայրկյան է փնտրում:

Շատապուժ է Ալբերտ Նիկողոսյանն իր ռոյալցադուենների ջակատով, թնդում է ուռան և իրար են խառնվում:

Ասում են, թե սվինամարտի պահին կնճռոտվում են մարդկանց դեմքերը, սրտերը բարախում են, աչքերը կարմրում—արյունով լցվում, իսկ ոտից դլուխ սարսուռ է անցնում:

Ես այդ չգիտեմ:

Շուրջն աղմկալից էր, ուժեղ մարտեր էին գնում: Ճակատամարտի այս փոքրիկ տեղամասում, լեռան պարանոցի բարձունքի փեշին, ահեղ սվինամարտ էր: Անչափ շարժուն ու շքր-ջահայաց է դառնում մարդ այդ բոպին. նա խոցում է, հրա-

ցանի կոթով հարվածում, մի կողմ ցատկում ու էլի խոցում: Չկար մեկը, որ տեղում մնար և այդ վիճակում սվինամարտ մղեր, կարծես բոլորն էլ խույս էին տալիս միմյանցից: Երբեմն այնպես էր պատահում, որ կարմիրբաճակայինն ընկնում էր ավտոմատի կրակից դեռ սվինը չհանած հիտլերականի մարմնից, իսկ ավտոմատավորն ընկնում էր մյուսի սվինից և ավտոմատը ձեռքից ընկնելով ինքնաբերաբար էլի մի քանի գնդակ էր արձակում:

Նիկողոսյանի վաշտի սվինամարտի անցնելը փրկեց Չերնոբրովու դասակին ծանր վիճակից: Նրանք միացյալ ուժերով սվինահար արեցին հիտլերական վաշտը: Ինքը Նիկողոսյանը հիանալի ճկունություն ու վճռականություն ցուցաբերեց սվինամարտում, ցույց տվեց «դյուցազունների պեսի» իր արժանի տեղը: Սվինամարտի դաշտում հիտլերականների վաշտը թողեց 56 դիակ. մի քանիսը փախցրին իրենց գլուխները:

Գրոհի բոլոր տեսակների մեջ դինվորի համար սվինամարտն ամենից ահուկին է: Դժվար է ասել, թե այստեղ նրանց ներվերն ավելի են լարվում. եթե այդ այդպես է, ապա նրանք այդ պահին կորցնում են իրենց զգացնել տալու ընդունակությունը: Ջգճում է արդյոք սվինամարտիկը, թե ինչ է կատարվում նրա ներքին աշխարհում: Կարծես նրանց մեջ ամեն ինչի փոխարինում է աչքերի, ձեռքերի և ոտքերի գործողությունը: Ես գիտեմ միայն, որ սվինամարտից հետո մարդիկ քրտնած են լինում և չեն շողում, անցնում են վայրկյաններ և նրանց գեմքին ահամա ժպիտ է երևում, իսկ աչքերի առջև միշտ սվինն է շարժվում... Հարցրեք նրանց, փորձված դինվորներին, նրանք ձեզ կպատմեն ամեն ինչ սովորականի նման, իսկ սվինամարտի մասին կասեն պարծանքով՝ «Ես սվինամարտ եմ գնացել»:

Երեք կողմից մեր ստորաբաժանումները գրոհեցին 1215 բարձունքը: Հարավ-արևելքից գործում էր Սոխլովի ստորաբաժանումը, հարավ-արևմուտքից՝ Դանիելյանի, իսկ հյուսիս-արևմուտքից՝ կոմերիտական Եզոբովի ստորաբաժանումը:

Դաժան մարտեր էին տեղի ունենում: Հակառակորդի ահանների պայթյունների և գնդակների տեղացող կարկառի տակ մերոնք անընդհատ բարձրանում և գրոհում էին հիտլերականների դիրքերը, վերջին բարձունքի վրա: Ամենքն էլ մտահոգված էին՝ որքան կարելի է շուտով տիրանալ բարձունքին: Շատերին

մի մեծ միտք էր դրադեցնում այդ ահեղ ժամին՝ առաջինը բարձրանալ դագաթը:

Արդեն մոտեցել էին լեռան դագաթին: Ծավալվում էր վերջին և վճռական գրոհը:

Նիկողոսյանը, Ջարոսինը և Չերնոբրովին տարբեր կողմերից առաջ նետվեցին: Նիկողոսյանը նունակով ոչնչացրեց մի քանի հիտլերական ու սվինամարտի անցավ... Նա դուրս էր եկել բարձունքի դագաթը հյուսիսային ծայրից... Նա ընկավ թշնամու գնդակից քաջի մահով: Վիրավոր երեմյանը շարունակում էր գրոհը:

Չերնոբրովին իր քաջերով ահեղ մարտեր էր վարում բարձունքի վրա: Նրանից ձախ նույնպիսի դաժան մարտերով ձգտում էր դագաթին Ջարոսինը: Դանիելյանի ստորաբաժանումը ձախ թևում ապահովելով դասակի անվեհեր հրամանատար Չերնոբրովու գրոհը, հիմնական ուժերով ջախջախում էր հիտլերականներին լանջում, իսկ Խոխլովս ու Սոկոլը թևանց կատարելով դուրս էին եկել լեռան հյուսիսային լանջը արևելքից, կտրել հիտլերականների թիկունքը և քաջարի հնձում էին փախչել ցանկացող հիտլերականներին: Այդ մարտում կարմիրբանակային Ստադնիկը մեծ քաջություն գրսևորեց:

Մայրամուտին բարձունքը մաքրվեց հիտլերականներից: Սանչարոն մեր ձեռքումն էր: Գագաթի ամենաբարձր կետում Չերնոբրովին բարձրացրեց կարմիր դրոշակը:

Մինչդեռ ստորաբաժանումները լեռնաշղթայի երկարությամբ ամրացնում էին իրենց դիրքերը, իսկ մյուս մասը մաքրում էր լեռնաշղթայի պարանոցը հիտլերականներից, հակառակորդի հատ ու կենտ ականներ էին պայթում բարձունքի վրա:

Արդեն մութ էր: Գումարտակների հրամանատարները կարգի էին բերում ստորաբաժանումները, ամփոփում էին մարտի արդյունքները, հաշվում կորուստները: Չերնոբրովին չկար դասակում:

Այգաբացին, երբ արևի ճառագայթները փարվեցին քամուց ծածանվող դրոշակին, նրա տակ, ժպիտը դեմքին սառած, հավիտենական քնով պառկել էր հերոսը՝ Չերնոբրովին:

Դա 1942 թ. մեծ հարձակման նախօրյակին էր:

Հոկտեմբերի 16-ին ձյան փաթիլները օրորվելով ցած իջան, ձյան հաստ շերտով ծածկվեց լեռնաշղթայի գագաթները: Իսկ հոկտեմբերի 18-ին բուք բարձրացավ:

Ստորաբաժանումների մի մասը քաշվել էր դեպի հարավ և տեղավորվել անտառի մեջ: Միայն որոշ ստորաբաժանումներ պաշտպանության դիրքեր բռնելով պոստեր էին նշանակել կարեւոր տեղերում լեռան գագաթներին, իսկ մյուսներին տեղավորել լեռան պարանոցի հարավային ստորոտներում ձյունից ու բուքից պաշտպանող փոքրիկ քարայրերում: Լեռների գագաթներում մարտական ծառայություն կրողներն ապահովված էին տաք հագուստով և բացի դրանից անտառ փոխադրված ստորաբաժանումները հոգում էին նրանց համար վառելիք և ուտեստ հասցնել:

Հեշտ չանցավ ձյունը մերոնց համար. փխրուն զանգվածը սեփական ծանրությանը չդիմանալով, մի քանի տեղ իր հաստ շերտով սողաց և տրորեց ոմանց: Մարդիկ ստիպված էին փորել ձյունը և փրկել մարտական ընկերներին: Այնուամենայնիվ երկու հոգի ձյան տակ մնացին՝ առհավետ բաժանվելով մարտական ընկերներից:

Հակառակորդը սեղմվել էր լեռնաշղթայի հյուսիսային ստորոտին: Նրա պլխին հասցրած հարվածին հաջորդեց լեռնային դաժան սառնամանիքն ու բուքը, որից հիտլերականները անչափ սարսափում էին:

Վերջապես հոկտեմբերի 22-ին հրաժան ստացվեց դիրքերը թողնել հարևան ստորաբաժանումների իրավասությանը և գործածաբար փոխադրել ծովափ:

Հոկտեմբերի 24-ին շարժվեցին ստորաբաժանումները: Զորամասը ձգված, խաղաղ իջնում էր լեռան շավղով, մեղ ծանոթ մարտական ուղիով, թեև անձրևներն ու ձյունը նեղում էին, նրանք հպարտ էին՝ վերադառնում էին փառքով:

Հոկտեմբերի 30-ին Գուգաուտին տոնական տեսք էր ընդունել: Տոնախմբության էին հավաքվել քաղաքի բնակիչները, քաղաքի կենտրոնական լայն փողոցը լեփ-լեցուն էր մարդկանցով: Կանայք ու աղջիկները փունջ-փունջ ծաղիկներ պրկած,

Իրենց վառ հայացքներով ու ցնծագին պսակավորում էին ժողո-  
վրդական հրճվանքը: Բոլորն էլ սպասում էին սրտատրոփ:

Մինչ այդ Մցարայում կոլխոպնիկները շրջապատել էին զո-  
րամասը և ուրախութեամբ խնդրում էին գեթ մի օր հյուր մնալ  
իրենց, իսկ Բակլանովիայում փողոց էին դուրս բերել կողոփե-  
րով լիքը մրգեր ու տակառներով լի գինի:

Վերջապես զորամասը մոտեցավ քաղաքին: Փողային օր-  
կեստրի նվազի ուղեկցութեամբ հաղթական մարշով զորամասն  
անցնում էր կենտրոնական փողոցով: Ամեն կողմից փնջերով  
ծաղիկներ էին հանձնում մարտիկներին, հրամանատարներին,  
քաղաշխատողներին և սփռում նրանց ճանապարհին:

Ամենուրեք շնորհակալական տաք խոսքեր էին ուղղում  
մարտիկներին, լողունդներով և ուռաներով ուղեկցում զորա-  
մասին:

Այո, դա տոն էր, մի մասնիկը առաջիկա մեծ հաղթանակի:  
Շարժվում էր զորամասը ծովափնյա գեղեցիկ ճանապարհով, իբր  
Հայրենիքի հզորութեան վեհ զգացմունքով: Այնտեղ, լեռների մյուս  
փեշերին, լայնածավալ գեղեցիկ կուրանում, սպասում էին  
նրանց: Եվ զորամասը շտապում էր:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

	Էջ
Ներածութեան փոխարեն . . . . .	5
Դեպի լեռնաշղթայի բարձունքները . . . . .	10
Մարտական մկրտութիւն . . . . .	22
Պսիսու գյուղի ազատագրումը . . . . .	29
Մարտակարգերից այն կողմը . . . . .	40
Դուրսագրութիւնները . . . . .	49
Բարձունք 1006 . . . . .	53
Սանջարո . . . . .	72



Յեթ. խմբագիր Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ


---


Հանձնված է արտադրության 13/Մ 1948 թ., ստորագրված է տպագրության  
30/Մ 1948 թ. ՎՖ 05186, պատվեր 410, հրատ. 564, տիրած 2000.

6 1/4 տպագր. մամուլ, մեկ մամուլում 36.480 տպագր. նիշ

---

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Արտվյան 104.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004794

ԳԻՂԸ 500.

11  
22865